Թողարկման 19-րդ տարի

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

2012

Հունիս

թիվ 6 (166)

Բովանդակություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ

ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԲ ԽՈՐՀՐԴԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԸ

4 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումները վերաֆինանսավորման տոկոսադրույքի, որոշ ՍՊԸ-ների տրամադրված արտարժույթի առուվաճառքի, ինչպես նաև «Մեգա Պանտերա» և «Կվադրակոմ» ՍՊԸ-ներին տրամադրված վճարային գործիքների և վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգ ու քլիրինգ և դրամական փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների լիցենզիաներն ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ

4 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումները «Մեգա Պանտերա» ՍՊԸ-ի 30 մասնաճյուղեր հաշվառումից հանելու, «ՊրոԿրեդիտբանկ» և «Առէկսիմբանկ - Գազպրոմբանկի խումբ» ՓԲԸ-ներին «ՄանիԳրամ» և «Բլիզկո», իսկ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ-ին «Գոլդեն Մանի Տրանսֆեր» արտասահմանյան վճարահաշվարկային համակարգերում մասնակցության թույլտվություն, «Լոմբարդիա» ՍՊԸ-ին գրավատան կազմակերպման լիցենզիա տրամադրելու վերաբերյալ

4 ՀՀ ԿԲ նախագահի որոշումները «Զարգացման հայկական բանկ», «Արարատբանկ» ԲԲԸ և «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ մասնաճյուղեր գրանցելու, ինչպես նաև 8 ՓԲԸ-ների, 11 ՍՊԸ-ների, 2 գրավատների նկատմամբ տուգանք կիրառելու և 7 արտարժույթի փոխանակման կետերի, 1 ՍՊԸ-ի նախազգուշացում հայտարարելու վերաբերյալ

5 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 147Ա որոշումը ֆինանսական շուկայում ՀՀ կենտրոնական բանկի գործառնությունների տոկոսադրույքների վերաբերյալ

5 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 68-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հուլիսի 10-ի թիվ 205-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»

9 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 133-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2010 թվականի հունիսի 29-ի թիվ 150-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»

18 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 134-Ն որոշումը «Համահայկական բանկի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 01/04-ը հաստատելու մասին»

46 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 135-Ն որոշումը «Պարտադիր կենսաթոշակային ֆոնդի մասնակիցների ռեեստրը վարողի կողմից երաշխիքային ֆոնդի կառավարչին հաշվետվությունների տրամադրման կարգը և պայմանները» կանոնակարգ 10/15-ը հաստատելու մասին»

50 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 144-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի փետրվարի 26-ի թիվ 50-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին»

135 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 145-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի մարտի 3-ի թիվ 93-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»

210 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 146-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի նոյեմբերի 16-ի թիվ 366-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»

251 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 157-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հուլիսի 1-ի թիվ 194-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին»

252 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 4 պաշտոնական պարզաբանումը «Արտադատական կարգով գրավի իրացման հետ կապված Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 251-րդ հոդվածի պահանջների պահպանման մասին»

253 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 5 պաշտոնական պարզաբանումը «Կարգավորվող շուկայինֆ թույլատրված կամ թույլատրման ենթակա պարտատոմսերի մասին»

255 ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐՁԱԲԱՆՈՒՄՆԵՐԸ

- ***Անփոփոխ է թողնվել*** վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ 8% (որոշում թիվ 148Ա):

- ***Ուժը կորցրած են ճանաչվել*** «Էդ-Սքայ» և «Վալետտա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններին տրամադրված արտարժույթի առուվաճառքի լիցենզիաները, ինչպես նաև «Մեգա Պանտերա», «Կվադրակոմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններին տրամադրված վճարային գործիքների և վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգ ու քլիրինգ և դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների լիցենզիաները (որոշումներ թիվ 153Ա, 161Ա, 162Ա, 155Ա, 156Ա):

- ***Հաշվառումից հանվել են*** «Մեգա Պանտերա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Շինարարներ», «Դավթաշեն 2», «Բագրատունյաց», «Սարկավագ 2», «Գայի», «Խուդյակով 2», «Կիևյան», «Տերյան», «Հանրապետություն», «Արարատ», «Արտաշատ», «Վեդի», «Մասիս», «Արմավիր», «Աշտարակ», «Ապարան», «Գորիս», «Սիսիան», «Սպիտակ», «Ալավերդի», «Եղեգնաձոր», «Աբովյան 2», «Նոր Հաճըն», «Հրազդան», «Գյումրի», «Արթիկ», «Մարալիկ», «Դիլիջան», «Իջևան», «Մարգարա» մասնաճյուղերը (որոշում թիվ 155Ա):

- ***«ՄանիԳրամ» և «Բլիզկո» արտասահմանյան վճարահաշվարկային համակարգերում մասնակցության թույլտվություն է տրամադրվել*** «ՊրոԿրեդիտ բանկ» և «Առէկսիմբանկ-Գազպրոմբանկի խումբ» փակ բաժնետիրական ընկերություններին (որոշումներ թիվ 158Ա, 159Ա):

- ***«Գոլդեն Մանի Տրանսֆեր» արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում մասնակցության թույլտվություն է տրամադրվել*** «Հայէկոնոմբանկ» բաց բաժնետիրական ընկերությանը (որոշում թիվ 160Ա):

- ***Գրավատան կազմակերպման լիցենզիա է տրամադրվել*** «Լոմբարդիա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (որոշում թիվ 164Ա):

- ***Գրանցվել են*** «Զարգացման հայկական բանկ», «Արարատբանկ» ԲԲԸ և «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ համապատասխանաբար՝ «էրեբունի», «Շիրակ» և «Քանաքեռ» մասնաճյուղերը (որոշումներ թիվ 1/560Ա, 1/620Ա, 1/621Ա):

- Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները խախտելու համար 8 փակ բաժնետիրական, 11 սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների և 2 գրավատների նկատմամբ ***կիրառվել է տուգանք***՝ 6125000 դրամ գումարի չափով (որոշումներ թիվ 1/589Ա, 1/582Ա, 1/584Ա-1/586Ա, 1/610Ա, 1/613Ա, 1/614Ա, 1/590Ա, 1/549Ա, 1/581Ա, 1/583Ա, 1/589Ա, 1/590Ա, 1/618Ա, 1/629Ա, 1/631Ա, 1/632Ա, 1/634Ա, 1/611Ա, 1/628Ա) և 7 արտարժույթի փոխանակման կետերի, 1 սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ***հայտարարվել է նախազգուշացում***՝ հետագայում նման խախտումները բացառելու հանձնարարականով (որոշումներ թիվ 1/545Ա, 1/563Ա-1/567Ա, 1/574Ա, 1/633Ա):

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «գ» ենթակետով՝ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի թիվ 147Ա որոշմամբ 2012 թ. հունիսի 6-ից ***ՀՀ կենտրոնական բանկի վերաֆինանսավորման տոկոսադրույքը սահմանվել է 8%, ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրամադրվող լոմբարդային ռեպոների տոկոսադրույքը՝ 10.5%, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից բանկերից ներգրավվող միջոցների տոկոսադրույքը՝ 5.5%:***

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հուլիսի 10-ի թիվ 205-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին**

Նպատակ ունենալով բանկերի ֆինանսական հաշվետվությունների ձևերը ու դրանց լրացման հրահանգը համապատասխանեցնել ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների պահանջներին և միջազգային ընդունված չափանիշներին,

հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 55-րդ և 59-րդ հոդվածները, «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածը և 70-րդ հոդվածի 1-ին մասը, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հուլիսի 10-ի ««Բանկերի հրապարակվող ֆինանսական հաշվետվությունների օրինակելի ձևերը» և «Բանկերի հրապարակվող ֆինանսական հաշվետվությունների օրինակելի ձևերի լրացման ցուցումները» հաստատելու մասին» թիվ 205-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ՝ համաձայն սույն որոշման Հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
20 մարտի 2012 թ., N 68-Ն

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2012 թ. մարտի 20-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 15.06.2012 թ. (ՀՀՊՏ N17 (430), 2.07.2012):

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2012 թվականի մարտի 20-ի թիվ 68-Ն որոշմամբ
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահ
_____ Արթուր Ջավադյան
20 մարտի 2012 թ.

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի մարտի 29-ի թիվ 292-Ն հրամանով
Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարար
_____ Վաչե Գաբրիելյան
29 մարտի 2012 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 10-Ի ԹԻՎ 205-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. ««Բանկերի հրապարակվող ֆինանսական հաշվետվությունների օրինակելի ձևերը» և «Բանկերի հրապարակվող ֆինանսական հաշվետվությունների օրինակելի ձևերի լրացման ցուցումները» հաստատելու մասին» թիվ 205-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) հավելված 6.1-ի «Միջանկյալ հաշվետվություն ֆինանսական արդյունքների մասին» Չև թիվ 6ա-ն և հավելված 6.2-ի «Միջանկյալ հաշվետվություն այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին» Չև թիվ 6բ-ն շարադրել նոր խմբագրությամբ՝ համապատասխանաբար համաձայն սույն հավելվածի հավելված 1-ի և հավելված 2-ի:

2. Որոշման հավելված 10-ի 4.3-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:

3. Որոշման հավելված 10-ի 5.3-րդ կետից հանել ««Հաշվապահական հաշվառման հաշվային պլանի հաշիվներ» սյունակում բոլոր այն հաշիվները, որոնք հաշվեկշռում արտացոլվում են բացասական նշանով, վերցվում են բացարձակ մեծությամբ:» նախադասությունը և աղյուսակը:

Հավելված 1
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2012 թվականի մարտի 20-ի թիվ 68-Ն որոշմամբ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի
2012 թվականի մարտի 29-ի թիվ 292 -Ն հրամանով

Հավելված 6.1

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ֆինանսական արդյունքների մասին (ձև թիվ 6 ա)

«__»_____ 201_ թ.

_____

(բանկի անվանումը և գտնվելու վայրը)

(հազար դրամ)

Անվանումը	Ընթացիկ միջանկյալ ժամանակա-շրջան	Հաշվետու ժամանակա-շրջան	Նախորդող ֆինանսական տարվա համադրելի ընթացիկ միջանկյալ ժամանակաշրջան	Նախորդ ժամանակա-շրջան
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ				
Տոկոսային և նմանատիպ ծախսեր				
Զուտ տոկոսային և նմանատիպ եկամուտ				
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ				
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր				
Ստացված զուտ կոմիսիոն և այլ վճարներ				
Եկամուտ շահաբաժիններից				
Զուտ եկամուտ առևտրային գործառնություններից				
Այլ գործառնական եկամուտներ				
Գործառնական եկամուտներ				
Զուտ մասհանումներ ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին				
Ընդհանուր վարչական ծախսեր				
Այլ գործառնական ծախսեր				
Վերահսկվող միավորներում ներդրումներից զուտ շահույթ/վնաս				
Շահույթը/(վնասը) մինչև հարկումը				
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)				
ժամանակաշրջանի շահույթ				
Այդ թվում՝				
Մայր կազմակերպության բաժնեմաս				
Չվերահսկվող բաժնեմաս				

Հաշվետվության վավերացման ամսաթիվը _____

Կ. Տ.

(գործադիր տնօրեն) _____

Հավելված 2
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2012 թվականի մարտի 20-ի թիվ 68-Ն որոշմամբ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի
2012 թվականի մարտի 29-ի թիվ 292 -Ն հրամանով

Հավելված 6.2

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին (ձև թիվ 6 բ)

«__»_____ 201_ թ.

_____

(բանկի անվանումը և գտնվելու վայրը)

(հազար դրամ)

Անվանումը	Ընթացիկ միջանկյալ ժամանակա-շրջան	Հաշվետու ժամանակա-շրջան	Նախորդող ֆինանսական տարվա համադրելի ընթացիկ միջանկյալ ժամանակաշրջան	Նախորդ ժամանակա-շրջան
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք				
Փոխարժեքային տարբերություններ արտերկրյա գործառնությունների վերահաշվարկից				
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատումներ				
Դրամական հոսքերի հեջավորում				
Ոչ ընթացիկ ակտիվների վերագնահատումներից օգուտներ				
Այլ համապարփակ եկամտի գծով շահութահարկ				
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք հարկումից հետո				
Համապարփակ ֆինանսական արդյունք				
Այդ թվում՝				
Մայր կազմակերպության բաժնեմաս				
Չվերահսկվող բաժնեմաս				

Հաշվետվության վավերացման ամսաթիվը _____

Կ. Տ.

(գործադիր տնօրեն) _____

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2010 թվականի հունիսի 29-ի թիվ 150-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին**

Նպատակ ունենալով սահմանել «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» իրավաբանական անձանց միության վերաբերյալ վերահսկողական, վերլուծական և վիճակագրական նպատակներով օգտագործվող տեղեկատվության առավել կիրառելի կազմը,

հիմք ընդունելով «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասը և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ մասով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2010 թվականի հունիսի 29-ի ««Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» իրավաբանական անձանց միության կողմից Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունների ձևերը, բովանդակությունը, ներկայացման կարգն ու ժամկետները» թիվ 150-Ն որոշմամբ հաստատված ««Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» իրավաբանական անձանց միության կողմից Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունների ձևերը, բովանդակությունը, ներկայացման կարգն ու ժամկետները» Հավելվածը նոր խմբագրությամբ՝ համաձայն Հավելվածի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: Սույն որոշմամբ սահմանված պահանջները տարածվում են 2012 թվականի երկրորդ եռամսյակի և դրան հաջորդող եռամսյակների համար ներկայացվող հաշվետվությունների վրա:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
18 մայիսի 2012 թ., N 133-Ն

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2012 թ. մայիսի 15-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 5.06.2012 թ. (ՀՀԳՏ N16 (429)[1], 15.06.2012):

Հավելված
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2012 թվականի մայիսի 15-ի թիվ 133-Ն որոշմամբ

Հավելված
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2010 թվականի հունիսի 29-ի թիվ 150-Ն որոշման

««ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎՏՈԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆԵՐԻ ԲՅՈՒՐՈ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԵՐԸ, ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ, ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ»

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն հավելվածով սահմանվում է «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» իրավաբանական անձանց միության (այսուհետ՝ Բյուրոյի) կողմից Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) ներկայացվող հաշվետվությունների ձևերը, բովանդակությունը, ներկայացման կարգն ու ժամկետները:

2. Սույն հավելվածում օգտագործվող հասկացություններն օգտագործվում են «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված իմաստով:

ԳԼՈՒԽ 2. ԲՅՈՒՐՈՅԻ ԿՈՂՄԻՑ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3. Բյուրոն Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ հաշվետվությունները.

1) սույն Հավելվածի 4-րդ կետի աղյուսակով սահմանված ոչ ֆինանսական հաշվետվություններ,

2) Բյուրոյի վերաբերյալ ամսական և տարեկան հետևյալ ֆինանսական հաշվետվությունները՝ «Հաշվապահական հաշվեկշիռը», «Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը», «Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը», «Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները»՝ կազմված համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների: Տարեկան ֆինանսական հաշվետվությունները ներկայացվում են աուդիտորական եզրակացության հետ միասին,

3) տեղում ստուգումների արդյունքների ամփոփման հիման վրա կազմվող ստուգման հաշվետվությունները և դրանց վերաբերյալ առարկությունների ու բացատրությունների պատճենները:


4. Ոչ ֆինանսական հաշվետվությունները Կենտրոնական բանկ են ներկայացվում սույն կետի աղյուսակում նշված ձևով և պարբերականությամբ.

	Հաշվետվության անվանումը	Հաշվետվության թիվը	Ներկայացման պարբերականությունը
1	*2*	*3*	*4*
1.	Հաշվետվություն Երաշխավորման ֆոնդի ակտիվների վերաբերյալ (համաձայն Հավելված 1-ի)	1	ամսական
2.	Հաշվետվություն Երաշխավորման ֆոնդի մուտքերի և ելքերի վերաբերյալ (համաձայն Հավելված 2-ի)	2	ամսական
3.	Հաշվետվություն հայտերի, հատուցումների(բժշկական փոխհատուցումների) և հետադարձ պահանջի իրավունքի գծով հայցերի վերաբերյալ (համաձայն Հավելված 3-ի)	3	ամսական
4.	Հաշվետվություն կտրոնների ձևաթղթերի վերաբերյալ (համաձայն Հավելված 4-ի)	4	եռամսյակային
5.	Հաշվետվություն Բյուրոյի միջոցների և ծախսերի վերաբերյալ (համաձայն Հավելված 5-ի)	5	եռամսյակային
6.	Հաշվետվություն Բյուրոյի կողմից հայտնաբերված խախտումների և կիրառված պատասխանատվության միջոցների վերաբերյալ (համաձայն Հավելված 6-ի)	6	եռամսյակային

5. Սույն Հավելվածով սահմանված ֆինանսական և ոչ ֆինանսական հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ անկախ աուդիտորական կազմակերպության եզրակացությունը Կենտրոնական բանկ են ներկայացվում էլեկտրոնային տարբերակով՝ Սի-Բի-էյ-նեթ հա-

մակարգով Կենտրոնական բանկի Վիճակագրության վարչություն: Հաշվետվությունները լրացվում են Կենտրոնական բանկի կողմից ուղարկված պաշտպանված ֆայլերում, որոնք փոփոխելն արգելվում է, ընդ որում՝ «Հաշվետվություն Բյուրոյի կողմից հայտնաբերված խախտումների և կիրառված պատասխանատվության միջոցների վերաբերյալ» թիվ 6 հաշվետվությունը ներկայացվում է ծածկագրված՝ Կենտրոնական բանկի Ֆինանսական վերահսկողության վարչության կողմից ուղարկված ծածկագրված ֆայլերով: Այդ համակարգի խափանման դեպքում հաշվետվությունները ներկայացվում են մագնիսական կրիչներով՝ կից ներկայացնելով էլեկտրոնային փոստի խափանման վերաբերյալ գրություն:

6. Սույն Հավելվածի 4-րդ կետի աղյուսակում նշված հաշվետվությունների անվանումները պետք է կոդավորվեն հետևյալ կառուցվածքով.



7. Ամսական և եռամսյակային ֆինանսական և ոչ ֆինանսական հաշվետվությունները ներկայացվում են հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվան հաջորդող 7 աշխատանքային օրվա ընթացքում: Տարեկան ֆինանսական հաշվետվությունները, անկախ աուդիտորական կազմակերպության եզրակացության հետ, Կենտրոնական բանկ են ներկայացվում մինչև տվյալ ֆինանսական տարվան հաջորդող տարվա մայիսի 1-ը: Ստուգման հաշվետվությունների և դրանց վերաբերյալ առարկությունների ու բացատրությունների պատճենները Կենտրոնական բանկ են ներկայացվում ստորագրված բնօրինակներն ապահովագրական ընկերություններից ստանալուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում:

8. Թիվ 4 հաշվետվությունում տեղաբաշխված կտրոնների մեջ ներառվում են նաև խոտանված, ոչնչացված և դադարեցված պայմանագրերի գծով հետ ստացված կտրոնների ձևաթղթերը:

9. Թիվ 6 հաշվետվությունում լրացվում է տեղեկատվություն Բյուրոյին անդամակցող ապահովագրական ընկերությունների կողմից «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերի և/կամ Բյուրոյի կանոնների հետ կապված Բյուրոյի կողմից արձանագրված կամ բացահայտված խախտումների, այդ խախտումների համար Բյուրոյի կողմից կիրառված պատասխանատվության միջոցների վերաբերյալ, մասնավորապես՝

1) Բյուրոյի կողմից արձանագրված այն խախտումների դեպքում, որոնց համար հաշվետու եռամսյակի ընթացքում է Բյուրոյի կողմից կիրառվել կարգապահական տույժ և/կամ որոշում է ընդունվել խախտման համար կարգապահական տույժ չկիրառել՝ վարույթը կարճել, թիվ 6 հաշվետվությունը լրացվում է ամբողջությամբ,

2) Բյուրոյի կողմից հաշվետու եռամսյակի ընթացքում հայտնաբերված այն խախտումների դեպքում, որոնց գծով Բյուրոն կարգապահական տույժ կիրառելու իրավասություն չունի, թիվ 6 հաշվետվության մեջ լրացվում են միայն 1-6-րդ սյունակները, ընդ որում՝ 6-րդ սյունակում լրացվում է «Բյուրոն իրավասու չէ»,

3) Բյուրոյի կողմից հաշվետու եռամսյակի ընթացքում հայտնաբերված այն խախտումների դեպքում, որոնց վերաբերյալ կարգապահական տույժ կիրառելու կամ չկիրառելու վերաբերյալ որոշում դեռևս չի կայացվել, թիվ 6 հաշվետվության մեջ լրացվում են միայն 1-5-րդ սյունակները,

4) Թիվ 6 հաշվետվության 10-րդ սյունակում ոչինչ չի լրացվում, եթե տրված հանձնարարականը կատարման ժամկետ չի պարունակում:

10. Սույն Հավելվածով սահմանված ժամկետներից հետո ներկայացվող ճշգրտված հաշվետվությունների հետ հաշվետվությունների փոփոխման (ճշգրտման) մասին Բյուրոն գրավոր տեղեկացնում է Կենտրոնական բանկի նախագահին:

11. Հաշվետվությունը համարվում է ներկայացված և ընդունված, եթե հաշվետվությունների էլեկտրոնային տարբերակները չունեն ծրագրային կամ այլ տեխնիկական թերություն: Թերությունների առկայության դեպքում Կենտրոնական բանկը տեղեկացնում է Բյուրոյին՝ բացառությամբ այն դեպքերի, եթե այդ տեղեկացումն ավտոմատ ուղարկում է Սի-Բի-էյ-նեթ համակարգը: Սույն հավելվածում նշվածից բացի այլ կերպ ներկայացված հաշվետվությունը համարվում է չներկայացված:

12. Անհրաժեշտության դեպքում Կենտրոնական բանկը կարող է պահանջել Բյուրոյից Կենտրոնական բանկի կողմից սահմանված ժամկետներում և ձևերով Կենտրոնական բանկ ներկայացնել լրացուցիչ այլ տեղեկություններ:

13. Հաշվետվություններում «x» նշանով վանդակները չեն լրացվում:

Հավելված 1
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2010 թվականի հունիսի 29-ի թիվ 150-Ն որոշմամբ հաստատված
Հավելվածի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՄԱՆ ՖՈՆԴԻ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (ԹԻՎ 1)

Աղյուսակ 1. Երաշխավորման ֆոնդի ակտիվների նկարագիրն ըստ տեսակների

		Հաշվեկշռային արժեքը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ	Միջին կշռված եկամտաբերություն (%)	Միջին կշռված ժամկետայնություն (օր) (անժամկետ ակտիվների ժամկետայնությունը ընդունել 0 օր)	Տեսակարար կշիռն ընդհանուր պայուսակում (%)
N	*1*	*2*	*3*	*4*	*5*
1	ՀՀ պետական արժեթղթեր, այդ թվում՝				
1.1	ՀՀ դրամ (հզ. դրամ)				
1.2	ԱՄՆ դոլար				
1.3	Եվրո				
1.4	Այլ				
2	ՀՀ ԿԲ արժեթղթեր				
2.1	ՀՀ դրամ (հզ. դրամ)				
2.2	ԱՄՆ դոլար				
2.3	Եվրո				
2.4	Այլ				
3	Հաշիվներ և ավանդներ ՀՀ ԿԲ-ում				
3.1	ՀՀ դրամ (հզ. դրամ)				
3.2	ԱՄՆ դոլար				
3.3	Եվրո				
3.4	Այլ				
4	Հաշիվներ և ավանդներ ՀՀ տարածքում գործող բանկերում				
4.1	ՀՀ դրամ (հզ. դրամ)				
4.2	ԱՄՆ դոլար				
4.3	Եվրո				
4.4	Այլ				
5	Հաշիվներ և ավանդներ բարձր վարկանիշ ունեցող օտարերկրյա բանկերում				
5.1	ՀՀ դրամ (հզ. դրամ)				
5.2	ԱՄՆ դոլար				
5.3	Եվրո				
5.4	Այլ				
6	Ոսկու ստանդարտացված ձուլակտորներ				
6.1	ՀՀ դրամ (հզ. դրամ)				
6.2	ԱՄՆ դոլար				
6.3	Եվրո				
6.4	Այլ				
7	Բարձր վարկանիշ ունեցող երկրների կառավարությունների արժեթղթեր				
7.1	ՀՀ դրամ (հզ. դրամ)				
7.2	ԱՄՆ դոլար				
7.3	Եվրո				
7.4	Այլ				
8	Բարձր վարկանիշ ունեցող երկրների կենտրոնական բանկերի արժեթղթեր				
8.1	ՀՀ դրամ (հզ. դրամ)				
8.2	ԱՄՆ դոլար				
8.3	Եվրո				
8.4	Այլ				
9	Բարձր վարկանիշ ունեցող առաջնակարգ կազմակերպությունների արժեթղթեր				
9.1	ՀՀ դրամ (հզ. դրամ)				
9.2	ԱՄՆ դոլար				
9.3	Եվրո				
9.4	Այլ				
10	Դեբիտորական պարտավորություններ				
10.1	ՀՀ դրամ (հզ. դրամ)				
10.2	ԱՄՆ դոլար				
10.3	Եվրո				
10.4	Այլ				
11	Այլ ֆինանսական ակտիվներ				
11.1	ՀՀ դրամ (հզ. դրամ)				
11.2	ԱՄՆ դոլար				
11.3	Եվրո				
11.4	Այլ				

Աղյուսակ 2. Ակտիվների նկարագիրն ըստ սուբյեկտների

	Հաստատության անվանումը	Հաստատության վարկանիշը (1-ից ավելի վարկանիշերի դեպքում նշել նվազագույնը)	Վարկանիշի տրման ամսաթիվը	Վարկանիշ տված կազմակերպության	Ծավալը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ (հզ. դրամ)	Տեսակարար կշիռն ընդհանուր պայուսակում (%)
1	*2*	*3*	*4*	*5*	*6*	*7*
1						
2						
3						
4						
5						
...						
Ընդամենը		X	x	x		100

Հավելված 2
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2010 թվականի հունիսի 29-ի թիվ 150-Ն որոշմամբ հաստատված
Հավելվածի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՄԱՆ ՖՈՆԴԻ ՄՈՒՏՔԵՐԻ ԵՎ ԵԼՔԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (ԹԻՎ 2)

Աղյուսակ 1. Երաշխավորման ֆոնդի միջոցների փաստացի շարժի վերաբերյալ

(հազար դրամ)

0	Երաշխավորման ֆոնդի միջոցները հաշվետու ժամանակաշրջանի սկզբում	
1	Ապահովագրական ընկերություններից հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում ստացված վճարներ, այդ թվում՝	
1.1	միանվագ վճարներ	
1.2	պարբերական վճարներ	
1.3	լրացուցիչ վճարներ	
2	Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Երաշխավորման ֆոնդի այլ մուտքեր, այդ թվում՝	
2.1	ֆոնդի միջոցների կառավարումից ստացված եկամուտներ	
2.2	ներգրավված վարկեր և փոխառություններ	
2.3	հետադարձ պահանջի իրավունքի կիրառումից մուտքեր	
2.4	կիրառած տույժեր և տուգանքներ	
2.5	այլ մուտքեր	
3	Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Երաշխավորման ֆոնդից ելքեր, այդ թվում՝	
3.1	տրված հատուցումներ	
3.2	ֆոնդի միջոցների կառավարումից ստացված վնասներ	
3.3	վարկերի և փոխառությունների մայր գումարի մարումներ	
3.4	վարկերի և փոխառությունների տոկոսների մարումներ	
3.5	բժշկական օգնության հետ կապված ծախսերի վճարումներ	
4	Երաշխավորման ֆոնդի միջոցները հաշվետու ժամանակաշրջանի վերջում (0+1+2-3)	

Հավելված 3
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2010 թվականի հունիսի 29-ի թիվ 150-Ն որոշմամբ հաստատված
Հավելվածի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՑԵՐԻ, ՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐԻ (ԲԺՇԿԱԿԱՆ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐԻ) ԵՎ ՀԵՏԱԴԱՐՁ ՊԱՀԱՆՋԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳԾՈՎ ՀԱՅՑԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (ԹԻՎ 3)

Աղյուսակ 1. Հաշվետու ժամանակաշրջանում հատուցման (բժշկական փոխհատուցումների) հայտերի քանակի վերաբերյալ

	Հաշվետու ժամանակաշրջանի սկզբի դրությամբ առկա չհարթավորված հայտեր	Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում ստացված հայտեր	Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում բավարարված հայտեր	Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում հայտատուի կողմից ժարված հայտեր	Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում մերժված հայտեր	Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում ապահովագրական ընկերությունների փոխհատուցվելիք հայտեր	Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ առկա չհարթավորված հայտեր
1	2	3	4	5	6	7	8
1. Միայն գույքային վնասների գծով							
2. Միայն անձնական վնասների գծով							
3. Գույքային և անձնական վնասների գծով							

Աղյուսակ 2. Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում հաշվեգրված հատուցումների (բժշկական փոխհատուցումների) վերաբերյալ

Հայտի համարը	Հատուցման մեծությունը գույքային վնասների գծով (հազար դրամ)	Հատուցման (բժշկական փոխհատուցման) մեծությունը անձնական վնասների գծով (հազար դրամ)
1	2	3
....		
Ընդամենը		

Աղյուսակ 3. Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում հաշվեգրված հատուցումների (բժշկական փոխհատուցումների) վերաբերյալ՝ ըստ վնասը պատճառող սուբյեկտների

	Հատուցման մեծությունը գույքային վնասների գծով (հազար դրամ)		Հատուցման (բժշկական փոխհատուցման) մեծությունը անձնական վնասների գծով (հազար դրամ)	
	քանակ	ծավալ (հազար դրամ)	քանակ	ծավալ (հազար դրամ)
1	2	3	4	5
1. Անհայտ ավտոտրանսպորտային միջոցի կամ դրա վերաբերյալ ԱՊՊԱ պայմանագիր կնքելու պարտականություն ունեցող անհայտ անձանց կողմից պատճառված վնասների համար				
2. ԱՊՊԱ պայմանագիր չունեցող անձանց կողմից պատճառված վնասների համար				
3. Հափշտակված կամ առանց հափշտակության նպատակի ապօրինաբար տիրացած ավտոտրանսպորտային միջոցի օգտագործմամբ պատճառված վնասների համար				
4. ԱՊՊԱ պայմանագիր կնքած անձանց (որոնց հետ ԱՊՊԱ կնքած ապահովագրական ընկերությունը ճանաչվել է անվճարունակ (սնանկ)) կողմից պատճառված վնասների համար				
Ընդամենը				

Աղյուսակ 4. Հաշվետու ժամանակաշրջանում հետադարձ պահանջի իրավունքի գծով հայցերի վերաբերյալ

	Հաշվետու ժամանակաշրջանի սկզբի դրությամբ առկա չկարգավորված հայցեր		Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում ներկայացված հայցեր		Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում բավարարված հայցեր		Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում մերժված հայցեր		Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ առկա չկարգավորված հայցեր	
	քանակ (հատ)	գումար (հզ. դրամ)	քանակ (հատ)	գումար (հզ. դրամ)	քանակ (հատ)	գումար (հզ. դրամ)	քանակ (հատ)	գումար (հզ. դրամ)	քանակ (հատ)	գումար (հզ. դրամ)
1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1. Միայն գույքային վնասների գծով										
2. Միայն անձնական վնասների գծով										
3. Գույքային և անձնական վնասների գծով										

Հավելված 4
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2010 թվականի հունիսի 29-ի թիվ 150-Ն որոշմամբ հաստատված
Հավելվածի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԿՏՐՈՆՆԵՐԻ ՉԵՎԱԹՂԹԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (ԹԻՎ 4)

Աղյուսակ 1. Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ կտրոնների ձևաթղթերի վերաբերյալ

Չտեղաբաշխված կտրոնների ձևաթղթեր (ներառյալ՝ վերադարձված չօգտագործված ձևաթղթեր)		Տեղաբաշխված կտրոնների ձևաթղթեր		Խոտանված (վնասված) կտրոնների ձևաթղթեր		Ոչնչացված կտրոնների ձևաթղթեր		Դադարեցված պայմանագրերի գծով հետ ստացված կտրոնների ձևաթղթեր	
1		2		3		4		5	
Կոդ (հաջորդական կոդերի դեպքում լրացվում է միջակայքը (օր.՝ AA0001-AA0055))	Քանակ	Կոդ	Քանակ	Կոդ	Քանակ	Կոդ	Քանակ	Կոդ	Քանակ

Աղյուսակ 2. Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ տեղաբաշխված կտրոնների ձևաթղթերի վերաբերյալ՝ ըստ ապահովագրական ընկերությունների

Ապահովագրական ընկերության անվանումը		Ապահովագրական ընկերության անվանումը		Ապահովագրական ընկերության անվանումը		Ապահովագրական ընկերության անվանումը		...	
1		2		3		4		5	
Կոդ (հաջորդական կոդերի դեպքում լրացվում է միջակայքը (օր.՝ AA0001-AA0055))	Քանակ	Կոդ	Քանակ	Կոդ	Քանակ	Կոդ	Քանակ	Կոդ	Քանակ

Հավելված 5
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2010 թվականի հունիսի 29-ի թիվ 150-Ն որոշմամբ հաստատված
Հավելվածի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԲՅՈՒՐՈՅԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (ԹԻՎ 5)

(հազար դրամ)

1	Բյուրոյի եկամուտներ, այդ թվում՝	
1.1	անդամավճարներ	
1.2	կտրոնների արժեքի փոխհատուցում	
1.3	կրկնակի փորձաքննությունից եկամուտներ	
1.4	փորձագիտական և դատական ծախսերի փոխհատուցումից եկամուտներ	
1.5	տոկոսային եկամուտներ	
1.6	այլ եկամուտներ	
2	Գործառնական ծախսեր, այդ թվում՝	
2.1	երաշխավորման ֆոնդի միջոցների հաշվին կատարվող հատուցումների վճարման հետ կապված ծախսեր	
2.2	ստացված վարկերի, փոխառությունների դիմաց հաշվեգրված տոկոսներ	
2.3	Բյուրոյին մատուցված խորհրդատվական կամ այլ ծառայությունների դիմաց վճարներ	
2.4	ԱՊՊԱ ոլորտում իրականացվող գործընթացների լուսաբանման հետ կապված ծախսեր, այդ թվում՝	
2.4.1.	գովազդ	
2.4.2.	սեմինարների կազմակերպում	
2.4.3.	ինտերնետ կայքի սպասարկում	
2.5	սուբրոգացիայի իրավունքի իրականացման հետ կապված ծախսեր	
2.6	բյուրոյի գործառույթների իրականացման հետ կապված այլ ծախսեր, այդ թվում՝	
2.6.1.	կտրոնների ձեռքբերման ծախսեր	
2.6.2.	վերահսկողության գործառույթի իրականացման հետ կապված ծախսեր	
2.6.3.	կրկնակի փորձաքննության հետ կապված ծախսեր	
2.7	այլ գործառնական ծախսեր	
3	Վարչական ծախսեր, այդ թվում՝	
3.1	աշխատակազմի պահպանման ծախսեր, այդ թվում՝	
3.1.1	աշխատավարձ	
3.1.2	պարգևատրում	
3.1.3	արձակուրդների և ոչ աշխատանքային օրերի համար վճարումներ	
3.1.4	սոցիալական ապահովության վճարներ	
3.1.5	աշխատակազմի ուսուցման և վերապատրաստման ծախսեր	
3.1.6	գործուղման և ներկայացուցչական ծախսեր	
3.2	ծառայողական նպատակներով օգտագործվող կապի միջոցների հետ կապված ծախսեր	
3.3	տնտեսական նյութերի և արագամաշ առարկաների դուրսգրման հետ կապված ծախսեր	
3.4	լրատվական տեղեկատվության և մասնագիտական գրականության ձեռքբերման ծախսեր	
3.5	շենքերի, շինությունների, այլ հիմնական միջոցների ու պաշարների պահպանման, սպասարկման, շահագործման ու ապահովագրման ծախսեր	
3.6	շենքերի, շինությունների, այլ հիմնական միջոցների մաշվածության գծով ծախսեր	
3.7	վարձակալության գծով ծախսեր	
3.8	տույժեր և տուգանքներ	
3.9	հարկերի գծով ծախսեր	
3.10	այլ վարչական ծախսեր	
4	Ընդամենը	

Հավելված 6
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2010 թվականի հունիսի 29-ի թիվ 150-Ն որոշմամբ հաստատված
Հավելվածի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԲՅՈՒՐՈՅԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԿԻՐԱՌՎԱԾ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (ԹԻՎ 6)

Ամսաթիվ _____

N	Խախտում թույլ տրած իրավաբանական անձի անվանումը	Խախտող ֆիզկապալառու	Խախտող ֆիզկապալառուի հիմքերը (խախտված ֆիզկապալառուի վերաբերյալ ներկայացված փաստաթղթերի համարը, ամսաթիվը)	Խախտող ֆիզկապալառուի հետ կնքված պայմանագրի (հանձնարարականի) համարը, ամսաթիվը (ըստ առկայության)	Խախտումը հայտնաբերելու ամսաթիվը, ամիսը, ամսաթիվը, ժամը, ֆիզկապալառուի կողմից խախտման ենթարկված պայմանագրի համարը	Խախտումն առանց հիմնական վիճակի վերականգնման դադարեցնելու պահանջի մասին նախազգուշացման ենթարկելու մասին տեղեկությունը	Վարույթի կարճելու հիմքերը	Կարգապահական տույժ կիրառելու վերաբերյալ որոշման կայացման ամսաթիվը, ամիսը, ամսաթիվը	Տրված հանձնարարականի վերաբերյալ տեղեկությունը	Հանձնարարականի կատարման ժամկետը
	1	2	3	4	5	6	7	8	9	10
1										
2										
3										
4										
5										
...										

_____
(Բյուրոյի գործադիր տնօրենի ստորագրությունը)

_____
(Վերահսկող ծառայության ղեկավարի ստորագրությունը)

*«Համահայկական բանկի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 01/04-ը հաստատելու մասին**

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Համահայկական բանկի գործունեության նկատմամբ վերահսկողության իրավունքը պատկանում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին,

նպատակ ունենալով արդյունավետ վերահսկողության համար Համահայկական բանկից ստանալ իր գործունեության վերաբերյալ պարբերական հաշվետվություններ,

հիմք ընդունելով «Համահայկական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածը, «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 55-րդ հոդվածը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Համահայկական բանկի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 01/04-ը՝ համաձայն սույն որոշման Հավելված 1-ի (կցվում է):
2. Հաստատել «Ն1, Ն2, Ն3[1], Ն3[2], Ն4[1], Ն4[2] և ընդհանուր կապիտալի նվազագույն չափի նորմատիվների վերաբերյալ» հաշվետվությունը՝ համաձայն Հավելված 2-ի (կցվում է):
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրվան հաջորդող ամսվա 1-ից:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
18 մայիսի 2012 թ., N 134-Ն

Հավելված 1

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2012 թվականի մայիսի 15-ի թիվ 134-Ն որոշմամբ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 01/04

ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Սույն կանոնակարգը սահմանում է Համահայկական բանկի կողմից Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) ներկայացվող հաշվետվությունների ձևերը, ներկայացման կարգն ու ժամկետները:

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2012 թ. մայիսի 15-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 5.06.2012 թ. (ՀՀԳՏ N16 (429)[1], 15.06.2012):

ԳԼՈՒԽ 2. ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Համահայկական բանկը Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ հաշվետվությունների ձևերը՝ ստորև նշված պարբերականությամբ.

Հաշվետվության անվանումը		Հաշվետվության համարը	Ներկայացման հաճախականությունը
1	*2*	*3*	*4*
1	Հաշվեկշիռ	1	ամսական, տարեկան
2	Հաշվետվություն Ն1, Ն2, Ն3[1], Ն3[2], Ն4[1], Ն4[2] և ընդհանուր կապիտալի նվազագույն չափի նորմատիվների վերաբերյալ	3	ամսական
3	Հաշվետվություն Համահայկական բանկի եկամուտների և ծախսերի վերաբերյալ	5	ամսական, տարեկան
4	Հաշվետվություն վարկային ներդրումների, դեբիտորական պարտքերի և ինվեստիցիոն արժեթղթերի վերաբերյալ	6	ամսական
5	Հաշվետվություն արտարժույթի տնօրինման նորմատիվի վերաբերյալ	7	շաբաթական
6	Հաշվետվություն ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետայնությունների վերաբերյալ	9	ամսական
7	Հաշվետվություն կանոնադրական կապիտալի ձևավորման վերաբերյալ	10	յուրաքանչյուր փոփոխության դեպքում
8	Հաշվետվություն նորմատիվային ընդհանուր կապիտալի փոփոխության վերաբերյալ	11	ամսական, եռամսյակային, տարեկան
9	Հաշվետվություն Ն3[1] և Ն3[2] նորմատիվների հաշվարկի մեջ ընդգրկվող ցուցանիշների հաշվարկի վերաբերյալ	14	ամսական
10	Հաշվետվություն «խոշոր» պարտատերերի վերաբերյալ	15	եռամսյակային
11	Հաշվետվություն արտասահմանյան և հայրենական բանկերի հետ «նոստրո» հաշիվների վերաբերյալ	16	եռամսյակային
12	Հաշվետվություն նախորդ ամսվա ընթացքում ներգրավված և տեղաբաշխված միջոցների միջին տոկոսադրույքների վերաբերյալ	17	ամսական
13	Հաշվետվություն Համահայկական բանկի և ոչ ռեզիդենտների միջև իրականացվող գործառնությունների վերաբերյալ	18	եռամսյակային
14	Հաշվետվություն արտարժույթի առք ու վաճառքի գործառնությունների վերաբերյալ	19	օրական
15	Հաշվետվություն արժեթղթերի թողարկման արդյունքների վերաբերյալ	21	յուրաքանչյուր թողարկման համար
16	Հաշվետվություն Համահայկական բանկի կողմից թողարկված արժեթղթերի և կատարված ներդրումների վերաբերյալ	22	տարեկան
17	Հաշվետվություն Համահայկական բանկի աշխատակազմի վերաբերյալ	25	կիսամյակային
18	Հաշվետվություն արժեթղթերի երկրորդային շուկայում իրականացված գործառնությունների և միջբանկային վարկերի վերաբերյալ	32	օրական

ԳԼՈՒԽ 3. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՐԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

2. Համահայկական բանկը սույն կանոնակարգի 0-ին կետով սահմանված հաշվետվությունները, ծանուցումները, կից տեղեկանքները ներկայացնում է բացառապես էլեկտրոնային փոստով՝ Սի-Բի-էյ-նեթ համակարգի միջոցով՝ Կենտրոնական բանկի կողմից տրամադրվող ֆայլերին համապատասխան (առկայության դեպքում): Սի-Բի-էյ-նեթ համակարգի խափանման դեպքում հաշվետվությունները ներկայացվում են էլեկտրոնային կրիչներով՝ կից ներկայացնելով խափանման վերաբերյալ գրություն: Հաշվետվությունները Կենտրոնական բանկ են ներկայացվում Կենտրոնական բանկի հաշվետվությունների ընդունման և ամփոփման համար պատասխանատու ստորաբաժանման կողմից Համահայկական բանկին ուղարկված պաշտպանված ֆայլերով («Մայքրոսոֆթ օֆիս 2007» կամ դրա կատարելագործված տարբերակով), որոնց փոփոխումն արգելվում է: Այլ կերպ ներկայացված հաշվետվությունը համարվում է չընդունված:

3. Հաշվետվություններում նշվում են հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա ամսաթվերը (օրինակ՝ շաբաթական հաշվետվություններում նշվում է կիրակի օրվա ամսաթիվը, իսկ ամսական, եռամսյակային, կիսամյակային և տարեկան հաշվետվություններում՝ ամսվա վերջին օրվա ամսաթիվը): Ընդ որում, հաշվետվությունները կազմելիս մեկ տարին պետք է հասկանալ 365 կամ 366 օր, այսինքն՝ օրացուցային օրերի քանակը (եթե կոնկրետ հաշվետվության մեկնաբանությունները հստակ չեն սահմանում տվյալ հաշվետվության իմաստով մեկ տարվա օրերի քանակը):


4. Հաշվետվությունները լրացնելիս ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների անունները, վերջիններիս վերաբերող այլ տեղեկատվությունը պետք է ներկայացնել առանց չակերտների, միայն հայերեն տառերով (տառատեսակ՝ Թայմզ Արմենիան): Բացառություն են կազմում բանկերի Տելեքս համարները, Սվիֆտ կոդերը և այլ կոդեր:

5. Ինվեստիցիոն արժեթղթերում ներդրումների հնարավոր կորուստների և վարկերի ու դեբիտորական պարտքերի (հետհաշվեկշռային պարտավորությունների) պահուստները սույն կանոնակարգով սահմանված հաշվետվություններում արտացոլվում են (իսկ հաշվետվություններում ներկայացվող տնտեսական նորմատիվների և չբաշխված շահույթի հաշվարկում ընդգրկվում են) բանկերի ինվեստիցիոն արժեթղթերում ներդրումների հնարավոր կորուստների պահուստի ձևավորման և օգտագործման, ինչպես նաև վարկերի ու դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման կարգը սահմանող Կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգերին համապատասխան հաշվարկված գումարների չափով:

6. Համահայկական բանկի կողմից Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները, ինչպես նաև տեղեկությունները պետք է լինեն արժանահավատ և ամբողջական՝ համաձայն ֆինանսական հաշվետվողականության հիմունքների (The Conceptual Framework for Financial Reporting):

7. Սույն կետով սահմանված պահանջներին համապատասխան՝ Կենտրոնական բանկի կողմից ընդունված հաշվետվությունները, ծանուցումները, կից տեղեկանքները հանդիսանում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածով սահմանված գրավոր ապացույցներ:

8. Հաշվետվությունները մագնիսական կրիչներով կամ էլեկտրոնային փոստով ներկայացնելիս ֆայլերը կոդավորվում են: Կոդավորման ձևի պահպանումը պարտադիր է: Կենտրոնական բանկ ներկայացվող ֆայլերը, բացի տվյալ օրը ներկայացվող հաշվետվության ձևերից, այլ տեղեկատվություն չպետք է պարունակեն: Ֆայլի կոդն ունի հետևյալ կառուցվածքը.



9. Սույն կանոնակարգի 0-րդ կետով սահմանված թիվ 1, 5, 6, 7, 9, 10, 11, 14, 15, 16, 17, 18, 19, 21, 22, 25 և 32 հաշվետվությունները լրացվում և Կենտրոնական բանկ են ներկայացվում՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի փետրվարի 26-ի թիվ 50-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 3-ով (այսուհետ՝ Կանոնակարգ 3) սահմանված ձևերին և լրացման կարգին համապատասխան:

10. Ձև թիվ 3 հաշվետվությունը (հավելվածը կցվում է) լրացվում է հետևյալ կերպ.

1) 1-ին էջում ներկայացվում և ամփոփվում են տնտեսական նորմատիվների հաշվարկին մասնակցող միջին ամսական ցուցանիշներն ու տնտեսական նորմատիվների փաստացի մեծությունները՝ հաշվարկված համաձայն Կենտրոնական բանկի խորհրդի 2012 թվականի մարտի 6-ի թիվ 65-ն որոշմամբ հաստատված «Համահայկական բանկի գործունեության կարգավորումը և տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 01/03-ի (այսուհետ՝ Կանոնակարգ 01/03): 1-ից 9-րդ սյունակներում, բացառությամբ 6-րդ սյունակի, ամփոփվում են համապատասխանաբար ընդհանուր կապիտալի, վարկային ռիսկի, արտարժութային ռիսկի, տոկոսադրույքի ռիսկի, կապիտալի գործիքների գնային ռիսկի, բարձր իրացվելի ակտիվների և պարտավորությունների նորմատիվային միջին ամսական մեծությունները, իսկ 6-րդ սյունակում՝ գործառնական ռիսկի նորմատիվային մեծությունը: 2-րդ սյունակի վարկային ռիսկի հաշվարկն իրականացվում է 3, 4, 5, 6, 7 էջերի համաձայն: 9-րդ և 11-րդ սյունակների տվյալները վերցվում են սույն կանոնակարգով սահմանված ձև թիվ 14 «Հաշվետվություն Ն3[1] և Ն3[2] նորմատիվների հաշվարկի մեջ ընդգրկվող ցուցանիշների հաշվարկի վերաբերյալ» հաշվետվությունից: Եթե Համահայկական բանկը թույլ չի տվել մեկ փոխառուի և Համահայկական բանկի հետ կապված մեկ անձի գծով ռիսկի առավելագույն չափի նորմատիվների խախտում, ապա 9-րդ և 10-րդ սյունակներում ներկայացվում են համապատասխանաբար մեկ փոխառուի և Համահայկական բանկի հետ կապված մեկ անձի գծով ռիսկի ամենամեծ գումարները: Եթե այդ նորմատիվները խախտվել են, ապա 9-րդ և 10-րդ սյունակների 1-ին տողում ցույց է տրվում ամենամեծ խախտումն առաջացնող գումարը, իսկ հաջորդ տողերում՝ խախտում առաջացրած բոլոր այլ գումարները՝ ըստ նվազման հաջորդականության: 11-րդ և 12-րդ սյունակներում համապատասխանաբար

լրացվում են խոշոր փոխառուների և Համահայկական բանկի հետ կապված բոլոր անձանց գծով ռիսկի առավելագույն գումարները: Համահայկական բանկը հաշվետվությանը կից ներկայացնում է տեղեկանք՝ խախտում առաջացրած բոլոր գումարների՝ տրամադրման պահի դրությամբ խախտման փաստի առկայության մասին:

2) 2-րդ էջում ներկայացվում են ընդհանուր կապիտալի ու նրա տարրերի հաշվեկշռային և նորմատիվային մեծությունները, ինչպես նաև նորմատիվային մեծությունների հաշվարկի համար անհրաժեշտ պակասեցումներն ու լրացումները՝ ըստ ամսվա բոլոր օրերի: Նորմատիվային լրացուցիչ կապիտալի հաշվարկում չընդգրկվող գումարներն այն գումարներն են, որոնք հաշվառվում են որպես կապիտալ (Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի նոյեմբերի 30-ի թիվ 322-Ն որոշմամբ և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2011 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 1032-Ն հրամանով համատեղ հաստատված ««Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդերի և ներդրումային ֆոնդերի կառավարիչների հաշվապահական հաշվառման հաշվային պլանը» և «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի, վարկային կազմակերպությունների և ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդերի և ներդրումային ֆոնդերի կառավարիչների հաշվապահական հաշվառման հաշվային պլանի կիրառման հրահանգը» հաստատելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» (այսուհետ՝ հաշվային պլան և հրահանգ)), սակայն համաձայն Կանոնակարգ 01/03-ի և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 9-ի թիվ 39-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ի (այսուհետ՝ Կանոնակարգ 2)՝ չեն ներառվում նորմատիվային լրացուցիչ կապիտալի հաշվարկի մեջ: Նորմատիվային լրացուցիչ կապիտալի հաշվարկի համար հաշվեկշռային լրացուցիչ կապիտալին ավելացվող գումարներն այն գումարներն են, որոնք չեն հաշվառվում որպես կապիտալ համաձայն հաշվային պլանի և հրահանգի, սակայն համաձայն Կանոնակարգ 2-ի՝ ընդգրկվում են նորմատիվային լրացուցիչ կապիտալի հաշվարկում:

3) 3-րդ էջում ներկայացվում են Համահայկական բանկի ընդհանուր կապիտալի համարժեքության Ն1 նորմատիվի վարկային ռիսկի հաշվարկում մասնակցող ակտիվներն ըստ ռիսկի կշիռների, և դրանց գծով ձևավորված հնարավոր կորուստների պահուստների մեծությունները: Ընդ որում, 3-րդ էջում չեն ներկայացվում այն ակտիվները, որոնց վրա տարածվում է վարկային ռիսկի զսպման մեխանիզմը (այսուհետ՝ ՎՌԶՄ): 3-րդ էջի 1-ին, 3-րդ, 5-րդ, 7-րդ, 9-րդ, 11-րդ և 13-րդ, 15-րդ, 17-րդ, 19-րդ սյունակներում լրացվում են ըստ ռիսկի կշիռների խմբավորված ակտիվների հանրագումարները, իսկ 2-րդ, 4-րդ, 6-րդ, 8-րդ, 10-րդ, 12-րդ և 14-րդ, 16-րդ, 18-րդ, 20-րդ սյունակներում՝ համապատասխան ռիսկի կշիռ ունեցող ակտիվների հնարավոր կորուստների պահուստների մեծությունները: 21-րդ սյունակում ամփոփվում է այն ակտիվների գծով վարկային ռիսկը, որոնց վրա չի տարածվում ՎՌԶՄ-ն:

4) 4-րդ և 5-րդ էջերում ներկայացվում են միայն այն ակտիվները, որոնց վրա տարածվում են ՎՌԶՄ-ները: 4-րդ էջում լրացվում են միայն այն ակտիվները, որոնց մեծությունները չեն ճշգրտվում արժեքի տատանման գործակիցներով (օրինակ՝ վարկերը): 4-րդ էջի 1-ին սյունակում լրացվում է ՎՌԶՄ-ին ենթակա ակտիվների ընդհանուր գումարը, 2-րդ սյունակում՝ այդ ակտիվների գծով ձևավորված հնարավոր կորուստների պահուստի մեծությունը՝ բացարձակ արժեքով: 3-րդ սյունակում լրացվում է ՎՌԶՄ-ին ենթակա ակտիվների այն մասը, որոնց ռիսկի կշիռը ՎՌԶՄ կիրառման արդյունքում փոխվել է: 4-րդ սյունակում լրացվում է ՎՌԶՄ կիրառման արդյունքում վարկային ռիսկի փոփոխությունը: 5-ից 14-րդ սյունակներում լրացվում են ակտիվների մեծություններն ըստ ռիսկի կշիռների՝ համապատասխան հնարավոր կորուստների պահուստի չափով նվազեցնելուց հետո: Ընդ որում, ակտիվի ապահովված մասն արտացոլվում է ապահովվածության (կամ ապահովվածություն տրամադրող անձի) ռիսկի կշռին համապատասխան սյունակում, իսկ չապահովված մասը՝ փոխառուի/գործիքի ռիսկի կշռին համապատասխան սյունակում: Օրինակ՝ վարկի մեծությունը 100 դրամ է, պահուստը՝ 10 դրամ, փոխառուի ռիսկի կշիռը՝ 100 տոկոս: Վարկի գծով առկա է ֆինանսական գրավ, որի ճշգրտված արժեքը 60 դրամ է: Ֆինանսական գրավի ռիսկի կշիռը 50 տոկոս է: Այս օրինակում վարկի հաշվեկշռային արժեքն արտացոլվում է առաջին սյունակում 100 դրամի չափով, 10 դրամ պահուստը՝ 2-րդ սյունակում: 3-րդ սյունակում կլրացվի 60 դրամ, իսկ 4-րդ սյունակում՝ 60*(100%-50%)=30 դրամ (որտեղ 60-ն այն մեծությունն է, որի ռիսկի կշիռը փոխվում է ՎՌԶՄ կիրառելիս, 100 տոկոսն ակտիվի ռիսկի կշիռն է մինչև ՎՌԶՄ կիրառելը, իսկ 50 տոկոսը՝ ակտիվի՝ ՎՌԶՄ կիրառման արդյունքում ստացվող նոր ռիսկի կշիռը): Միևնույն ժամանակ, վարկի ապահովված մասը՝ 60 դրամը, պետք է լրացնել 9-րդ սյունակում, իսկ չապահովված մասը՝ ((100-10)-60=30-ը), պետք է արտացոլել 11-րդ սյունակում՝ 30 դրամ գումարի չափով:

5) 5-րդ էջում լրացվում են միայն այն ակտիվները, որոնց մեծությունները ճշգրտվում են արժեքի տատանման գործակիցներով (օրինակ՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի կողմից թողարկված պարտատոմսեր): 5-րդ էջի 1-ին սյունակում լրացվում է ՎՌՋՄ-ին ենթակա ակտիվների ընդհանուր գումարը, 2-րդ սյունակում՝ այդ ակտիվների գծով ձևավորված հնարավոր կորուստների պահուստի մեծությունը՝ բացարձակ արժեքով: 3-րդ սյունակում լրացվում է ՎՌՋՄ-ին ենթակա ակտիվների այն մասը, որոնց ռիսկի կշիռը ՎՌՋՄ կիրառման արդյունքում փոխվել է: 4-րդ սյունակում լրացվում է ՎՌՋՄ կիրառման արդյունքում վարկային ռիսկի փոփոխությունը: 5-ից 14-րդ սյունակներում լրացվում են ակտիվների մեծություններն ըստ ռիսկի կշիռների՝ համապատասխան հնարավոր կորուստների պահուստի չափով նվազեցնելուց և արժեքի տատանման գործակցով ճշգրտելուց հետո: Ընդ որում՝ ակտիվի ապահովված մասն արտացոլվում է ապահովվածության (կամ ապահովվածություն տրամադրող անձի) ռիսկի կշռին համապատասխան սյունակում, իսկ չապահովված մասը՝ փոխառուի/գործիքի ռիսկի կշռին համապատասխան սյունակում: Օրինակ՝ Համահայկական բանկի կողմից ձեռք բերված «Ա+» վարկանիշ ունեցող օտարերկրյա բանկի կողմից թողարկված պարտատոմսի հաշվեկշռային արժեքը 100 դրամ է, մարմանը մնացած ժամկետը՝ 3 տարի: Պարտատոմսի արժեքի տատանման գործակիցը 6 տոկոս է, պահուստը՝ 50 դրամ, պարտատոմսի ռիսկի կշիռը՝ 50 տոկոս: Պարտատոմսի գծով առկա է ապահովվածություն (Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից «Ա+» վարկանիշ ստացած ոչ բանկ կազմակերպության կողմից տրված երաշխիք)՝ 30 դրամ գումարի չափով, որի ռիսկի կշիռը 20 տոկոս է: Այս օրինակում պարտատոմսի հաշվեկշռային արժեքն արտացոլվում է առաջին սյունակում՝ 100 դրամի չափով, 50 դրամ պահուստը՝ 2-րդ սյունակում: 3-րդ սյունակում կլրացվի 30 դրամ, իսկ 4-րդում՝ 30*(50%-20%)=9 դրամ (որտեղ 30-ը այն մեծությունն է, որի ռիսկի կշիռը փոխվում է ՎՌՋՄ կիրառելիս, 50 տոկոսը ակտիվի ռիսկի կշիռն է մինչև ՎՌՋՄ կիրառելը, իսկ 20 տոկոսը՝ ակտիվի՝ ՎՌՋՄ կիրառման արդյունքում ստացվող նոր ռիսկի կշիռը): Պարտատոմսի ապահովված մասը՝ 30 դրամը, պետք է լրացնել 7-րդ սյունակում: Վարկի չապահովված մասը՝ (100-50)*(1+6%)-30=23 դրամը, պետք է արտացոլել 9-րդ սյունակում:

6) 6-րդ էջում ներկայացվում են վարկային ռիսկի հաշվարկում ներառվող այն հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունների և հետհաշվեկշռային անավարտ ժամկետային գործառնությունների (հետհաշվեկշռում արտացոլված արժեքի չափով) վարկային ռիսկի հաշվարկներն ըստ օրերի, որոնց վրա չեն տարածվում ՎՌՋՄ-ները: 1-ից 21-րդ սյունակներում արտացոլվում է հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունների և հետհաշվեկշռային անավարտ ժամկետային գործառնությունների վերածումը վարկային ռիսկի՝ ըստ վարկային ռիսկի փոխարկման գործոնների: 22-ից 31-րդ սյունակներում լրացվում են հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունները և հետհաշվեկշռային անավարտ ժամկետային գործառնությունները վարկային ռիսկի փոխարկման գործոնների միջոցով վարկային ռիսկի վերածելուց հետո՝ խմբավորած ըստ ռիսկի կշիռների:

7) 7-րդ էջում ներկայացվում են վարկային ռիսկի հաշվարկում ներառվող այն հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունները և հետհաշվեկշռային անավարտ ժամկետային գործառնությունների (հետհաշվեկշռում արտացոլված արժեքի չափով) վարկային ռիսկի հաշվարկներն ըստ օրերի, որոնց վրա տարածվում են ՎՌՋՄ-ները: 1-ից 24-րդ սյունակներում արտացոլվում են հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունների և հետհաշվեկշռային անավարտ ժամկետային գործառնությունների վերածումը վարկային ռիսկի՝ ըստ վարկային ռիսկի փոխարկման գործոնների: 25-րդ սյունակում լրացվում է ՎՌՋՄ ենթակա ակտիվների այն մասը, որոնց ռիսկի կշիռը ՎՌՋՄ կիրառման արդյունքում փոխվել է: 26-րդ սյունակում լրացվում է ՎՌՋՄ կիրառման արդյունքում վարկային ռիսկի փոփոխությունը: 27-ից 37-րդ սյունակներում լրացվում են հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունները և հետհաշվեկշռային անավարտ ժամկետային գործառնությունները փոխարկման գործոնների միջոցով վարկային ռիսկի վերածելուց հետո՝ խմբավորած ըստ ռիսկի կշիռների: ՎՌՋՄ կիրառման դեպքում հետհաշվեկշռային հոդվածի ապահովված մասն արտացոլվում է ապահովվածության ռիսկի կշռին համապատասխան սյունակում, իսկ չապահովված մասը՝ փոխառուի ռիսկի կշռին համապատասխան սյունակում: Օրինակ՝ մինչև 1 ամիս պայմանագրային ժամկետ ունեցող դրամային վարկային գծի չօգտագործված մասը 1000 դրամ է, պահուստը՝ 20 դրամ: Փոխարկման գործոնները կիրառելու արդյունքում հաշվեկշռային վարկային ռիսկը կկազմի (1000-20)*20%=196: Փոխառուի ռիսկի կշիռը կկազմի 100 տոկոս: Վարկային գծի չօգտագործված մասի համար առկա է երաշխիք՝ 60 դրամի չափով: Երաշխիք տրամադրողի ռիսկի կշիռը 50 տոկոս է: Այս օրինակի դեպքում վարկային գծի չօգտագործված մասի գումարը՝ 1000 դրամը, պետք է արտացոլել 7-րդ սյունակում, 20 դրամ պահուստը՝ 8-րդ սյունակում: Վարկային գծի ապահովված մասը՝ 60 դրամը, պետք է լրացնել 31-րդ սյունակում, վարկային գծի չապահովված մասը՝ (196-60) = 136 դրամը, պետք է արտացոլել 33-րդ սյունակում:

8) 8-րդ և 9-րդ էջերում ներկայացվում են արտարժութային ռիսկի հաշվարկի համար անհրաժեշտ տարրերը: Ընդ որում, կախված այն բանից, թե Համահայկական բանկն արտարժութային ռիսկի հաշվարկի որ մեթոդաբանությունից է օգտվում, լրացնում է այս երկու էջերից միայն մեկը:

9) 8-րդ էջը լրացվում է միայն այն դեպքում, երբ Համահայկական բանկն օգտվում է արտարժութային ռիսկի գնահատման ստանդարտ մեթոդաբանությունից: 8-րդ էջի 1-ին սյունակում լրացվում է արտարժութային երկար դիրքերի հանրագումարը, 2-րդ սյունակում՝ կարճ դիրքերի հանրագումարը (բացարձակ մեծությամբ), իսկ 3-րդ սյունակում՝ քանկարժեք մետաղների բանկային կամ ստանդարտացված ձուլակտորների և մետաղական հաշիվների բաց դիրքերի բացարձակ մեծությունների հանրագումարը:

10) 9-րդ էջը լրացվում է միայն այն դեպքում, երբ Համահայկական բանկն օգտվում է արտարժութային ռիսկի գնահատման ՎաՌ մեթոդաբանությունից: 9-րդ էջի 1-ին սյունակում լրացվում է արտարժութային օրական ՎաՌ-երի մեծությունը՝ ըստ օրերի: 3-րդ սյունակում լրացվում է, թե հաշվետու ամսվան նախորդող 250 աշխատանքային օրերի ընթացքում փոխարժեքի փոփոխության պատճառով քանի անգամ է բանկի օրական կորուստների մեծությունը գերազանցել տվյալ օրվա արտարժութային օրական ՎաՌ-ը:

դ. յոթերորդ և ութերորդ պարբերություններում «1-ից 21-րդ» բառերը փոխարինել «1-ից 24-րդ» բառերով,

ե. յոթերորդ պարբերությունում «22-ից 31-րդ» բառերը փոխարինել «25-ից 34-րդ» բառերով,

զ. ութերորդ պարբերությունում «22-րդ» բառը փոխարինել «25-րդ» բառով,

է. ութերորդ պարբերությունում «23-րդ» բառը փոխարինել «26-րդ» բառով,

ը. ութերորդ պարբերությունում «24-ից 33-րդ» բառերը փոխարինել «27-ից 36-րդ» բառերով,

թ. ութերորդ պարբերությունում «28-րդ» բառը փոխարինել «31-րդ» բառով,

ժ. ութերորդ պարբերությունում «30-րդ» բառը փոխարինել «33-րդ» բառով:

5) Կանոնակարգ 3-ի 7-րդ կետը «ներգրավված միջոցները» բառերից հետո լրացնել «(անվանական գումարների (մայր գումարների) մնացորդները)» բառերով:

6) Կանոնակարգ 3-ի 9-րդ կետում՝

ա. երկրորդ պարբերությունում «հաշվեկշռային մնացորդները» բառերը փոխարինել «անվանական գումարների (մայր գումարների) մնացորդները (բացառությամբ՝ «Ընդամենը (համախառն հաշվեկշռային մնացորդ)» և «Ընդամենը (քանակ)» սյունակներում ներկայացվող տեղեկատվության)» բառերով,

բ. երրորդ պարբերությունում «երկու» բառը փոխարինել «վեց» բառով,

գ. վեցերորդ պարբերությունում վերջին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Ընդորում, «Ընդամենը (մայր գումարի մնացորդ)», «Ընդամենը (համախառն հաշվեկշռային մնացորդ)», «Ընդամենը (քանակ)» սյունակներում «1. Ընդամենը վարկեր, ավանդներ, ֆակտորինգ, լիզինգ, ռեպո համաձայնագրեր» տողը պետք է հավասար լինի 1.1, 1.2 և 1.3 տողերի համապատասխան թվերի հանրագումարներին:»,

դ. յոթերորդ պարբերությունում «երկու «Ընդամենը» սյունակները» փոխարինել «վեց «Ընդամենը» սյունակները» բառերով,

ե. 29-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«29) **Սպառողական և այլ վարկեր.** Այս խմբում ներառվում են տնային տնտեսություններին տրամադրվող բոլոր վարկերը, բացառությամբ «Հիփոթեքային վարկեր» խմբում ընդգրկվող վարկերի: Խմբում ընդգրկվում են նաև ֆիզիկական անձ հաճախորդներին՝ անշարժ գույքի ձեռքբերման և/կամ վերանորոգման նպատակով տրամադրված այն վարկերը, որոնք ապահովված չեն տվյալ անշարժ գույքով:»,

զ. երեսունմեկերորդ պարբերությունում «միայն վերջին երկու սյունակները» բառերը փոխարինել «միայն վերջին վեց սյունակները» բառերով,

է. երեսուներկուերորդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

««Ընդամենը (մայր գումարի մնացորդ)» սյունակում լրացվում են վարկային ներդրումների, ավանդների, լիզինգի, ֆակտորինգի և ռեպո համաձայնագրերի մայր գումարի մնացորդները հաշվետու ամսվա վերջի դրությամբ՝ ըստ համապատասխան արժույթների: Ընդ որում, 14-րդ սյունակի բոլոր տողերում թվերը պետք է հավասար լինեն 2-րդ, 4-րդ, 6-րդ, 8-րդ, 10-րդ և 12-րդ սյունակների համապատասխան տողերի թվերի հանրագումարին, իսկ 15-րդ սյունակի բոլոր տողերում թվերը պետք է հավասար լինեն 3-րդ, 5-րդ, 7-րդ, 9-րդ, 11-րդ և 13-րդ սյունակների համապատասխան տողերի թվերի հանրագումարին:»,

ը. երեսուներեքերորդ պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ.

««Ընդամենը (համախառն հաշվեկշռային մնացորդ)» սյունակում լրացվում են վարկային ներդրումների, ավանդների, լիզինգի, ֆակտորինգի և ռեպո համաձայնագրերի համախառն հաշվեկշռային մնացորդները հաշվետու ամսվա վերջի դրությամբ՝ ըստ համապատասխան արժույթների: Հաշվեգրված տույժերը և տուգանքները, որոնք հաշվարկվել են ժամկետանց կամ երկարաձգված ակտիվների նկատմամբ, ներկայացվում են համապատասխանաբար սյունակի «Ժամկետանց ակտիվներ» կամ «Երկարաձգված ակտիվներ» տողերում:

«Ընդամենը (քանակ)» սյունակում լրացվում են վարկային ներդրումների, ավանդների, լիզինգի, ֆակտորինգի և ռեպո համաձայնագրերի քանակները՝ ըստ համապատասխան արժույթների: Միևնույն ակտիվի քանակը լրացվում է 1.1, 1.2, 1.3 տողերից միայն մեկում (օրինակ՝ սյունակում չաշխատող (ժամկետանց) ակտիվի քանակը լրացվում է միայն «Ժամկետանց ակտիվներ» տողում):»,

թ. երեսունչորսերորդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«II. Վարկերի, դեբիտորական պարտքերի և վարկային ռիսկ պարունակող հետհաշվեկշռային հոդվածների դիմաց հաշվարկված պահուստների չափը» աղյուսակի 2-րդ, 6-րդ, 10-րդ և 14-րդ սյունակներում համապատասխանաբար լրացվում են տրված վարկերի (ներառյալ՝ միջբանկային ավանդների և թղթակցային հաշիվների), դեբիտորական պարտքերի և վարկային ռիսկ պարունակող հետհաշվեկշռային հոդվածների քանակները՝ ըստ համապատասխան արժույթների, 3-րդ, 7-րդ, 11-րդ և 15-րդ սյունակներում համապատասխանաբար լրացվում են վարկերի (ներառյալ՝ միջբանկային ավանդների և թղթակցային հաշիվների), դեբիտորական պարտքերի և վարկային ռիսկ պարունակող հետհաշվեկշռային հոդվածների հանրագումարները՝ ըստ համապատասխան արժույթների, իսկ 4-րդ, 8-րդ, 12-րդ և 16-րդ սյունակներում, համապատասխանաբար՝ վերջիններիս գծով ձևավորված պահուստները՝ ըստ համապատասխան արժույթների, ընդ որում՝ հաշվեկշռային հոդվածներն ընդգրկվում են համախառն հաշվեկշռային մնացորդներով:»,

ժ. երեսունվեցերորդ պարբերությունում «չաշխատող վարկերի, ավանդների, թղթակցային հաշիվների, ֆակտորինգի, լիզինգի և այլ դեբիտորական պարտքերի մնացորդների հանրագումարը» բառերը փոխարինել «չաշխատող վարկերի, ավանդների, թղթակցային հաշիվների, ֆակտորինգի, լիզինգի և այլ դեբիտորական պարտքերի համախառն հաշվեկշռային մնացորդների հանրագումարը» բառերով,

ժա. երեսունյոթերորդ պարբերությունը լրացնել նոր նախադասությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. ««Հետհաշվեկշռային ակտիվների հաշվարկային փոփոխություններ» սյունակում արտացոլվում են հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում հետհաշվեկշռում հաշվառվող ակտիվների գծով հաշվարկված տոկոսների, տույժերի և տուգանքների գումարները, եթե այդպիսիք կան, հակառակ դեպքում սյունակը չի լրացվում:»:

7) Կանոնակարգ 3-ի 10-րդ կետը առաջին պարբերությունից հետո լրացնել նոր պարբերությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. «Հաշվետվությունում հաշվեկշռային արտարժութային հոդվածները և արտարժութային ռիսկ պարունակող դրամային հոդվածները ընդգրկվում են համախառն հաշվեկշռային մնացորդներով:»:

8) Կանոնակարգ 3-ի 11-րդ կետում՝

ա. երկրորդ պարբերությունից հետո լրացնել նոր պարբերությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. «Հաշվետվությունում հոդվածներն ընդգրկվում են անվանական գումարների (մայր գումարների) մնացորդներով: Եթե հոդվածը չունի անվանական արժեք, ապա այն հաշվետվության մեջ ընդգրկվում է համախառն հաշվեկշռային մնացորդով:»,

բ. յոթերորդ և տասնչորսերորդ պարբերություններից «, ներառյալ՝ օվերնայթների դիմաց ստացվող տոկոսները» բառերը հանել,

գ. ութերորդ և իններորդ պարբերություններից «և արժութային սվոփի» բառերը հանել,

դ. իններորդ պարբերությունից «և արժութային սվոփով» բառերը հանել,

ե. տասներկուերորդ պարբերությունում վերջին նախադասությունը և Աղյուսակ 27-ը հանել,

զ. տասութերորդ և տասնիններորդ պարբերություններում «զուտ» բառը փոխարինել «համախառն» բառով:

9) Կանոնակարգ 3-ի 12-րդ կետում՝

ա. առաջին պարբերությունից հետո լրացնել նոր պարբերությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. «Հաշվետվությունում հոդվածները ընդգրկվում են անվանական գումարների (մայր գումարների) մնացորդներով: Եթե հոդվածը չունի անվանական արժեք, ապա այն հաշվետվության մեջ ընդգրկվում է համախառն հաշվեկշռային մնացորդով:»,

բ. իններորդ պարբերությունում «արժեթղթերի փաթեթի կառավարման և արժեքների ի պահ ընդունման գործառնությունների» բառերը փոխարինել «արժեթղթերի փաթեթի կառավարման, արժեքների ի պահ ընդունման, արժեթղթերով գործարքների, խորհրդատվության, այլ ներդրումային և ոչ հիմնական ծառայությունների» բառերով,

գ. իններորդ, տասներորդ և տասնմեկերորդ պարբերություններից «և արժութային սվոփը» բառերը հանել,

դ. տասներորդ պարբերությունում «արժեթղթերի փաթեթի կառավարման գործառնությունների» բառերը փոխարինել «արժեթղթերի փաթեթի կառավարման, արժեթղթերով գործարքների, արժեքների ի պահ ընդունման, խորհրդատվության, այլ ներդրումային և ոչ հիմնական ծառայությունների» բառերով,

ե. տասնմեկերորդ պարբերությունում «հավատարմագրային կառավարման» բառերը փոխարինել «արժեթղթերի փաթեթի կառավարման, արժեթղթերով գործարքների, արժեքների ի պահ ընդունման, խորհրդատվության, այլ ներդրումային և ոչ հիմնական ծառայությունների» բառերով,

զ. տասնհինգերորդ պարբերությունը «ՀՀ պետական պարտատոմսերը» բառերից հետո լրացնել «, որոնք հաշվառվում են հետհաշվեկշռում» բառերով,

է. տասնվեցերորդ պարբերությունը «այլ արժեթղթերը» բառերից հետո լրացնել «, որոնք հաշվառվում են հետհաշվեկշռում» բառերով,

ը. տասնութերորդ պարբերությունում 2-րդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Չաշխատող ակտիվների դիմաց հաշվեգրված անվանական տոկոսների մեծությունը լրացվում է «Չաշխատող» սյունակի համապատասխան ենթասյունակներում և ընդգրկվում է «1. Ակտիվների մարման ժամկետայնության վերաբերյալ» բաժնի «Ընդամենը» տողի հաշվարկի մեջ:»,

թ. տասնիններորդ պարբերությունը «ստացվելիք շահաբաժինները,» բառերից հետո լրացնել «տույժերը, տուգանքները,» բառերով,

ժ. քսաներորդ պարբերությունն ուժը կորցրած ճանաչել,

ժա. քսաներորդ պարբերությունից հետո լրացնել նոր պարբերությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. ««Պարտավորություններ ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթերի գծով» տողում արտացոլվում են ռեզիդենտներից և ոչ ռեզիդենտներից ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթերի վաճառքի արդյունքում առաջացած պարտավորությունների գումարները:»,

ժբ. երեսունմեկերորդ պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ՝

««Խոշոր» պարտավորություններ» տողում լրացվում են այն բոլոր պարտավորությունների անվանական արժեքների և անվանական տոկոսների հանրագումարները, որոնց հաշվեկշռային արժեքները, առանձին վերցված, կազմում են բանկի ընդհանուր պարտավորությունների 5 և ավելի տոկոսը՝ առանց հաշվի առնելու փոխկապակցվածությունը:»:

10) Կանոնակարգ 3-ի 13-րդ կետում առաջին պարբերությունը «փոփոխության դեպքում» բառերից հետո լրացնել «, այդ թվում՝ հաշվետվության ձևի փոփոխության դեպքում» բառերով:

11) Կանոնակարգ 3-ի 16-րդ կետում՝

ա. երկրորդ պարբերությունում «անհրաժեշտ տարրերը» բառերից հետո լրացնել «, ընդ որում՝ հաշվեկշռային ֆինանսական գործիքները ներկայացվում են համախառն հաշվեկշռային մնացորդներով» բառերով,

բ. աղյուսակի «Հետհաշվեկշռային երաշխավորություններ, ակրեդիտիվներ,» բառերից հետո լրացնել «գնման սվոփեր.» բառերով:

12) Կանոնակարգ 3-ի 17-րդ կետում՝

ա. ութերորդ պարբերությունը վերջին նախադասությունից հետո լրացնել նոր նախադասությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. «Տույժերի և տուգանքների համար 6-րդ սյունակում լրացվում է տվյալ տույժի կամ տուգանքի հաշվեգրման առաջին օրվա ամսաթիվը, իսկ 7-րդ սյունակը չի լրացվում:» բառերով,

բ. իններորդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. ««Պարտքի գումարը» սյունակում (9-րդ սյունակ) լրացվում է պարտքի համախառն հաշվեկշռային մնացորդը հաշվետու ամսվա վերջին օրվա դրությամբ, ընդ որում՝ պարտավորության դիմաց անվանական տոկոսադրույքով հաշվեգրված տոկոսագումարները, ինչպես նաև տույժերը և տուգանքները ներկայացվում են առանձին տողերում:

10-րդ սյունակում լրացվում է միայն մեկ պարտատիրոջ նկատմամբ բոլոր տեսակի պարտավորությունների հանրագումարը (ընդ որում՝ լրացվում է միայն վերջին պարտքի տողին կից վանդակը), իսկ 11-րդ սյունակում՝ տվյալ պարտատիրոջ հետ փոխկապակցված անձանց նկատմամբ բանկի ունեցած պարտավորությունների գումարը (ընդ որում՝ լրացվում է միայն 10-րդ սյունակում արտացոլված գումարին կից վանդակը):»:

13) Կանոնակարգ 3-ի 18-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«18. Ձև թիվ 16 հաշվետվությունում արտացոլվում են ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ բանկերի նկատմամբ բանկի պահանջների և պարտավորությունների անվանական գումարների (մայր գումարների) մնացորդները հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ: Հաշվետվությունում պահանջները և պարտավորությունները համախմբվում են ըստ թղթակից բանկերի. սկզբում ներկայացվում են տվյալ թղթակից բանկի նկատմամբ բոլոր պահանջները, այնուհետև՝ պարտավորությունները:

1) **«Բանկի անվանում»** սյունակում լրացվում է հաշվետու բանկի նկատմամբ պահանջ և/կամ պարտավորություն ունեցող բանկի (այսուհետ՝ թղթակից բանկ) անվանումը:

2) **«Բանկի կոդ»** սյունակում լրացվում է թղթակից ռեզիդենտ բանկի՝ Կենտրոնական բանկի կողմից տրամադրված կոդը: Ոչ ռեզիդենտ թղթակից բանկի համար այս սյունակը չի լրացվում:

3) **«ՍՎԻՖԹ/ՏԵԼԵՔՍ»** սյունակում լրացվում է թղթակից բանկի ՍՎԻՖԹ կոդը կամ ՏԵԼԵՔՍ համարը: Եթե թղթակից բանկն ունի և ՍՎԻՖԹ կոդ և ՏԵԼԵՔՍ համար, ապա լրացվում է ՍՎԻՖԹ կոդը:

4) **«Բանկի ռեզիդենտություն»** սյունակում լրացվում է «ռեզիդենտ», եթե թղթակից բանկը ռեզիդենտ է, և «ոչ ռեզիդենտ», եթե թղթակից բանկը ոչ ռեզիդենտ է:

5) **«Գտնվելու վայր»** սյունակում լրացվում են թղթակից բանկի գլխամասի կամ այն մասնաճյուղի գտնվելու երկիրը, երկրի կոդը և քաղաքը, որի միջոցով կնքվել է գործարքը: Ընդ որում, բանկի գլխամասի (մասնաճյուղի) երկրի կոդը լրացվում է ԻՍՕ 3166-1 ալֆա-3 (ISO 3166-1 alpha-3) կոդերով:

6) **«Վարկանիշ»** սյունակում լրացվում է թղթակից բանկի վարկանիշը: Թղթակից բանկի վարկանշի բացակայության դեպքում վանդակը չի լրացվում, իսկ մի քանի կազմակերպությունների կողմից վարկանշված լինելու դեպքում լրացվում է ամենացածր վարկանիշը:

7) **«Պահանջի/պարտավորության բնույթ»** սյունակում լրացվում է «Ակտիվային», «,Պայմանական ակտիվ», «Պասիվային» կամ «Պայմանական պարտավորություն» տարբերակներից մեկը: «Ակտիվային» տարբերակը լրացվում է, եթե բանկը հաշվեկշռային պահանջի իրավունք ունի թղթակից բանկի նկատմամբ, «Պայմանական ակտիվ» տարբերակը լրացվում է, եթե բանկը հետհաշվեկշռային պահանջի իրավունք ունի թղթակից բանկի նկատմամբ, «Պասիվային» տարբերակն ընտրվում է, եթե բանկը հաշվեկշռային պարտավորություն ունի թղթակից բանկի նկատմամբ, և «Պայմանական պարտավորություն» տարբերակն ընտրվում է, եթե բանկը հետհաշվեկշռային պարտավորություն ունի թղթակից բանկի նկատմամբ:

8) **«Պահանջի/պարտավորության տեսակ»** սյունակում լրացվում է պահանջի/պարտավորության հետևյալ տեսակներից մեկը՝ «հաշիվ», «ավանդ», «վարկ», «վարկային գիծ և օվերդրաֆտ», «ռեպո համաձայնագիր», «արժեթուղթ», «ռեպո համաձայնագրով ձեռք բերված արժեթուղթ» (լրացվում է և ռեպո համաձայնագրով արժեթուղթը ձեռք բերելիս, և արժեթուղթը վաճառելիս), «լիզինգ», «ֆակտորինգ», «երաշխիք /երաշխավորություն», «ակրեդիտիվ», «գնման սվոփ», «վաճառքի սվոփ» և «այլ» : Ընդ որում, սյունակում «գնման սվոփ» տեսակը լրացնելու դեպքում, «Պահանջի/պարտավորության բնույթ» սյունակում լրացվում է «Պայմանական ակտիվ» տարբերակը, իսկ «վաճառքի սվոփ» տեսակը նշելու դեպքում՝ «Պայմանական պարտավորություն» տարբերակը:

9) **«Ժամկետայնություն»** սյունակում լրացվում է պահանջի/պարտավորության պայմանագրային ժամկետը՝ ըստ «ցպահանջ», «ժամկետային», «անժամկետ» տարբերակների:

10) **«Արժութային կոդ»** սյունակում լրացվում է արժույթի կոդը՝ տարադրամների ԻՍՕ (ISO) կոդերի տեսքով:

11) **«Մնացորդը»** սյունակում լրացվում է պահանջի/պարտավորության մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ՝ հազար դրամներով:

Եթե 1-ից 10-ը կետերում նշված սյունակներում լրացվող տվյալները նույն են, ապա նրանք համախմբվում են մեկ տողում և այս սյունակում ներկայացվում են ընդհանուր մնացորդային գումարով:

Հաշվետվության մեջ չեն լրացվում այն պահանջները/պարտավորությունները, որոնց մնացորդային գումարները հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ կազմում են 0 ՀՀ դրամ՝ բացառությամբ թղթակցային հաշիվների, որոնք պարտադիր լրացվում են անկախ մնացորդի մեծությունից:»:

14) Կանոնակարգ 3-ի 19-րդ կետում՝

ա. առաջին պարբերությունից «արժութային սվոփի,» բառերը հանել,

բ. առաջին պարբերությունից ութերորդ նախադասությունը հանել,

գ. տասներեքերորդ պարբերությունում «3-րդ և 4-րդ էջերում ժամկետային միջոցների բաժնի «գումար» սյունակներում ընդգրկվում են ակտիվների և պարտավորությունների՝ հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում կնքված գործարքների գումարները,» բառերը փոխարինել «3-րդ և 4-րդ էջերում ժամկետային միջոցների բաժնի «գումար» սյունակներում ընդգրկվում են հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում, ինչպես նաև նախկինում կնքված պայմանագրերի համաձայն հաշվետու ժամանակաշրջանում փաստացի ներգրավված կամ տեղաբաշխված գումարներն ամբողջությամբ,» բառերով,

դ. տասնչորսերորդ պարբերությունից հետո լրացնել նոր պարբերությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. «3-րդ և 4-րդ էջերի առանձին աղյուսակներում ներկայացվում են հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում կնքված նոր գործարքների պայմանագրային գումարները հազար դրամներով, ընդ որում, վարկային գծերի և օվերդրաֆտների գումարները չեն ընդգրկվում: Աղյուսակներում արտարժութային հոդվածները ներկայացվում են դրամական արտահայտությամբ՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ Կենտրոնական բանկի կողմից հայտարարված արժութային շուկայում ձևավորված միջին փոխարժեքներով:»,

ե. տասնյոթերորդ պարբերությունից հետո լրացնել նոր պարբերությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. «Այն դեպքում, երբ վարկը տրամադրվելու է մի քանի փուլերով, ապա ամբողջ պայմանագրին վերաբերող գրավադրված գույքի ապահովագրության վճարը, գնահատման և այլ օժանդակ ծառայությունների դիմաց կատարվող վճարները ներառվում են յուրաքանչյուր փուլի տարեկան տոկոսադրույքի հաշվարկում՝ համամասնորեն բաշխվելով փուլերի միջև:»,

15) Կանոնակարգ 3-ի 20-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«20. Թիվ 18 հաշվետվությունը բաղկացած է 4 աղյուսակներից: Տվյալները լրացվում են միայն հաշվետվության ազատ վանդակներում:

1) Հաշվետվության **I աղյուսակում** գրանցվում են բանկի կողմից ոչ ռեզիդենտների հետ իրականացված բոլոր գործառնությունները, **II աղյուսակում**՝ միայն ոչ ռեզիդենտներից ներգրավված վարկերի ու դրանց սպասարկման վերաբերյալ տվյալները, **III աղյուսակում**՝ ծառայությունների և կատարված աշխատանքների դիմաց ոչ ռեզիդենտներից ստացված եկամուտների և նրանց տրված ծախսերի վերաբերյալ տվյալները, իսկ **IV աղյուսակում**՝ բանկի պահանջների և պարտավորությունների դիրքերն իր ոչ ռեզի-

դեպի ուղղակի ներդրողի և իր հետ նույն խմբի մեջ մտնող ոչ ռեզիդենտ սուբյեկտների հետ ժամանակաշրջանի վերջի դրությամբ:

2) Հաշվետվությունը լրացվում է միլիոն դրամներով, բացառությամբ հաշվետվության II աղյուսակի 4-րդ սյան, որտեղ տվյալները լրացվում են համապատասխան արժույթի միավորով, ընդ որում, գումարները նշվում են ամբողջությամբ:

3) Հաշվետվության **I աղյուսակում** յուրաքանչյուր գործառնություն տարանջատվում է ըստ արժույթների. Հայաստանի Հանրապետության դրամ, ԱՄՆ դոլար, եվրո, ռուսական ռուբլի, ճապոնական իեն, ֆունտ ստեռլինգ, շվեյցարական ֆրանկ, իրանական ռիալ և այլ արտարժույթ (ներառյալ՝ բանկային ոսկին):

4) Հաշվետվության I աղյուսակի մեջ լրացվող արտարժույթով արտահայտված բոլոր գումարները (բացառությամբ՝ «Կապիտալի արժեթղթեր» բաժնի «Պասիվ» մասում լրացվող տվյալների) վերածվում են դրամի՝ հաշվետու եռամսյակի վերջին օրվա դրությամբ համապատասխան արժույթի գործող հաշվարկային փոխարժեքով կամ հաշվարկային փոխարժեքի միջոցով հաշվարկված քրոս-կուրսով:

5) Հաշվետվության մեջ գործիքների ժամկետայնությունը տարանջատվում է հետևյալ ձևով՝ «Կարճաժամկետ» տողում գրանցվում են տվյալներ այն գործիքների վերաբերյալ, որոնց պայմանագրային ժամկետը (վարկերի, ավանդների համար) կամ թողարկման պահին սկզբնական ժամկետայնությունը (արժեթղթերի համար) չի գերազանցում մեկ տարին ներառյալ, իսկ մնացածը գրանցվում է «Երկարաժամկետ» տողում:

6) Բոլոր բաժինները, բացառությամբ «Շահաբաժիններ», «Հաշվեգրված տոկոսներ», «Եկամուտներ/ծախսեր» տողերի, լրացվում են համապատասխան ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ անվանական գումարների (մայր գումարների) մնացորդների հիման վրա:

7) «Շահաբաժիններ» հոդվածի «Ակտիվ» մասում լրացվում են տարեսկզբից աճողական տվյալներ սովորական բաժնետոմսերի գծով հայտարարված (ստացվելիք), արտոնյալ բաժնետոմսերի գծով հաշվեգրված (ստացվելիք) շահաբաժինների, իսկ «Պասիվ» մասում՝ տարեսկզբից աճողական տվյալներ սովորական բաժնետոմսերի մասով հայտարարված (վճարվելիք), արտոնյալ բաժնետոմսերի մասով հաշվեգրված (վճարվելիք) շահաբաժինների վերաբերյալ: Այն դեպքում, եթե արտոնյալ բաժնետոմսերի գծով շահաբաժինները չեն հաշվեգրվել, դրանք հաշվետվությունում արտացոլվում են այն պահին, երբ ճանաչվում են վճարման ենթակա: Եթե շահաբաժինները եռամսյակի ընթացքում փաստացի վճարվել են, դրանք չեն նվազեցվում շահաբաժինների կուտակային գումարից:

8) «Ակտիվ» մասի «Հաշվեգրված տոկոսներ» տողերում լրացվում են ոչ ռեզիդենտներից ձեռք բերված պարտքային արժեթղթերի, նրանց տրամադրված վարկերի և ավանդների գծով հաշվեգրված անվանական տոկոսների, իսկ «Պասիվ» մասում՝ ոչ ռեզիդենտներին վաճառված պարտքային արժեթղթերի, նրանցից ներգրավված վարկերի և ավանդների գծով հաշվեգրված անվանական տոկոսների վերաբերյալ տվյալներ: Տվյալները լրացվում են աճողական կարգով՝ տարեսկզբից մինչև հաշվետու եռամսյակի վերջին օրվա դրությամբ հաշվեգրված տոկոսները: Ընդ որում, վարկերի և ավանդների դիմաց հաշվեգրված տոկոսները լրացնելիս անհրաժեշտ է տարանջատել դրանք ըստ արժույթների, այսինքն՝ յուրաքանչյուր արժույթով ներգրավված (տրամադրված) ավանդների կամ վարկերի գծով հաշվեգրված տոկոսները անհրաժեշտ է լրացնել համապատասխան արժույթի սյունակի մեջ, այլ ոչ թե, օրինակ, բոլոր հաշվեգրված ծախսերը (եկամուտները) արտացոլել դրամային սյան մեջ, այն պատճառով, որ տոկոսային եկամուտների հաշվեգրումը կատարվում է դրամով: Այս տողում չեն ներառվում առանձին գործիքների գծով ոչ տոկոսային եկամուտներն ու ծախսերը:

9) Ֆինանսական ածանցյալների գծով «Եկամուտներ/ծախսեր» տողի «Ակտիվ» մասում լրացվում են ոչ ռեզիդենտների հետ կնքված ածանցյալ գործիքների (ֆյուչերս, ֆորվարդ, սվոփ, օպցիոն) իրական արժեքի փոփոխության գծով եկամուտները (ոչ տոկոսային եկամուտներ), ինչպես նաև ածանցյալ գործիքների գծով տոկոսային եկամուտները, իսկ «Պասիվ» մասում՝ ոչ ռեզիդենտների հետ կնքված ածանցյալ գործիքների իրական արժեքի փոփոխության գծով ծախսերը (ոչ տոկոսային ծախսեր), ինչպես նաև ածանցյալ գործիքների գծով տոկոսային ծախսերը: Ընդ որում, տվյալները կարող են լրացվել համախմբված ձևով դրամով սյունակի մեջ:

10) Առաջին եռամսյակի հաշվետվությունում անհրաժեշտ է ներկայացնել միայն հաշվետու ժամանակաշրջանի գործիքների գծով շահաբաժինները, հաշվեգրված տոկոսները և օգուտները/կորուստները՝ թողնելով նախորդ ժամանակաշրջանի համապատասխան տողերը դատարկ: «Կապիտալի արժեթղթեր» բաժնի «Ակտիվ» մասում լրացվում են բանկի կողմից որևէ ոչ ռեզիդենտ կազմակերպության բաժնետիրական կապիտալում կատարված ուղղակի և պորտֆելային ներդրումները, իսկ «Պասիվ» մասում՝ բանկի բաժնետիրական կապիտալում ոչ ռեզիդենտների կողմից կատարված ուղղակի և պորտֆելային ներդրումները:

11) Կապիտալի արժեթղթերի հետ կապված գործարքների բաժանումը «Ուղղակի ներդրումների» և «Պորտֆելային ներդրումների»՝ կատարվում է հետևյալ սկզբունքներով.

12) Ուղղակի (նշանակալից մասնակցություն) համարվում են այն ներդրումները, որոնց գումարը կազմում է ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոսը, իսկ պորտֆելային (ոչ նշանակալից

մասնակցություն)՝ այն ներդրումները, որոնց գումարը կազմում է ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի մինչև 10 տոկոսը:

13) Կապիտալ արժեթղթերում ներառվում են նաև արտոնյալ բաժնետոմսերը, որոնք ապահովում են իրավունք ընկերության մնացորդային արժեքի նկատմամբ: Եթե ընկերության արտոնյալ բաժնետոմսերը գտնվում են ոչ ռեզիդենտ ուղղակի ներդրողի մոտ, ապա ներառվում են ուղղակի ներդրումներում, իսկ եթե դրանք գտնվում են ոչ ռեզիդենտ պորտֆելային ներդրողի մոտ, ապա ներառվում են պորտֆելային ներդրումներում:

14) «Ներդրումային հիմնադրամներում փայաբաժիններ» հոդվածը լրացվում է միայն «Ակտիվ» մասում՝ տարեսկզբից աճողական տվյալներ ոչ ռեզիդենտ ներդրումային հիմնադրամներում ունեցած փայաբաժինների դիրքի վերաբերյալ: Այս բաժինը տարանջատվում է ըստ ժամկետայնության սկզբունքի՝ կարճաժամկետ և երկարաժամկետ (ժամկետայնության որոշումը տե՛ս վերևում): «Շահաբաժիններ» մասում լրացվում են ոչ ռեզիդենտ ներդրումային հիմնադրամներում ունեցած փայաբաժինների գծով հայտարարված (ստացվելիք) շահաբաժինների վերաբերյալ տվյալներ ըստ արժութային բաշխվածքի:

15) «Պարտքային արժեթղթեր» բաժնի «Ակտիվ» մասում լրացվում են ոչ ռեզիդենտների կողմից թողարկված և բանկի կողմից ձեռք բերված ցանկացած տեսակի պարտքային արժեթղթերի և դրանց հետ կապված ստացվելիք տոկոսների վերաբերյալ տվյալներ, իսկ «Պասիվ» մասում՝ հաշվետու բանկի կողմից թողարկված և ոչ ռեզիդենտների կողմից ձեռք բերված պարտքային արժեթղթերի և դրանց հետ կապված վճարվելիք տոկոսների վերաբերյալ տվյալներ: Այս բաժնում ներառվում են պարտատոմսերը, մուրհակները և այլ արժեթղթեր:

16) «Կանխիկ արտարժույթ» բաժնում լրացվում են բանկի կանխիկ արտարժութային միջոցների վերաբերյալ տվյալներ՝ ներառյալ կանխիկը ճանապարհին:

17) «Վարկեր, այդ թվում՝ օվերդրաֆտ և վարկային քարտեր» բաժնի «Ակտիվ» մասում լրացվում են բանկի կողմից ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի և դրանց հետ կապված ստացվելիք տոկոսների (հաշվեգրված, սակայն չստացված տոկոսների) հաշվեկշռային անվանական գումարները: «Պասիվ» մասում լրացվում են ոչ ռեզիդենտների կողմից բանկին տրամադրված վարկերի և դրանց հետ կապված վճարվելիք տոկոսների (հաշվեգրված չվճարված տոկոսների) գումարները: Ընդ որում՝ վարկային գծերի և օվերդրաֆտների ծավալները գրանցվում են փաստացի մնացորդի (օգտագործված մասի) չափով: Այս բաժնում պետք է ներառել նաև ռեպո գործառնությունների, ֆակտորինգի և ֆինանսական վարձակալության հետևանքով առաջացած պահանջներն ու պարտավորությունները:

18) «Ավանդներ» բաժինը լրացվում է «Վարկեր, այդ թվում՝ օվերդրաֆտ և վարկային քարտեր» բաժնի լրացման սկզբունքով: «Ավանդներ» բաժնում լրացվում են բանկային հաշիվների, ժամկետային ու ցպահանջ ավանդների, ինչպես նաև թղթակցային «նոստրո» և «լորո» հաշիվների ու դրանց հետ կապված ստացվելիք (վճարվելիք) տոկոսների վերաբերյալ տվյալները:

19) Ֆինանսական ածանցյալ գործիքները ներառում են ոչ ռեզիդենտների հետ ֆորվարդ, ֆյուչերս, օպցիոն, սվոփ և այլ ածանցյալ գործիքների դիրքերը, ընդ որում՝ գործիքի իրական արժեքի նվազումը արտացոլվում է «Պասիվ» մասում, իսկ իրական արժեքի աճը՝ «Ակտիվ» մասում:

20) «Ապրանքների, ծառայությունների և կատարված աշխատանքների դիմաց կանխավճարներ և հետաձգված վճարներ» բաժնի «Ակտիվ» մասում լրացվում են տվյալներ ապրանքների, ծառայությունների դիմաց բանկի կողմից տրված կանխավճարները, ինչպես նաև ոչ ռեզիդենտներից ապրանքների կամ ծառայությունների դիմաց ստացվելիք գումարները: «Պասիվ» մասում լրացվում են բանկին ծառայությունների դիմաց տրված կանխավճարների, ինչպես նաև ստացված ապրանքների, ծառայությունների և կատարված աշխատանքների դիմաց ոչ ռեզիդենտներին վճարվելիք գումարների վերաբերյալ: Այս բաժնի «Ակտիվ» մասում լրացվում են նաև բանկի կողմից ոչ ռեզիդենտներին, իսկ «Պասիվ» մասում՝ ոչ ռեզիդենտների կողմից բանկին մատուցված ծառայությունների (փոխանցումներ, հավատարմագրային կառավարում, արժեթղթերի փաթեթի կառավարում, խորհրդատվական ծառայություններ, պահառություն, փոխարկումներ, երաշխիքներ, ակրեդիտիվներ կամ այլ նմանատիպ ծառայություններ), վարկերի սպասարկման վճարների, վարկային գծերի չօգտագործված մասի դիմաց հաշվարկվող եկամուտների/ծախսերի գծով ստացվելիք/վճարվելիք գումարների վերաբերյալ տվյալներ: Աշխատավարձի գծով վճարվելիք գումարները ներառվում են «Այլ գործառնությունների դիմաց ստացվելիք/վճարվելիք գումարներ» բաժնում:

21) «Այլ գործառնությունների դիմաց ստացվելիք/վճարվելիք գումարներ» բաժնում լրացվում են այն բոլոր գործառնությունները, որոնք տվյալ բանկն իրականացնում է ոչ ռեզիդենտների հետ, և որոնք չեն հանդիսանում վերը նշված գործառնություններից և ոչ մեկը: Այս բաժնում, մասնավորապես, արտացոլվում են վճարային չեկերի գծով առկա պահանջներն ու պարտավորությունները:

22) «Ժամկետանց պահանջներ և պարտավորություններ» բաժնի «Ակտիվ» մասում լրացվում են հաշվեկշռային տվյալներ բանկի կողմից ոչ ռեզիդենտների նկատմամբ ունեցած ժամկետանց պահանջների, իսկ «Պասիվ» մասում՝ ոչ ռեզիդենտների նկատմամբ ունեցած ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ:

23) «Արտահաշվեկշռում հաշվառված ակտիվներ» բաժնում լրացվում է տեղեկատվություն հաշվեկշռից դուրս գրված վարկերի, դեբիտորական պարտքերի և դուրս գրված այլ ակտիվների վերաբերյալ, ընդ որում, դրանց գծով նախկինում հաշվեգրված տոկոսները ներառվում են գործիքի գումարի մեջ: Յուրաքանչյուր նման գործառնություն ներկայացվում է արժութային բաշխվածքով և վերածվում է դրամի՝ հաշվետու եռամսյակի վերջին օրվա դրությամբ համապատասխան արժույթի գործող հաշվարկային փոխարժեքով:

24) «Հաշվեկշռից դուրս գրված ակտիվների գծով կորուստների վերականգնում» բաժնում լրացվում են այն մարումները, որոնք ստացվել են հաշվեկշռից դուրս գրված վարկերի, դեբիտորական պարտքերի և այլ ակտիվների դիմաց:

25) «Արտահաշվեկշռից դուրս գրված/ներված ակտիվներ և պարտավորություններ» բաժնի «Ակտիվ» մասում լրացվում են բանկի կողմից ներված վարկերը, դեբիտորական պարտքերը և ներված այլ ակտիվները, ինչպես նաև դրանց հետ կապված բոլոր եկամուտները, իսկ «Պասիվ» մասում գրանցվում են բանկին ներված վարկերը, կրեդիտորական պարտքերը և այլ պարտավորություններ, ինչպես նաև դրանց հետ կապված բոլոր ծախսերը:

26) Հաշվետվության I մասի 4-րդ կետի՝ «Վարկեր, այդ թվում՝ օվերդրաֆտ և վարկային քարտեր» բաժնի «Պասիվ» մասի վերաբերյալ մանրամասն տվյալները հավաքագրվում են սույն հաշվետվության II աղյուսակում: Հաշվեկշռային տվյալները լրացվում են անվանական գումարներով (մայր գումարներով): Հաշվետվության II աղյուսակը լրացվում է հետևյալ կերպ.

ա. 2-րդ սյունակում նշվում է վարկ տրամադրող ոչ ռեզիդենտի գրանցման երկիրը: Այն դեպքում, երբ վարկը տրամադրված է միջազգային ֆինանսական կազմակերպության կողմից, սյունակի մեջ նշվում է կազմակերպության անունը (օրինակ, Միջազգային ֆինանսական կորպորացիա) (Միջազգային կազմակերպությունների բնորոշումը տրված է Հավելված 1-ում):

բ. 3-րդ սյունակում նշվում է վարկ տրամադրող ոչ ռեզիդենտի հատվածի պատկանելությունը՝ ըստ հետևյալ տառերի.

բ1. Ֆ-ն ընդգրկում է ոչ ռեզիդենտ բանկերը, ներդրումային ընկերությունները, ներդրումային հիմնադրամները, փոխադարձ հիմնադրամները (mutual funds), դրամական շուկայի հիմնադրամները, բորսաները, այլ ոչ բանկային ֆինանսական հաստատությունները (բացառությամբ ապահովագրական ընկերությունների և կենսաթոշակային հիմնադրամների),

բ2. Մ-ն ընդգրկում է միջազգային ֆինանսական կազմակերպությունները (միջազգային ֆինանսական կազմակերպությունների ավելի մանրամասն բացատրությունները տես «Միջազգային ֆինանսական կազմակերպություններ» հավելված 18.2),

բ3. Պ-ն ընդգրկում է այլ պետությունների կառավարությունները (կենտրոնական և տեղական մակարդակներով),

բ4. Ի-ն ընդգրկում է Ֆ-ում և Պ-ում չներառված ոչ ռեզիդենտ կազմակերպությունները (այսինքն՝ պետական մասնակցությամբ կազմակերպությունները, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ պետական կազմակերպությունները, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող սուբյեկտները և շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունները, ապահովագրական ընկերությունները և կենսաթոշակային հիմնադրամները):

բ5. Եթե Ֆ-ն, Մ-ն, Պ-ն կամ Ի-ն տվյալ բանկի կամ վարկային կազմակերպության համար հանդիսանում են ուղղակի ներդրող կամ նույն խմբի մեջ մտնող սուբյեկտ (ուղղակի ներդրողի և նույն խմբի մեջ մտնող սուբյեկտների մանրամասն սահմանումները տես IV աղյուսակի բացատրություններում), ապա համապատասխան տառերը գրվում են շտրիխներով (Ֆ’, Մ’, Պ’ կամ Ի’):

գ. 4-րդ սյունակում լրացվում է յուրաքանչյուր պարտքային գործիքի տեսակը, այսինքն՝ վարկ, ռեպո գործառնություն, օվերդրաֆտ կամ օվերնայթ:

դ. 5-րդ, 6-րդ սյունակներում նշվում են վարկի գումարը վարկային պայմանագրում նշված արժույթով (գումարը լրացվում է ամբողջությամբ) և արժույթի՝ Ստանդարտների միջազգային կազմակերպության կոդը:

ե. 7-րդ սյունակում լրացվում է վարկային պայմանագրում նշված վարկի ներգրավման ամսաթիվը՝ հետևյալ ֆորմատով՝ 25/03/12:

զ. 8-րդ սյունակում լրացվում է վարկային պայմանագրում նշված վարկի մարման ժամկետը՝ հետևյալ ֆորմատով՝ 25/06/17:

27) Եթե վարկային պայմանագրով նախատեսված չէ մարման ժամկետ և տոկոսադրույք, այսինքն՝ վարկը ստացվում է առանձին մասնաբաժիններով և դրանցից յուրաքանչյուրի համար սահմանված են առանձին պայմաններ, ապա յուրաքանչյուր մասնաբաժնի համար տվյալները լրացվում են առանձին տողերի համապատասխան սյունակներում:

28) 9-րդ, 10-րդ, 11-րդ և 12-րդ սյունակներում լրացվում են վարկի սպասարկման պայմանները, համապատասխանաբար՝ վարկի դիմաց տոկոսագումարի վճարման պարբերականությունը (միանվագ, ամսական, եռամսյակային, կիսամյակային, տարեկան կամ ոչ պարբերական), տոկոսագումարի առաջին վճար-

ման ամսաթիվը, հիմնական գումարի մարման պարբերականությունը (միանվագ, ամսական, եռամսյակային, կիսամյակային, տարեկան կամ ոչ պարբերական) և վարկի հիմնական գումարի առաջին վճարման ամսաթիվը: Բոլոր ամսաթվերը պետք է նշվեն հետևյալ ֆորմատով՝ 25/06/2010:

29) 13-րդ սյունակում նշվում է վարկի տոկոսադրույքը: Եթե, օրինակ, տոկոսադրույքը կազմում է ԼԻԲՕՐ գումարած 5%, ապա այն լրացվում է «ԼԻԲՕՐ+5»:

30) 14-րդ սյունակում լրացվում են հաշվետու եռամսյակի սկզբի դրությամբ ոչ ռեզիդենտներից ներգրավված վարկերի մայր գումարների մնացորդները:

31) 15-րդ սյունակում նշվում են հաշվետու եռամսյակի ընթացքում տվյալ վարկային պայմանագրի շրջանակներում կատարված վարկային մուտքերը:

32) 16-րդ սյունակում լրացվում է հաշվետու եռամսյակում վարկի հիմնական գումարի մարմանն ուղղված վճարումների ծավալը: Տվյալ եռամսյակում հիմնական գումարի միանվագ մարումը նշվում է ամբողջ ծավալով:

33) 17-րդ և 18-րդ սյունակներում լրացվում են համապատասխանաբար եռամսյակի ընթացքում վարկի դիմաց հաշվեգրված և փաստացի վճարված տոկոսագումարները:

34) 19-րդ սյունակում լրացվում են եռամսյակի վերջի դրությամբ ոչ ռեզիդենտներից ներգրավված վարկերի մայր գումարների մնացորդները:

35) 20-րդ սյունակում լրացվում են հաշվեգրված, սակայն եռամսյակի վերջի դրությամբ չվճարված տոկոսագումարները:

36) Սույն հաշվետվության **III աղյուսակում** լրացվում են տվյալներ ոչ ռեզիդենտներին մատուցված ու ոչ ռեզիդենտներից ստացված ծառայությունների և կատարված աշխատանքների մասին: Աղյուսակում ներկայացվող հաշվեգրված եկամտի ու ծախսերի վերաբերյալ տվյալները լրացվում են տարվա սկզբից աճողական կարգով: Հաշվետվության III աղյուսակը լրացվում է հետևյալ կերպ.

ա. «Վարձակալության գծով ծառայություններ» բաժնում լրացվում են ոչ ռեզիդենտներին վարձակալության տրված անշարժ գույքի («Ակտիվ») և ոչ ռեզիդենտներից վարձակալության վերցված անշարժ գույքի («Պասիվ») գծով ստացված վճարները:

բ. «Հեռահաղորդակցության, համակարգչային և տեղեկատվական ծառայություններ» բաժնում լրացվում են ոչ ռեզիդենտներին մատուցված և ոչ ռեզիդենտներից ստացված հեռահաղորդակցության, համակարգչային և տեղեկատվական ոլորտի ծառայությունների դիմաց ստացված և վճարված եկամուտներն ու ծախսերը: Մասնավորապես, այս բաժնում ներառվում են համակարգչային ծրագրերի օգտագործման վճարները, այս ոլորտում մտավոր սեփականության օգտագործման համար վճարները, տեխնիկական և ծրագրային ապահովման վերաբերյալ խորհրդատվության դիմաց վճարները, ինչպես նաև թերթերին և պարբերականներին բաժանորդագրման վճարներ: Ընդ որում, այստեղ ներառվում են նաև ՍՎԻՖԹ համակարգի գծով ծախսերը:

գ. «Ֆինանսական ծառայություններ, բացառությամբ դրամական փոխանցումների համակարգերի» բաժնի մասում լրացվում են ոչ ռեզիդենտներին մատուցված և ոչ ռեզիդենտներից ստացված ֆինանսական ծառայությունների դիմաց եկամուտներն ու ծախսերը, բացառությամբ դրամական համակարգերի միջոցով դրամական փոխանցումների գծով ստացված/վճարված եկամուտներից: Ընդ որում, այս բաժնում ներառվում են ավանդների տրամադրման և ստացման գծով ծախսերը, վարկերի դիմաց ստացված/վճարված սպասարկման վճարները, վարկային գծի չօգտագործված մասի դիմաց հաշվեգրված տոկոսավճարները, կանխիկացման վճարները, ինչպես նաև ֆինանսական խորհրդատվության դիմաց վճարները:

դ. «Մասնագիտական և կառավարման գծով խորհրդատվական, ինչպես նաև գիտահետազոտական աշխատանքների հետ կապված ծառայություններ» բաժնի մասում լրացվում են ոչ ռեզիդենտներին մատուցված և ոչ ռեզիդենտներից ստացված մասնագիտական և կառավարման գծով խորհրդատվական ծառայությունների դիմաց եկամուտներն ու ծախսերը, ոչ ռեզիդենտներին մատուցված և ոչ ռեզիդենտներից ստացված գիտահետազոտական աշխատանքների հետ կապված ծառայությունների դիմաց եկամուտներն ու ծախսերը՝ բացառությամբ իրավաբանական, ապահովագրական և հաշվապահական ծառայությունների: Մասնավորապես, այս բաժնում ներառվում են գովազդի, շուկայի ուսումնասիրման, հասարակական կարծիքի ուսումնասիրման, նոր ապրանքների և գործընթացների հետ կապված հիմնավոր և կիրառական հետազոտությունների հետ կապված ծառայությունների գծով եկամուտներն ու ծախսերը:

ե. «Գործառնական վարձակալություն» բաժնում լրացվում են ոչ ռեզիդենտներին վարձակալության տրված և ոչ ռեզիդենտներից վարձակալության վերցված գույքի դիմաց վճարները:

զ. «Դրամական համակարգերի միջոցով դրամական փոխանցումների գծով ստացված/վճարված միջոցներ» բաժնում ներառվում են դրամական փոխանցման համակարգերի կողմից բանկերին տրված/բանկերից ստացված ծառայությունների դիմաց վճարները, ինչպես նաև դրամական փոխանցման համակարգերի սպասարկման վճարները:

է. «Այլ ծառայություններ» բաժնում ներառվում են ոչ ռեզիդենտներին մատուցված և ոչ ռեզիդենտներից ստացված նախորդ բոլոր բաժիններում չներառված ծառայությունների դիմաց եկամուտներն ու ծախսերը:

ը. «Անդամավճարներ» հոդվածի մեջ ներառվում են անդամավճարները և նմանատիպ վճարները ոչ ռեզիդենտ կազմակերպություններին:

թ. «Ոչ ռեզիդենտներին վճարված աշխատավարձ» բաժնում ներառվում են ոչ ռեզիդենտներին վճարվելիք աշխատավարձերի գծով հաշվեգրված գումարները:

37) Հաշվետվության IV աղյուսակում լրացվում են բանկի պահանջների և պարտավորությունների դիրքերն իր ոչ ռեզիդենտ ուղղակի ներդրողի, ոչ ռեզիդենտ ուղղակի ներդրման ընկերության և իր հետ նույն խմբի մեջ մտնող ոչ ռեզիդենտ սուբյեկտների հետ ժամանակաշրջանի վերջի դրությամբ: Յուրաքանչյուր սուբյեկտի նկատմամբ պահանջներն ու պարտավորությունները լրացվում են առանձին:

38) Ուղղակի ներդրող է համարվում այն ոչ ռեզիդենտ սուբյեկտը, որն իրականացրել է ներդրումներ բանկի բաժնետիրական կապիտալում կամ ձեռք է բերել փայամասնակցություն և ստացել է ընկերության ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 10% և ավելին: Համապատասխանաբար, ուղղակի ներդրման ընկերություն է համարվում այն ոչ ռեզիդենտ կազմակերպությունը, որի կապիտալում բանկն ունի 10% և ավելի փային իրավունք տվող մասնակցություն:

39) Նույն խմբի մեջ մտնող են համարվում բանկի հետ անուղղակիորեն ուղղակի ներդրման հարաբերություններում ներգրավված ոչ ռեզիդենտ ընկերությունները, որոնք ունեն ընդհանուր ուղղակի ներդրող, կամ հանդիսանում են ուղղակի ներդումային շղթայի մի մաս (օրինակ. նույն մայր ընկերության՝ տարբեր երկրներում գտնվող երկու ուղղակի ներդրումներով ձեռնարկությունները):

40) Ուղղակի ներդրողների և նույն խմբի մեջ մտնող կազմակերպությունների ավելի մանրամասն նկարագրությունը տրված է «Ուղղակի ներդրումներ և նույն խմբի մեջ մտնող կազմակերպություններ» հավելված 18.1-ում:

41) Այս բաժնում ուղղակի ներդրողների կամ նրանց հետ կապված անձանց նկատմամբ պահանջը կամ պարտավորությունը պետք է լրացվի այն դեպքում, եթե դրանք գերազանցում են 5 մլն դրամը (չի վերաբերում հաշվեգրված տոկոսներին, որոնք ներառվում են յուրաքանչյուր գործիքի հետ մեկտեղ):

42) Աղյուսակում գործիքները ներկայացվում են խմբավորված ըստ տեսակների, ընդ որում՝ տարանջատումն իրականացվում է ըստ ժամկետայնության սկզբունքի:

43) Աղյուսակի վերջում լրացվում են ուղղակի ներդրողների և նույն խմբի մեջ մտնող սուբյեկտների գործիքների գծով հաշվեգրված տոկոսային եկամուտները/ծախսերը, իսկ բաժնետիրական կապիտալում ներդրման գծով հայտարարված շահաբաժինները՝ համախմբված ձևով: Տվյալները լրացվում են տարեսկզբից աճողական կարգով: «Հաշվեգրված տոկոսային եկամուտներ/ծախսեր, հայտարարված շահաբաժիններ ոչ ռեզիդենտ ուղղակի ներդրող կամ նույն խմբի մեջ մտնող ֆինանսական ընկերությունների նկատմամբ (բացառությամբ ապահովագրական ընկերությունների և կենսաթոշակային հիմնադրամների)» տողում լրացվում են միայն ֆինանսական ընկերություններ (բացառությամբ ապահովագրական ընկերությունների և կենսաթոշակային հիմնադրամների) հանդիսացող ուղղակի ներդրողների, ուղղակի ներդրման ձեռնարկությունների և նույն խմբի մեջ մտնող ընկերությունների գծով հաշվարկված տոկոսային եկամուտները/ծախսերը կամ հայտարարված շահաբաժինները:

44) Հաշվետվության IV աղյուսակը լրացվում է հետևյալ կերպ.

ա. 1-ին սյունակում լրացվում է տեղեկատվություն սուբյեկտի վերաբերյալ՝ ուղղակի ներդրող է (ուղղակի ներդրող), ուղղակի ներդրման ընկերություն (ուղղակի ներդրման ընկերություն), թե նույն խմբի մեջ մտնող (նույն խմբի մեջ մտնող):

բ. 2-րդ սյունակում նշվում է տվյալ սուբյեկտի գրանցման երկիրը (ֆիզիկական անձանց դեպքում՝ ռեզիդենտության երկիրը): Այն դեպքում, երբ ուղղակի ներդրողը կամ նույն խմբի մեջ մտնող ընկերությունը հանդիսանում է միջազգային ֆինանսական կազմակերպություն, սյունակի մեջ նշվում է կազմակերպության անունը (օրինակ, Միջազգային ֆինանսական կորպորացիա) (Միջազգային կազմակերպությունների բնորոշումը տրված է Հավելված 18.2-ում):

գ. 3-րդ սյունակում նշվում է տվյալ սուբյեկտի հատվածի պատկանելությունը՝ աղյուսակ II-ի նմանությամբ (տառերը չեն նշվում շտրիխով).

դ. 4-րդ և 9-րդ սյունակներում լրացվում են համապատասխանաբար տվյալ սուբյեկտի բաժնետիրական կապիտալում ունեցած ներդրումները (ներառյալ՝ արտոնյալ բաժնետոմսերի տեսքով), իսկ պարտավորություններում՝ նրա կողմից տվյալ ընկերության բաժնետիրական կապիտալում ներդրումները (ներառյալ՝ արտոնյալ բաժնետոմսերը):

ե. 5-րդ և 10-րդ սյունակներում լրացվում են համապատասխանաբար վարկերի և փոխառությունների գծով «Պահանջներ» մասում տվյալ սուբյեկտին տրամադրված վարկերը, փոխառությունները, ռեպո համաձայնագրերով տրամադրված միջոցները, օվերդրաֆտները, ֆինանսական լիզինգը, ֆակտորինգը և վարկային գծերի օգտագործված մասերը, իսկ «Պարտավորություններ» մասում՝ նրանից ստացված վարկերը, փոխառությունները, ռեպո համաձայնագրերով ստացված միջոցները, օվերդրաֆտները, ֆինանսական լիզինգը, ֆակտորինգը և վարկային գծերի օգտագործված մասերը:

զ. 6-րդ և 11-րդ սյունակներում լրացվում են համապատասխանաբար ավանդների գծով «Պահանջներ» մասում բանկի կողմից տվյալ սուբյեկտի մոտ ներդրված ցպահանջ և ժամկետային ավանդները,

թղթակցային հաշիվները և դրանց հավասարեցված միջոցները, իսկ «Պարտավորություններ» մասում՝ բանկում նրա կողմից ներդրված ցպահանջ և ժամկետային ավանդները, թղթակցային հաշիվները և դրանց հավասարեցված միջոցները :

է. 7-րդ և 12-րդ սյունակներում լրացվում են համապատասխանաբար պարտատոմսերի և այլ պարտքային արժեթղթերի գծով «Պահանջներ» մասում՝ տվյալ սուբյեկտի պարտատոմսերում և այլ պարտքային արժեթղթերում բանկի իրականացրած ներդրումները, իսկ «Պարտավորություններ» մասում՝ նրա կողմից իրականացված ներդրումները բանկի պարտատոմսերում և այլ պարտքային արժեթղթերում:

ը. 8-րդ և 13-րդ սյունակներում լրացվում են տվյալ սուբյեկտի նկատմամբ ունեցած այն բոլոր պահանջներն ու պարտավորությունները, որոնք ներառված չեն նախորդ խմբերում»:

16) Կանոնակարգ 3-ի 22-րդ կետում 3-րդ և 3.1-րդ ենթակետերը ուժը կորցրած ճանաչել:

17) Կանոնակարգ 3-ի 25-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«25. Թիվ 24 հաշվետվությունում ներկայացվում է բանկերի միջոցով արտերկրից մուտք եղած և արտերկիր ուղարկված գումարների վերաբերյալ տեղեկատվություն ամսական կտրվածքով: Սույն հաշվետվության մեջ ներկայացվում է հաշվետու ամսվա ընթացքում բանկերի միջոցով արտասահմանից ստացված և արտասահման փոխանցված միջոցների և դրանց քանակի վերաբերյալ տեղեկատվություն, որոնք իրականացվել են բանկերի, ոչ բանկ ֆինանսական կազմակերպությունների, իրավաբանական անձանց, անհատ ձեռնարկատերերի, ֆիզիկական անձանց կողմից: Հաշվետվության մեջ լրացվող տեղեկատվությունը դասակարգվում է նաև ըստ երկրների, Երևանի և մարզերի, առանց բանկային հաշվի բացման դրամական փոխանցումների իրականացման համակարգերի և այլն: Սույն հաշվետվության իմաստով հաճախորդ կարող է հանդիսանալ հաշվետու բանկին դիմած ցանկացած սուբյեկտ: Ընդ որում.

1) «Փոխանցողի/ստացողի դասակարգումը» սյունակում ներկայացվում է ՀՀ տարածքում գումարի փոխանցումը նախաձեռնող կամ ՀՀ տարածքում գումարը ստացող կողմը, որը լրացվում է ըստ նշված դասակարգման՝ «Բանկ», «Ոչ բանկ ֆինանսական կազմակերպություն», «Իրավաբանական անձ», «Անհատ ձեռնարկատեր», «Ֆիզիկական անձ» (կամ Հաճախորդ): Որտեղ լրացվում է.

ա. «Բանկ», եթե իրականացվել են բանկ հաճախորդների հանձնարարությամբ կամ բանկի սեփական նախաձեռնությամբ փոխանցումներ, ինչպես նաև վերջիններիս ուղղված միջազգային ստացումներ,

բ. «Ոչ-բանկ ֆինանսական կազմակերպություն», երբ ԿԲ կողմից լիցենզավորվող ոչ բանկ ֆինանսական կազմակերպություն հանդիսացող հաճախորդների կողմից նախաձեռնվել են կամ ստացվել են վերջիններիս ուղղված միջազգային փոխանցումներ՝ ըստ առանձին համակարգերի,

գ. «Իրավաբանական անձ», երբ իրավաբանական անձանց կողմից նախաձեռնվել են փոխանցումներ կամ իրականացվել վերջիններիս ուղղված միջազգային ստացումներ ըստ առանձին համակարգերի,

դ. «Անհատ ձեռնարկատեր», երբ կատարվել են անհատ ձեռնարկատեր հանդիսացող անձանց կողմից նախաձեռնված փոխանցումներ կամ վերջիններիս ուղղված միջազգային ստացումներ՝ ըստ առանձին համակարգերի,

ե. «Ֆիզիկական անձ», երբ կատարվել են ֆիզիկական անձանց կողմից նախաձեռնված կամ վերջիններիս ուղղված միջազգային փոխանցումներ՝ ըստ առանձին համակարգերի:

զ. Աղյուսակի տողերում նշված դասակարգումները և դրանց հետ կապված փոխանցումները չեն կրկնվում մյուս տողերում նշվող տեղեկատվության հետ:

2) «ՀՀ ուղարկված/ստացված» սյունակում լրացվում է «ուղարկված» կամ «ստացված» արտահայտությունը: Որտեղ նշվում է.

ա. «ուղարկված», եթե իրականացվել են ՀՀ-ից դեպի արտասահման կատարված փոխանցումներ: Այս դեպքում բացառություն են կազմում որպես միջնորդ օղակ արտասահմանից ստացված և անմիջապես արտասահման փոխանցված միջոցները: Եթե հաշվետու առևտրային բանկը ներկայացնում է հանձնարարական մեկ այլ առևտրային բանկին միջազգային փոխանցում կատարելու նպատակով, ապա այդ փոխանցումների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացնում է հանձնարարականը կատարող բանկը,

բ. «ստացված», եթե տեղի է ունեցել արտասահմանից դեպի ՀՀ կատարված փոխանցումների ստացում: Այս մասում բացառություն են կազմում որպես միջնորդ օղակ արտասահմանից ստացված և անմիջապես ՀՀ տարածքում գործող մեկ այլ բանկի փոխանցված միջոցները: Եթե հաշվետու առևտրային բանկը ստանում է հանձնարարական արտասահմանից, որպեսզի ստացված միջոցները մուտքագրի իր մոտ սպասարկվող առևտրային բանկի հաշվին, ապա այդ ստացումների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացնում է շահառուին վճարումը ապահովող (շահառուի հաշվին միջոցները մուտքագրող/շահառուին կանխիկ վճարող) բանկը:

Միաժամանակ բացառություն են կազմում այն փոխանցումները, որոնց դեպքում և վճարողը, և շահառուն գտնվում են ՀՀ տարածքում, որոնց վճարումները կատարվում են արտասահմանյան փոխանցումների համակարգերով:

3) «ՀՀ-ում ուղարկվել/ստացվել է բանկային հաշվով կամ կանխիկ միջոցներով» սյունակում լրացվում է «բանկային հաշվով» կամ «կանխիկ միջոցներով» արտահայտությունը: Որտեղ նշվում է.

ա. «բանկային հաշվով», եթե ՀՀ-ում սպասարկված հաճախորդի կողմից միջոցների փոխանցումը նախաձեռնվել է բանկային հաշվով կամ հաճախորդի անունով ստացված միջոցները մուտքագրվել են վերջինիս հաշվին,

բ. «կանխիկ միջոցներով», եթե ՀՀ-ում սպասարկված հաճախորդի կողմից միջոցների փոխանցումը նախաձեռնվել է կանխիկ միջոցներով կամ հաճախորդի անունով ստացված միջոցները վերջինիս վճարվել են կանխիկ:

4) «Փոխանցման միջոց/համակարգ» սյունակում լրացվում է տվյալ փոխանցումը/ստացումը իրականացնելու հետ կապված այն դրամական փոխանցումների իրականացման համակարգի անվանումը, որի միջոցով ստացվել կամ փոխանցվել է գումարը: Եթե բանկի կողմից արտասահմանյան փոխանցումներ կատարելու համար չի շահագործվում որևէ վճարային համակարգ, այլ փոխանցումները իրականացվում են թղթակցային հաշիվներով՝ օգտագործելով որևէ տեխնիկածրագրային միջոց (օրինակ՝ ՍՎԻՖԹ, տելեքս, Ֆաքս և այլ), ապա այդ փոխանցումները դասակարգվում և նշվում են որպես «Փոխանցումներ այլ միջոցներով՝ բանկի թղթակցային հաշիվներով»:

5) «Տեխնիկածրագրային միջավայր» սյունակում լրացվում է այն տեխնիկածրագրային միջավայրը, որը բանկի կողմից օգտագործվում է «Փոխանցման միջոց/համակարգ» աղյուսակում նշված համակարգերով, ինչպես նաև «Փոխանցումներ այլ միջոցներով՝ բանկի թղթակցային հաշիվներով» համապատասխան տողում նշված փոխանցումների/ստացումների իրականացման համար: Ընդ որում, կարող է նշվել «ՍՎԻՖԹ», «Տելեքս», «Ֆաքս», «Ինտերնետ միջավայր» կամ «Առանձնացված կապուղի»:

6) «ՀՀ-ում ստացման/փոխանցման մարզը կամ տարածաշրջանը» սյունակում լրացվում է Երևան քաղաքը կամ այն մարզը, որտեղ իրականացվել է հաճախորդի կողմից դեպի արտասահման փոխանցում կատարելու նախաձեռնումը կամ դեպի ՀՀ ուղղված միջոցների ստացումը: Հաշվետվության մեջ սույն տվյալները չեն լրացվում ըստ հաճախորդի գրանցման վայրի:

7) «Փոխանցման/ստացման երկրի ISO կոդը» սյունակում լրացվում է ՀՀ-ից բացի այն Երկրի կոդը (ըստ ISO 3166-1 alpha-3 միջազգային ստանդարտի), որտեղից կատարվել է դեպի ՀՀ փոխանցումը, կամ այն Երկրի կոդը, որտեղ պետք է կատարվի դեպի արտասահման փոխանցված գումարի վճարումը:

8) «Փոխանցման նպատակը» սյունակում լրացվում է «առևտրային» կամ «ոչ առևտրային» տարբերակը: Սույն հաշվետվության իմաստով՝ ոչ առևտրային նպատակով իրականացվող փոխանցումներ են համարվում.

ա. հաճախորդի անունով արտերկրից ստացված (արտերկիր փոխանցված) անհատույց ֆինանսական միջոցները, որոնց նպատակն ընթացիկ կարիքների բավարարումն է, մասնավորապես՝ ֆինանսական օգնությունը, նվիրատվությունները, նպաստները, թոշակները և այլ նմանատիպ միջոցները,

բ. աշխատանքի դիմաց ստացված (վճարված) աշխատավարձը, երբ աշխատողը աշխատել է արտերկրում տեղակայված կազմակերպությունում և աշխատավարձը ստանում է գտնվելով արդեն իր երկրում, բանկային փոխանցման միջոցով,

գ. երբ աշխատողը աշխատում է տվյալ երկրում տեղակայված այնպիսի կազմակերպությունում, որտեղ աշխատավարձը ստանում է արտերկրից աշխատավարձի ուղղակի փոխանցման միջոցով:

Մնացած բոլոր դեպքերում, այդ թվում՝ անշարժ գույքի ձեռքբերման, շինարարական աշխատանքների իրականացման համար կատարվող փոխանցումները, չպետք է դիտել որպես ոչ առևտրային նպատակով իրականացվող փոխանցում, դիտարկելով որպես «առևտրային»:

Եթե արտերկրից ՀՀ փոխանցումներում առկա են այնպիսի դեպքեր, որտեղ փոխանցման նպատակը հստակ նշված չէ, և չկան համապատասխան տեղեկություններ նշված փոխանցումը դասակարգելու համար, ապա բանկը պետք է որպես կողմնորոշիչ ցուցանիշներ վերցնի հետևյալը.

ա. եթե փոխանցումն իրականացնողը (ստացողը) իրավաբանական անձ է, ապա նշված միջոցը պետք է դասակարգել որպես առևտրային նպատակով և ընտրել «առևտրային» նպատակը,

բ. եթե փոխանցումն իրականացնողը (ստացողը) ֆիզիկական անձ է, ապա այն պետք է դիտարկել որպես ոչ առևտրային նպատակով իրականացված փոխանցում/ստացում և ընդգրկել «ոչ առևտրային» սյունակում միայն այն դեպքում, եթե փոխանցվող գումարի չափը չի գերազանցում 10 000 ԱՄՆ դոլարը կամ դրան համարժեք գումարը ներառյալ:

Եթե հաճախորդի կողմից փոխանցվող/ստացվող գումարի նպատակն ըստ նշված կանոնների չի դասակարգվում որպես «ոչ առևտրային», ապա այն նշվում է որպես «առևտրային» բնույթ ունեցող:

9) «Գումարի մեծության դասակարգիչ (ԱՄՆ դոլարին համարժեք)» սյունակում լրացվում է յուրաքանչյուր փոխանցված/ստացված մեկ գումարի մեծությունից կախված միևնույն տողում խմբավորված գումարների դասակարգման բնութագրումը՝ ըստ «մինչև 10000» կամ «10000 և ավելի» տարբերակների: Սույն հաշվետվության միևնույն տողում փոխանցված/ստացված գումարների խմբավորման ժամանակ հաշվի է առնվում մեկ՝ փոխանցված/ստացված գումարի մեծությունը. եթե

ա. փոխանցված/ստացված մեկ գումարի մեծությունը չի գերազանցում «10000 ԱՄՆ դոլարին համարժեք» գումարը, ապա հաշվետվության մյուս սյունակների պայմանների ապահովման դեպքում այդպիսի

գումարները կարող են խմբավորվել մեկ տողում, իսկ այս սյունակում որպես բնութագրիչ լրացվում է «մինչև 10000» տարբերակը,

բ. փոխանցված/ստացված մեկ գումարի մեծությունը համարժեք է կամ գերազանցում է 10000 ԱՄՆ դոլարը, ապա հաշվետվության մյուս սյունակների պայմանների ապահովման դեպքում այդպիսի գումարները կարող են խմբավորվել մեկ տողում, իսկ այս սյունակում որպես բնութագրիչ լրացվում է «10000 և ավելի» տարբերակը:

10) «Փոխանցման/ստացման գումարը և արժույթի ISO կոդը» սյունակի համապատասխան ենթասյունակներում լրացվում են փոխանցման կատարման կամ վճարման համար ստացված գումարը և վերջինիս ISO կոդը:

11) «Գումարը արտահայտված ԱՄՆ դոլարով» սյունակում լրացվում է փոխանցման կատարման կամ վճարման համար ստացված գումարը արտահայտված ԱՄՆ դոլարով, հաշվարկված տվյալ օրվա դրությամբ՝ արժույթ/ԱՄՆ դոլար Կենտրոնական բանկի հաշվարկային փոխարժեքով:

12) «Գումարն արտահայտված ՀՀ դրամով» սյունակում լրացվում է փոխանցման կատարման կամ վճարման համար ստացված գումարը արտահայտված ՀՀ դրամով, հաշվարկված տվյալ օրվա դրությամբ՝ ՀՀ դրամ /ԱՄՆ դոլար Կենտրոնական բանկի հաշվարկային փոխարժեքով:

13) «Քանակ» սյունակում լրացվում է 1-11 սյունակներում նշված նույն բնութագրիչներն ունեցող փոխանցումների/ստացումների քանակը:»**:**

18) Կանոնակարգ 3-ի 28-րդ կետը երրորդ պարբերությունից հետո լրացնել նոր պարբերությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. «Հաշվետվության մեջ վարկերը և ավանդները ընդգրկվում են համախառն հաշվեկշռային մնացորդներով:»:

19) Կանոնակարգ 3-ի 29-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«29. Թիվ 30 «Շահագործման հանձնված և շահագործումից հանված տերմինալների վերաբերյալ» հաշվետվության մեջ լրացվում է հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ տեղադրված և գործող բոլոր տերմինալների վերաբերյալ տեղեկատվությունը: Տերմինալներ են համարվում ավտոմատ գանձման մեքենաները (ԱԳՄ), վճարումների ընդունման տերմինալները, տեղեկատվական վճարային տերմինալները/կիոսկները, արտարժույթի ավտոմատ փոխանակման տերմինալները և այլ վճարային տերմինալներ, որոնք թույլ են տալիս մատուցել վճարային ծառայություններ: Սույն հաշվետվության մեջ չեն նշվում ՊՈՍ-տերմինալների և իմպրինտերների վերաբերյալ տվյալները: Հաշվետվությունը ներկայացվում է յուրաքանչյուր ամսվա համար: Եթե հաշվետու ժամանակահատվածում բանկի կողմից չեն տեղադրվել նոր տերմինալներ կամ հանվել շահագործումից, ապա հաշվետվությունը ներկայացվում է անփոփոխ տվյալներով: Ներկայացվող տվյալներում հաշվի են առնվում հաշվետու ամսվա ընթացքում տեղի ունեցած փոփոխությունները՝ կապված տերմինալների տեղադրման, տեղափոխման, փոխարինման կամ շահագործման դադարեցման հետ: Սույն հաշվետվության միջոցով ներկայացվում է նաև տեղեկատվություն շարժական տերմինալների վերաբերյալ, որոնք կազմակերպությունը տեղադրել և հանել է շահագործումից հաշվետու ժամանակահատվածում: Ընդ որում.

Թիվ 30 «Շահագործման հանձնված և շահագործումից հանված տերմինալների վերաբերյալ» հաշվետվությունը բաղկացած է.

1) «Հաշվետու ամսվա վերջին օրվա դրությամբ շահագործվող տերմինալներ» և «Շահագործումից հանված տերմինալներ» աղյուսակներից:

3. Ուղղակի ներդրման հարաբերությունները իրենց մեջ ներառում են երկու կարգի հարաբերություններ 10 - 50% բաժնեմասի տնօրինում (նշանակալի մասնակցություն, որին կանվանենք կապված ընկերություն - associate) և 50%-ից ավելի բաժնեմասի տնօրինում (որոշիչ մասնակցություն, որին կանվանենք դուստր ընկերություն - subsidiary): Ըստ այս հարաբերությունների շարունակվում և դադարում է ուղղակի ներդրումների շղթան: Քանի որ ուղղակի ներդրումները ենթադրում են կառավարման մեջ կայուն ազդեցություն, ապա նման ազդեցությունը շղթայի մեջ պահպանվում է հետևյալ կանոնների պահպանման դեպքում:

1) Որոշիչ մասնակցության միջոցով շղթան շարունակվում է անընդհատ, այսինքն՝ միմյանց հետ որոշիչ կապերի միջոցով կապված բոլոր սուբյեկտները հանդիսանում են նույն խմբի մեջ մտնող.

2) Որոշիչ մասնակցությունից նշանակալիի անցնելիս կապը ներառում է միայն առաջին նշանակալի մասնակցության սուբյեկտին, այդ սուբյեկտի որոշիչ վերահսկողության տակ գտնվող սուբյեկտներին և ընդհատվում է (չի ներառում) հաջորդ նշանակալի սուբյեկտներին անցնելիս: Առաջին նշանակալի մասնակցությամբ ընկերությունը դեռևս կապված է կառավարման կայուն ազդեցությամբ շղթայի վերևի և հորիզոնական մասնակիցների հետ. նրա որոշիչ մասնակցությամբ ընկերությունները նույնպես կապված են, քանի որ դրանք կարելի է դիտարկել որպես առաջին նշանակալի մասնակցությամբ ընկերության մասնաճյուղ: Սակայն հաջորդ նշանակալի մասնակցությամբ ընկերության մեջ խմբի վերևի օղակները չունեն էական ազդեցություն:




4. Վերոշարադրյալ սկզբունքների առավել ընդգրկուն սխեմատիկ պատկերը ներկայացված է հաջորդ նկարում.




Ելնելով վերոշարադրյալ գծապատկերից՝ մի քանի ավելի պարզ և կոնկրետ օրինակների միջոցով ներկայացնենք այն դեպքերը, երբ երկու հաստատություններ դասակարգվում են որպես «մի խմբի անդամ» և դրանց միջև գործառնությունները ներկայացվում են առանձին: Աստղանիշով (*) կառանձնացվի այն ընկերությունը, որի տեսանկյունից լրացվում է սույն հարցաթերթիկը:

Դեպք 1




Ա, Բ և Գ ձեռնարկությունները գործում են տարբեր տնտեսություններում: Այս դեպքում Ա մայր ձեռնարկությունը ուղղակի ներդրումներ ունի և՛ Բ, և՛ Գ ձեռնարկություններում: Ու թեև Բ և Գ ձեռնարկությունների միջև անմիջական ներդրումային հարաբերություններ գոյություն չունեն, դրանց միջև իրականացված ցանկացած գործառնություն ցույց է տրվում որպես նույն խմբի անդամների միջև գործառնություն:

Դեպք 2




Տվյալ դեպքում Գ ձեռնարկությունը, որպես նույն խմբի մեջ մտնող ընկերություն, <u>չի բացահայտում</u> Ա ընկերությանը, քանի որ Բ ընկերության ներդրումը Գ-ում արդեն իսկ չի հանդիսանում ուղղակի ներդրում:

Դեպք 3




Ա, Բ և Գ ձեռնարկությունները գործում են տարբեր տնտեսություններում: Չնայած որ Ա ընկերությունը Գ ընկերության բաժնետոմսերի ընդամենը 8%-ին է տնօրինում, այնուամենայնիվ լինելով Բ ընկերության ուղղակի ներդրող, և քանի որ Բ ընկերությունը Գ-ում ունի ուղղակի ներդրում, ստացվում է, որ Ա ընկերությունը՝ միջնորդավորված Բ-ով, Գ-ում նույնպես ունի ուղղակի ներդրում: Այսպիսով, Գ ձեռնարկությունը որպես ուղղակի ներդրող պետք է արտացոլի Բ ընկերությանը, իսկ որպես նույն խմբի մեջ մտնող ձեռնարկություն՝ նաև Ա ընկերության նկատմամբ պարտավորությունները և նրանց միջև տեղի ունեցող ցանկացած այլ ֆինանսական գործառնությունները:

Դեպք 4




Հնարավոր է, որ ուղղակի ներդրողը ունենա ազդեցության շղթա, որի մեջ մի կապը հանդիսանում է ռեզիդենտ-ռեզիդենտ հարաբերություն: Այսպիսի ռեզիդենտ-ռեզիդենտ հարաբերությունները, որոնք նկարագրված են Դեպք 4-ում Բ և Գ ընկերությունների միջև, չեն խոչընդոտում տարբեր տնտեսություններում ռեզիդենտ հանդիսացող ընկերությունների միջև ուղղակի ներդրումով հարաբերությունների առկայությանը, ինչպիսիք են Ա և Գ ընկերությունները: Այսպիսով, Դեպք 4-ում թեև Ա-ն ուղղակի ներդրումային հարաբերություններ չունի Գ ընկերության հետ, դրանց միջև փաստացի գոյություն ունեն ներդրումային հարաբերություններ՝ միջնորդավորված Բ ընկերությամբ, և այդ պատճառով Գ ընկերությունը պետք է ներկայացնի Ա-ի հետ իր բոլոր գործառնությունները նույն խմբի մեջ մտնող սուբյեկտին վերաբերող մասում: Դեպքը կարող է էլ ավելի բարդանալ, եթե Գ-ն գործառնություններ է իրականացնում Դ-ի հետ, որը նույնպես հանդիսանում է Ա-ի դուստր ձեռնարկություն: Եթե Գ ընկերությունը հնարավորություն ունենա բացահայտել նաև այսպիսի հարաբերությունները, ապա Գ-ի և Դ-ի միջև գործառնությունները նույնպես պետք է ներկայացնել հարցաթերթիկի՝ նույն խմբի անդամներին վերաբերող մասում:

Դեպք 5



Բ և Գ ընկերությունները հանդիսանում են միևնույն տնտեսության ռեզիդենտներ, հետևաբար նրանց միջև հարաբերությունները չեն ընդգրկվում հարցման շրջանակներում: Սակայն Բ ընկերությունն ուղղակի ներդրում ունի նաև ոչ ռեզիդենտ Ա ընկերությունում: Այս դեպքում Գ ընկերությունը իր և Ա ընկերության միջև բոլոր գործառնությունները, թե՛ ակտիվային և թե՛ պասիվային, պետք է ներառվեն նույն խմբի մեջ մտնող սուբյեկտների վերաբերյալ աղյուսակում: Միևնույն ժամանակ, եթե ենթադրենք, որ Ա ընկերությունը տիրապետում է նաև մեկ այլ ընկերության կանոնադրական կապիտալին, մեր դեպքում դա Դ ընկերությունն է, ապա Գ-ն պետք է, այսպիսի հարաբերությունների բացահայտման դեպքում, տեղեկատվություն ներկայացնի նաև իր և Դ ընկերություն միջև տեղի ունեցող գործառնությունների վերաբերյալ:

Դեպք 6



Դեպք 6-րդը նկարագրում է ուղղակի ներդրումային կապերի բացահայտման համար միևնույն տնտեսության սահմաններում առկա կապերի կարևորությունը: Այս դեպքում բացատրված են ընդհանուր սկզբունքներ, այդ պատճառով հարցման մասնակից կարող դիտարկվել նշված ընկերություններից ցանկացածը: Լինելով ռեզիդենտ-ռեզիդենտ հարաբերություններ՝ Բ և Գ, ինչպես նաև Դ և Ե ընկերությունների միջև առկա ներդրումային հարաբերությունները որոշիչ դեր են խաղում Ա և Բ, ինչպես նաև Ա և Ե ընկերությունների միջև ուղղակի ներդրումների առկայության որոշման և չափերի գնահատման համար: Այսպես, Ա և Բ, Դ և Բ, Դ և Ա ընկերությունները հանդիսանում են նույն խմբի մեջ մտնող: Միևնույն ժամանակ նշենք, որ Ա և Ե, ինչպես նաև Բ և Ե ընկերությունների միջև գոյություն չունեն ներդրումային հարաբերություններ, որոնք ունեն առանձին արտացոլման կարիք, քանի որ ուղղակի ներդրումների կապը կտրվում է Գ և Ե ընկերությունների միջև:

Հավելված 8
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2012 թվականի մայիսի 29-ի թիվ 144-Ն որոշմամբ

Ձև թիվ 18.2

Միջազգային ֆինանսական կազմակերպություններ

1. Միջազգային կազմակերպությունները բաժանվում են երկու մասի.
1) միջազգային ոչ պետական կազմակերպություններ,
2) միջպետական միջազգային կազմակերպություններ:

2. Միջազգային ոչ պետական կազմակերպությունները (international non-governmental organizations) իրենց հերթին կարող են լինել շահույթ չհետապնդող հասարակական կազմակերպություններ (օրինակ՝ World Organization of the Scout Movement, International Committee of the Red Cross և այլն), ինչպես նաև միջազգային ընկերություններ/կորպորացիաներ, որոնք զբաղվում են շուկայական գործունեությամբ տարբեր երկրներում, օրինակ, Coca-Cola, Toyota կամ HSBC Group, որոնց հաճախ անվանում են նաև վերազգային կորպորացիաներ (multinational corporations): Այս կազմակերպությունները պետք է դիտարկվեն որպես միջազգային գործունեություն ծավալող առևտրային կամ հասարակական կազմակերպություններ, որոնց դասակարգումը պետք է իրականացվի ըստ «Դրամավարկային և ֆինանսական վիճակագրության ձեռնարկի» հատվածավորման սկզբունքների:

3. Միջազգային կազմակերպությունների մյուս տեսակի՝ միջպետական միջազգային կազմակերպությունների բնորոշման համար էլ առավելապես օգտագործվում է «միջազգային կազմակերպություն» տերմինը: Հենց այս իմաստով էլ այն օգտագործվում է պարզաբանման ընթացքում:

4. Միջազգային կազմակերպությունն իրենից ներկայացնում է անդամ երկրների իշխանությունների և/կամ այլ միջազգային կազմակերպությունների ղեկավարությունների միջև կնքված պաշտոնական համաձայնագրի հիման վրա գործող կազմակերպություն: Վերջինիս գոյությունը ճանաչվում է անդամ երկրների օրենսդրությամբ, և նշված պաշտոնական համաձայնագիրը հանդիսանում է միջազգային կազմակերպության կանոնադրությունը: Այն իրենից ներկայացնում է միջազգային իրավաբանական անձ և ենթակա է կարգավորման միջազգային օրենսդրությամբ:

5. Միջազգային կազմակերպություններն իրենց հերթին բաժանվում են երկու մասի.

1) Միջազգային ֆինանսական կազմակերպություններ, որոնք իրականացնում են ֆինանսական միջնորդություն միջազգային մակարդակով, այսինքն՝ իրականացնում են միջոցների վերաբաշխում տարբեր տնտեսությունների վարկատուների և վարկառուների միջև: Մի խումբ երկրների կենտրոնական բանկեր (ներառյալ Արժութային միության կենտրոնական բանկը) միջազգային ֆինանսական կազմակերպության օրինակ են: Այլ օրինակներ են հանդիսանում Արժույթի միջազգային հիմնադրամը, Համաշխարհային բանկի խմբի անդամ կազմակերպությունները, Ասիական զարգացման բանկը և այլն:

2) Այլ միջազգային կազմակերպություններ, որոնք տրամադրում են ոչ շուկայական բնույթի հասարակական ծառայություններ անդամ երկրներին, օրինակ՝ խաղաղապահության, կրթության, գիտության, տարատեսակ հետազոտությունների ոլորտներում (օրինակ՝ Միավորված ազգերի կազմակերպություն):

6. Միջազգային ֆինանսական կազմակերպությունները կարող են լինել տարածաշրջանային (օրինակ՝ Զարգացման և վերակառուցման եվրոպական բանկ) կամ համաշխարհային (օրինակ՝ Միջազգային ֆինանսական կորպորացիա): Միջազգային կազմակերպությունները որևէ երկրի ռեզիդենտ չեն համարվում: Դրանք ոչ ռեզիդենտ են համարվում այն երկրներում, որտեղ դրանք տեղակայված են, քանի որ չեն կարգավորվում կամ միայն մասամբ են կարգավորվում տվյալ երկրի օրենսդրությամբ: Ի հակադրություն միջազգային կազմակերպությանը՝ երկու և ավելի երկրների կառավարությունների սեփականության տակ

գտնվող առևտրային ընկերությունը չի հանդիսանում միջազգային կազմակերպություն: Միջազգային կազմակերպություն չի համարվում նաև միջազգային ֆինանսական ծառայություններ կամ օժանդակություն մատուցող կազմակերպությունը, որի միակ կամ հիմնական բաժնետեր է հանդիսանում մեկ երկրի կառավարությունը (օրինակ՝ KfW):

7. Կից ներկայացվում է նաև առավել հայտնի միջազգային ֆինանսական կազմակերպությունների ցանկը: Միևնույն ժամանակ տեղեկացնում ենք, որ ցանկն ամբողջական չէ, և այլ միջազգային ֆինանսական կազմակերպությունների դասակարգումը պետք է իրականացվի վերը նշված չափանիշների հիման վրա:

1) African Development Bank
2) Asian Development Bank (ADB)
3) Bank for International Settlements (BIS)
4) Black Sea Trade and Development Bank (BSTDB)
5) Caribbean Development Bank (CDB)
6) Central American Bank for Economic Integration (CABEI)
7) Corporacion Andina de Fomento (CAF)
8) East African Development Bank (EADB)
9) Eurasian Development Bank (EDB)
10) European Bank for Reconstruction and Development (EBRD)
11) European Commission (EC)
12) European Central Bank (ECB)
13) European Fund for Southeast Europe (EFSE)
14) European Investment Bank (EIB)
15) Inter-American Development Bank (IDB)
16) International Fund for Agricultural Development (IFAD)
17) International Monetary Fund (IMF)
18) Islamic Development Bank (IDB)
19) Nordic Development Fund (NDF)
20) Nordic Investment Bank (NIB)
21) OPEC Fund for International Development (OPEC Fund)
22) Organization for Economic Co-operation and Development (OECD)
23) Organization of Petroleum-Exporting Countries (OPEC)
24) West African Development Bank (BOAD)
25) World Bank Group
26) International Bank for Reconstruction and Development (IBRD)
27) International Development Association (IDA)
28) International Finance Corporation (IFC)
29) Multilateral Investment Guarantee Agency (MIGA)
30) International Centre for Settlement of Investment Disputes (ICSID)

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի մարտի 3-ի թիվ 93-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով հստակեցնել վարկային կազմակերպությունների հաշվետվությունների) լրացման կարգը, հիմք ընդունելով «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածը և 70-րդ հոդվածի 1-ին մասը, «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» և «իա» կետերը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի մարտի 3-ի ««Վարկային կազմակերպությունների հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 15-ը նոր խմբագրությամբ հաստատելու մասին» թիվ 93-Ն որոշմամբ հաստատված «Վարկային կազմակերպությունների հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 15-ում (այսուհետև՝ Կանոնակարգ 15) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Կանոնակարգ 15-ի 2-րդ կետի աղյուսակում՝

ա. 10-րդ կետում «Հաշվետվություն վարկային կազմակերպության և ոչ ռեզիդենտների միջև իրականացվող գործառնությունների վերաբերյալ» բառերը փոխարինել «Հաշվետվություն ոչ ռեզիդենտների հետ իրականացված գործառնությունների և ոչ ռեզիդենտների հետ ֆինանսական դիրքերի վերաբերյալ» բառերով,

բ. 20-րդ կետը ուժը կորցրած ճանաչել:

2) Կանոնակարգ 15-ի 3-րդ կետում՝

ա. աղյուսակի 10-րդ կետում «Հաշվետվություն վարկային կազմակերպության և ոչ ռեզիդենտների միջև իրականացվող գործառնությունների վերաբերյալ» բառերը փոխարինել «Հաշվետվություն ոչ ռեզիդենտների հետ իրականացված գործառնությունների և ոչ ռեզիդենտների հետ ֆինանսական դիրքերի վերաբերյալ» բառերով,

բ. աղյուսակի 19-րդ կետը ուժը կորցրած ճանաչել:

3) Կանոնակարգ 15-ի 4-րդ կետում՝

ա. երկրորդ պարբերությունից «, բացառությամբ թիվ 33 հաշվետվության» բառերը հանել,

բ. վերջին պարբերությունից հետո լրացնել նոր պարբերությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Սույն կանոնակարգի իմաստով՝ ակտիվի կամ պարտավորության համախառն հաշվեկշռային մնացորդ (արժեք) է համարվում վերջինիս գծով հաշվեկշռում գրանցված գումարը, ներառյալ՝ տոկոսները, տույժերը և տուգանքները, առանց նրա գծով ձևավորված պահուստի, կուտակված ամորտիզացիայի կամ արժեզրկման նվազեցման, եթե այդպիսիք կան:

Սույն կանոնակարգի իմաստով՝ ակտիվի կամ պարտավորության հաշվեկշռային մնացորդ է համարվում նրա համախառն հաշվեկշռային մնացորդը նվազեցրած նրա գծով ձևավորված պահուստը, կուտակված ամորտիզացիան և արժեզրկումը, եթե այդպիսիք կան:»:

4) Կանոնակարգ 15-ի 6-րդ կետի երրորդ պարբերությունում վերջին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Օրինակ՝ «10420 NV» տողում ներկայացվում է «10420» տողի հանրագումարում ընդգրկված տվյալ ակտիվի մայր գումարը, իսկ «10421 NI» տողում՝ «10421» տողի հանրագումարում ընդգրկվող հաշվեգրված և դեռ չվճարված տոկոսագումարին վերաբերող մասը:»:

5) Կանոնակարգ 15-ի 7-րդ կետը առաջին պարբերությունից հետո լրացնել նոր պարբերությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. ,Հաշվետվությունում հաշվեկշռային ֆինանսական գործիքները ընդգրկվում են համախառն հաշվեկշռային մնացորդներով:»:

6) Կանոնակարգ 15-ի 10-րդ կետում՝

ա. երրորդ պարբերությունում ««Ընդամենը» 14-րդ (դրամով) և 15-րդ արտարժույթով սյունակները» բառերը փոխարինել ««Ընդամենը (մայր գումարի մնացորդ)», «Ընդամենը (համախառն հաշվեկշռային մնացորդ)», «Ընդամենը (քանակ)» սյունակները» բառերով,

բ. յոթերորդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Միևնույն գումարը ցույց է տրվում 1.1, 1.2 և 1.3 կետերից մեկում (այսինքն, եթե ակտիվն արդեն երկարաձգվել է, ապա այն ցույց չի տրվում

---

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*

Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2012 թ. մայիսի 29-ին:

Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 28.06.2012 թ. (ՀՀԳՏ N18 (431)[1], 17.07.2012):

«1.1 Ժամկետային ակտիվներ» տողում, այլ արտացոլվում է «1.2 Երկարաձգված ակտիվներ» տողում, կամ եթե ակտիվը ժամկետանց է, ապա ժամկետանց մասը ցույց է տրվում «1.3 Ժամկետանց ակտիվներ» տողում, իսկ ժամկետում գտնվող մասը՝ «1.1 Ժամկետային ակտիվներ» տողում)։»,

գ. երեսուներորդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Սպառողական և այլ վարկեր. Այս խմբում ներառվում են տնային տնտեսություններին տրամադրվող բոլոր վարկերը, բացառությամբ «Հիփոթեքային վարկեր» խմբում ընդգրկվող վարկերի: Խմբում ընդգրկվում են նաև ֆիզիկական անձ հաճախորդներին՝ անշարժ գույքի ձեռքբերման և/կամ վերանորոգման նպատակով տրամադրված այն վարկերը, որոնք ապահովված չեն տվյալ անշարժ գույքով։»,

դ. երեսուներկուերորդ պարբերությունից «արժութային սվոփ» բառերը հանել,

ե. երեսուներկուերորդ պարբերությունում «միայն վերջին երկու սյունակները» բառերը փոխարինել «միայն վերջին վեց սյունակները» բառերով,

զ. երեսուներկուերորդ պարբերությունից հետո լրացնել նոր պարբերություններով՝ հետևյալ բովանդակությամբ.

««Ընդամենը (մայր գումարի մնացորդ)» սյունակում լրացվում են վարկային ներդրումների, ավանդների, լիզինգի, ֆակտորինգի և ռեպո համաձայնագրերի մայր գումարների մնացորդները հաշվետու ամսվա վերջի դրությամբ՝ ըստ համապատասխան արժույթների:

«Ընդամենը (համախառն հաշվեկշռային մնացորդ)» սյունակում լրացվում են վարկային ներդրումների, ավանդների, լիզինգի, ֆակտորինգի և ռեպո համաձայնագրերի համախառն հաշվեկշռային մնացորդներն հաշվետու ամսվա վերջի դրությամբ՝ ըստ համապատասխան արժույթների: Հաշվեգրված տույժերը և տուգանքները, որոնք հաշվարկվել են ժամկետանց կամ երկարաձգված ակտիվների նկատմամբ, ցույց են տրվում համապատասխանաբար սյունակի «Ժամկետանց ակտիվներ» կամ «Երկարաձգված ակտիվներ» տողերում:

«Ընդամենը (քանակ)» սյունակում լրացվում են վարկային ներդրումների, ավանդների, լիզինգի, ֆակտորինգի և ռեպո համաձայնագրերի քանակները՝ ըստ համապատասխան արժույթների: Միևնույն ակտիվի քանակը լրացվում է 1.1, 1.2, 1.3 տողերից միայն մեկում (օրինակ՝ սյունակում չաշխատող (ժամկետանց) ակտիվի քանակը լրացվում է միայն «Ժամկետանց ակտիվներ» տողում)։»,

է. երեսուներեքերորդ պարբերությունում առաջին նախադասությունը «ըստ համապատասխան արժույթների» բառերից հետո լրացնել «, ընդ որում՝ հաշվեկշռային հոդվածներն ընդգրկվում են համախառն հաշվեկշռային մնացորդներով» բառերով,

ը. երեսունչորերորդ պարբերությունում «արտացոլվում են չաշխատող վարկերի, ավանդների, բանկային հաշիվների, ֆակտորինգի, լիզինգի և այլ դեբիտորական պարտքերի մնացորդների հանրագումարը» բառերը փոխարինել «արտացոլվում են չաշխատող վարկերի, ավանդների, բանկային հաշիվների, ֆակտորինգի, լիզինգի և այլ դեբիտորական պարտքերի համախառն հաշվեկշռային մնացորդների հանրագումարը» բառերով,

թ. երեսունչորերորդ պարբերությունում վերջին նախադասությունից հետո լրացնել նոր նախադասությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

««Հետհաշվեկշռային ակտիվների հաշվարկային փոփոխություններ» սյունակում արտացոլվում են հետհաշվեկշռում հաշվառվող ակտիվների գծով հաշվարկված տոկոսների, տույժերի և տուգանքների գումարները, եթե այդպիսիք կան, հակառակ դեպքում սյունակը չի լրացվում։»:

7) Կանոնակարգ 15-ի 10.1-րդ կետը առաջին պարբերությունից հետո լրացնել նոր պարբերությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. «Հաշվետվությունում հաշվեկշռային արտարժութային հոդվածները և արտարժութային ռիսկ պարունակող դրամային հոդվածները ընդգրկվում են համախառն հաշվեկշռային մնացորդներով։»:

8) Կանոնակարգ 15-ի 11-րդ կետում՝

ա. առաջին պարբերությունից հետո լրացնել նոր պարբերությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. «Հաշվետվությունում հոդվածները ընդգրկվում են անվանական գումարների (մայր գումարների) մնացորդներով: Եթե հոդվածը չունի անվանական արժեք (մայր գումար), ապա այն հաշվետվության մեջ ընդգրկվում է համախառն հաշվեկշռային մնացորդով։»,

բ. ութերորդ, իններորդ և տասներորդ պարբերություններից «և արժութային սվոփը» բառերը հանել,

գ. ութերորդ, իններորդ, տասներորդ և քսանվեցերորդ պարբերություններում «հավատարմագրային կառավարման գործառնությունների» բառերը փոխարինել «արժեթղթերով գործարքների» բառերով,

դ. տասնվեցերորդ պարբերությունը «ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթերը» բառերից հետո լրացնել «, որոնք հաշվառվում են հետհաշվեկշռում» բառերով,

ե. տասնյոթերորդ պարբերությունը «Հայաստանի Հանրապետության պետական պարտատոմսերը» բառերից հետո լրացնել «, որոնք հաշվառվում են հետհաշվեկշռում» բառերով,

զ. տասնութերորդ պարբերությունից «և արժութային սվոփով վաճառված արտարժույթ» բառերը հանել,

է. տասնիններորդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

««Հաշվարկված ստացվելիք տոկոսներ» տողում լրացվում են ռեզիդենտներից և ոչ ռեզիդենտներից ստացվելիք հաշվեգրված անվանական տոկոսները: Չաշխատող ակտիվների դիմաց հաշվեգրված ստաց-

վելիք անվանական տոկոսների մեծությունը լրացվում է «Չաշխատող» սյունակի համապատասխան ենթասյունակներում և ընդգրկվում է «1. Ակտիվների մարման ժամկետայնության վերաբերյալ» բաժնի «Ընդամենը» սյունակի հաշվարկի մեջ:»,

ը. քսաներորդ պարբերությունը «ստացվելիք շահաբաժինները,» բառերից հետո լրացնել «տույժերը, տուգանքները,» բառերով,

թ. քսաներորդ պարբերության «բաժնեմասնակցության և ինքնարժեքի մեթոդներով» բառերը փոխարինել «ինքնարժեքի մեթոդով» բառերով,

ժ. քսանմեկերորդ պարբերությունը ուժը կորցրած ճանաչել,

ժա. քսանիներորդ պարբերությունից «և արժութային սվոփով» բառերը հանել,

ժբ. քսանիներորդ պարբերությունից հետո լրացնել նոր պարբերությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

««Պարտավորություններ ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթերի գծով» տողում արտացոլվում են ռեզիդենտներից և ոչ ռեզիդենտներից ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթերի վաճառքի արդյունքում առաջացած պարտավորությունների գումարները:»,

ժգ. երեսուներորդ պարբերությունում «վճարման ենթակա շահաբաժինները,» բառերից հետո լրացնել «տույժերը,տուգանքները,» բառերով,

ժդ. երեսուներկուերորդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

««Խոշոր» պարտավորություններ» տողում լրացվում են այն բոլոր պարտավորությունների անվանական արժեքների և անվանական տոկոսների հանրագումարները, որոնց հաշվեկշռային արժեքները, առանձին վերցված, կազմում են վարկային կազմակերպության ընդհանուր պարտավորությունների 5 և ավելի տոկոսը՝ առանց հաշվի առնելու փոխկապակցվածությունը:»:

9) Կանոնակարգ 15-ի 12-րդ կետում առաջին պարբերությունը «փոփոխության դեպքում» բառերից հետո լրացնել «, ինչպես նաև հաշվետվության ձևի փոփոխության դեպքում» բառերով:

10) Կանոնակարգ 15-ի 15-րդ կետում՝

ա. «արժութային սվոփի» բառերը հանել,

բ. առաջին պարբերությունից ութերորդ նախադասությունը հանել,

գ. տասներեքերորդ պարբերությունում «3-րդ և 4-րդ էջերում ժամկետային միջոցների բաժնի «գումար» սյունակներում ընդգրկվում են ակտիվների և պարտավորությունների՝ հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում կնքված գործարքների գումարները» բառերը փոխարինել «3-րդ և 4-րդ էջերում ժամկետային միջոցների բաժնի «գումար» սյունակներում ընդգրկվում են հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում, ինչպես նաև նախկինում կնքված պայմանագրերի համաձայն հաշվետու ժամանակաշրջանում փաստացի ներգրավված կամ տեղաբաշխված գումարներն ամբողջությամբ,» բառերով,

դ. տասնչորսերորդ պարբերությունից հետո լրացնել նոր պարբերությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. «3-րդ և 4-րդ էջերի առանձին աղյուսակներում ներկայացվում են հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում կնքված նոր գործարքների պայմանագրային գումարները՝ հազար դրամներով, ընդ որում, վարկային գծերի և օվերդրաֆտների գումարները չեն ընդգրկվում: Աղյուսակներում արտարժութային հոդվածները ներկայացվում են դրամական արտահայտությամբ՝ պայմանագրի կնքման օրվա դրությամբ Կենտրոնական բանկի կողմից հայտարարված՝ արժութային շուկայում ձևավորված միջին փոխարժեքներով:»:,

ե. քսաներկուերորդ պարբերությունից հետո լրացնել նոր պարբերությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Այն դեպքում, երբ վարկը տրամադրվելու է մի քանի փուլերով, ապա ամբողջ պայմանագրին վերաբերող գրավադրված գույքի ապահովագրության վճարը, գնահատման և այլ օժանդակ ծառայությունների դիմաց կատարվող վճարները ներառվում են յուրաքանչյուր փուլի տարեկան տոկոսադրույքի հաշվարկում՝ համամասնորեն բաշխվելով փուլերի միջև»:

11) Կանոնակարգ 15-ի 16-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«16. Թիվ 18 հաշվետվությունը բաղկացած է 3 աղյուսակներից: Տվյալները լրացվում են միայն հաշվետվության ազատ վանդակներում:

1) Հաշվետվության I աղյուսակում գրանցվում են վարկային կազմակերպության կողմից ոչ ռեզիդենտների հետ իրականացված բոլոր գործառնությունները, II աղյուսակում՝ միայն ոչ ռեզիդենտներից ներգրավված վարկերի և փոխառությունների ու դրանց սպասարկման վերաբերյալ տվյալները, իսկ III աղյուսակում՝ վարկային կազմակերպության պահանջների և պարտավորությունների դիրքերն իր ոչ ռեզիդենտ ուղղակի ներդրողի և իր հետ նույն խմբի մեջ մտնող ոչ ռեզիդենտ սուբյեկտների հետ ժամանակաշրջանի վերջի դրությամբ:

2) Հաշվետվությունը լրացվում է միլիոն դրամներով, բացառությամբ հաշվետվության II աղյուսակի 4-րդ սյունակի, որտեղ տվյալները լրացվում են համապատասխան արժույթի միավորով, ընդ որում, գումարները նշվում են ամբողջությամբ:

3) Հաշվետվության I աղյուսակում յուրաքանչյուր գործառնություն տարանջատվում է ըստ արժույթների. Հայաստանի Հանրապետության դրամ, ԱՄՆ դոլար, եվրո, ռուսական ռուբլի, ճապոնական իեն, ֆունտ ստեռլինգ, շվեյցարական ֆրանկ, իրանական ռիալ և այլ արտարժույթ (ներառյալ՝ բանկային ոսկին):

4) Հաշվետվության I աղյուսակի մեջ լրացվող արտարժույթով արտահայտված բոլոր գումարները (բացառությամբ՝ «Կապիտալի արժեթղթեր» բաժնի «Պասիվ» մասում լրացվող տվյալների) վերածվում են դրամի՝ հաշվետու եռամսյակի վերջին օրվա դրությամբ համապատասխան արժույթի գործող հաշվարկային փոխարժեքով կամ հաշվարկային փոխարժեքի միջոցով հաշվարկված քրոս-կուրսով:

5) Հաշվետվության մեջ գործիքների ժամկետայնությունը տարանջատվում է հետևյալ ձևով՝ «Կարճաժամկետ» տողում գրանցվում են տվյալներ այն գործիքների վերաբերյալ, որոնց պայմանագրային ժամկետը (վարկերի, ավանդների համար) կամ թողարկման պահին սկզբնական ժամկետայնությունը (արժեթղթերի համար) չի գերազանցում մեկ տարին ներառյալ, իսկ մնացածը գրանցվում է «Երկարաժամկետ» տողում:

6) Բոլոր բաժինները, բացառությամբ «Շահաբաժիններ», «Հաշվեգրված տոկոսներ», «Եկամուտներ/ծախսեր» տողերի, լրացվում են համապատասխան ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ՝ անվանական գումարների (մայր գումարների) մնացորդների հիման վրա:

7) «Շահաբաժիններ» հոդվածի «Ակտիվ» մասում լրացվում են տարեսկզբից աճողական տվյալներ սովորական բաժնետոմսերի գծով հայտարարված (ստացվելիք), արտոնյալ բաժնետոմսերի գծով հաշվեգրված (ստացվելիք) շահաբաժինների, իսկ «Պասիվ» մասում՝ տարեսկզբից աճողական տվյալներ սովորական բաժնետոմսերի մասով հայտարարված (վճարվելիք), արտոնյալ բաժնետոմսերի մասով հաշվեգրված (վճարվելիք) շահաբաժինների վերաբերյալ: Այն դեպքում, եթե արտոնյալ բաժնետոմսերի գծով շահաբաժինները չեն հաշվեգրվել, դրանք հաշվետվությունում արտացոլվում են այն պահին, երբ ճանաչվում են վճարման ենթակա: Եթե շահաբաժինները եռամսյակի ընթացքում փաստացի վճարվել են, դրանք չեն նվազեցվում շահաբաժինների կուտակային գումարից:

8) «Ակտիվ» մասի «Հաշվեգրված տոկոսներ» տողերում լրացվում են ոչ ռեզիդենտներից ձեռք բերված պարտքային արժեթղթերի, նրանց տրամադրված վարկերի և փոխառությունների գծով հաշվեգրված տոկոսների, իսկ «Պասիվ» մասում՝ ոչ ռեզիդենտներին վաճառված պարտքային արժեթղթերի, նրանցից ներգրավված վարկերի և ավանդների գծով հաշվեգրված տոկոսների վերաբերյալ տվյալներ: Տվյալները լրացվում են աճողական կարգով՝ տարեսկզբից մինչև հաշվետու եռամսյակի վերջին օրվա դրությամբ հաշվեգրված տոկոսները: Ընդ որում, վարկերի և փոխառությունների դիմաց հաշվեգրված տոկոսները լրացնելիս անհրաժեշտ է տարանջատել դրանք ըստ արժույթների, այսինքն՝ յուրաքանչյուր արժույթով ներգրավված (տրամադրված) ավանդների կամ վարկերի գծով հաշվեգրված տոկոսները անհրաժեշտ է լրացնել համապատասխան արժույթի սյունակի մեջ, այլ ոչ թե, օրինակ, բոլոր հաշվեգրված ծախսերը (եկամուտները) արտացոլել դրամային սյունակի մեջ, այն պատճառով, որ տոկոսային եկամուտների հաշվեգրումը կատարվում է դրամով: Այս տողում չեն ներառվում առանձին գործիքների գծով ոչ տոկոսային եկամուտներն ու ծախսերը:

9) Ֆինանսական ածանցյալների գծով «Եկամուտներ/ծախսեր» տողի «Ակտիվ» մասում լրացվում են ոչ ռեզիդենտների հետ կնքված ածանցյալ գործիքների (ֆյուչերս, ֆորվարդ, սվոփ, օպցիոն) իրական արժեքի փոփոխության գծով եկամուտները (ոչ տոկոսային եկամուտներ), ինչպես նաև ածանցյալ գործիքների գծով տոկոսային եկամուտները, իսկ «Պասիվ» մասում՝ ոչ ռեզիդենտների հետ կնքված ածանցյալ գործիքների իրական արժեքի փոփոխության գծով ծախսերը (ոչ տոկոսային ծախսեր), ինչպես նաև ածանցյալ գործիքների գծով տոկոսային ծախսերը: Ընդ որում, տվյալները կարող են լրացվել համախմբված ձևով դրամով սյունակի մեջ:

10) Առաջին եռամսյակի հաշվետվությունում անհրաժեշտ է ներկայացնել միայն հաշվետու ժամանակաշրջանի գործիքների գծով շահաբաժինները, հաշվեգրված տոկոսները և եկամուտներ/ծախսերը՝ թողնելով նախորդ ժամանակաշրջանի համապատասխան տողերը դատարկ: «Կապիտալի արժեթղթեր» բաժնի «Ակտիվ» մասում լրացվում են վարկային կազմակերպության կողմից որևէ ոչ ռեզիդենտ կազմակերպության բաժնետիրական կապիտալում կատարված ուղղակի և պորտֆելային ներդրումները, իսկ «Պասիվ» մասում՝ վարկային կազմակերպության բաժնետիրական կապիտալում ոչ ռեզիդենտների կողմից կատարված ուղղակի և պորտֆելային ներդրումները:

11) Կապիտալի արժեթղթերի հետ կապված գործարքների բաժանումը «Ուղղակի ներդրումների» և «Պորտֆելային ներդրումների»՝ կատարվում է հետևյալ սկզբունքներով.

12) Ուղղակի (նշանակալից մասնակցություն) համարվում են այն ներդրումները, որոնց գումարը կազմում է ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոսը, իսկ պորտֆելային (ոչ նշանակալից մասնակցություն)՝ այն ներդրումները, որոնց գումարը կազմում է ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի մինչև 10 տոկոսը:

13) Կապիտալ արժեթղթերում ներառվում են նաև արտոնյալ բաժնետոմսերը, որոնք ապահովում են իրավունք ընկերության մնացորդային արժեքի նկատմամբ: Եթե ընկերության արտոնյալ բաժնետոմսերը գտնվում են ոչ ռեզիդենտ ուղղակի ներդրողի մոտ, ապա ներառվում են ուղղակի ներդրումներում, իսկ եթե դրանք գտնվում են ոչ ռեզիդենտ պորտֆելային ներդրողի մոտ, ապա ներառվում են պորտֆելային ներդրումներում:

14) «Ներդրումային հիմնադրամներում փայաբաժիններ» հոդվածը լրացվում է միայն «Ակտիվ» մասում՝ տարեսկզբից աճողական տվյալներ ոչ ռեզիդենտ ներդրումային հիմնադրամներում ունեցած փայա-

բաժինների դիրքի վերաբերյալ: Այս բաժինը տարանջատվում է ըստ ժամկետայնության սկզբունքի՝ կարճաժամկետ և երկարաժամկետ (ժամկետայնության որոշումը տես վերևում): «Շահաբաժիններ» մասում լրացվում են ոչ ռեզիդենտ ներդրումային հիմնադրամներում ունեցած փայաբաժինների գծով հայտարարված (ստացվելիք) շահաբաժինների վերաբերյալ տվյալներ ըստ արժութային բաշխվածքի:

15) «Պարտքային արժեթղթեր» բաժնի «Ակտիվ» մասում լրացվում են ոչ ռեզիդենտների կողմից թողարկված և վարկային կազմակերպության կողմից ձեռք բերված ցանկացած տեսակի պարտքային արժեթղթերի և դրանց հետ կապված ստացվելիք տոկոսների վերաբերյալ տվյալներ, իսկ «Պասիվ» մասում՝ հաշվետու վարկային կազմակերպության կողմից թողարկված և ոչ ռեզիդենտների կողմից ձեռք բերված պարտքային արժեթղթերի և դրանց հետ կապված վճարվելիք տոկոսների վերաբերյալ տվյալներ: Այս բաժնում ներառվում են պարտատոմսերը, մուրհակները և այլ արժեթղթերը:

16) «Կանխիկ արտարժույթ» բաժնում լրացվում են վարկային կազմակերպության կանխիկ արտարժութային միջոցների վերաբերյալ տվյալներ՝ ներառյալ կանխիկը ճանապարհին:

17) «Վարկեր, այդ թվում՝ օվերդրաֆտ և վարկային քարտեր» բաժնի «Ակտիվ» մասում լրացվում են վարկային կազմակերպության կողմից ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի և դրանց հետ կապված ստացվելիք տոկոսների (հաշվեգրված, սակայն չստացված տոկոսների) հաշվեկշռային անվանական գումարները: «Պասիվ» մասում լրացվում են ոչ ռեզիդենտների կողմից վարկային կազմակերպությանը տրամադրված վարկերի և դրանց հետ կապված վճարվելիք տոկոսների (հաշվեգրված չվճարված տոկոսների) գումարները: Ընդ որում՝ վարկային գծերի և օվերդրաֆտների ծավալները գրանցվում են փաստացի մնացորդի (օգտագործված մասի) չափով: Այս բաժնում պետք է ներառել նաև ռեպո գործառնությունների (բացառությամբ արտարժութային ռեպո գործարքների), ֆակտորինգի և ֆինանսական վարձակալության հետևանքով առաջացած պահանջներն ու պարտավորությունները:

18) «Ավանդներ/փոխառություններ» բաժինը լրացվում է «Վարկեր, այդ թվում՝ օվերդրաֆտ և վարկային քարտեր» բաժնի լրացման սկզբունքով: «Ավանդներ/փոխառություններ» բաժնում լրացվում են բանկային հաշիվների, ժամկետային ու ցպահանջ ավանդների, փոխառությունների, ինչպես նաև թղթակցային «նոստրո» և «լորո» հաշիվների ու դրանց հետ կապված ստացվելիք (վճարվելիք) տոկոսների վերաբերյալ տվյալները:

19) Ֆինանսական ածանցյալ գործիքները ներառում են ոչ ռեզիդենտների հետ ֆորվարդ, ֆյուչերս, օպցիոն, սվոփ և այլ ածանցյալ գործիքների դիրքերը, ընդ որում՝ գործիքի իրական արժեքի նվազումը արտացոլվում է «Պասիվ» մասում, իսկ իրական արժեքի աճը՝ «Ակտիվ» մասում:

20) «Ապրանքների, ծառայությունների և կատարված աշխատանքների դիմաց կանխավճարներ և հետաձգված վճարներ» բաժնի «Ակտիվ» մասում լրացվում են տվյալներ ապրանքների, ծառայությունների դիմաց վարկային կազմակերպության կողմից տրված կանխավճարները, ինչպես նաև ոչ ռեզիդենտներից ապրանքների կամ ծառայությունների դիմաց ստացվելիք գումարները: «Պասիվ» մասում լրացվում են վարկային կազմակերպությանը ծառայությունների դիմաց տրված կանխավճարների, ինչպես նաև ստացված ապրանքների, ծառայությունների և կատարված աշխատանքների դիմաց ոչ ռեզիդենտներին վճարվելիք գումարների վերաբերյալ: Այս բաժնի «Ակտիվ» մասում լրացվում են նաև վարկային կազմակերպության կողմից ոչ ռեզիդենտներին, իսկ «Պասիվ» մասում՝ ոչ ռեզիդենտների կողմից վարկային կազմակերպությանը մատուցված ծառայությունների (փոխանցումներ, հավատարմագրային կառավարում, արժեթղթերի փաթեթի կառավարում, խորհրդատվական ծառայություններ, պահառություն, փոխարկումներ, երաշխիքներ, ակրեդիտիվներ կամ այլ նմանատիպ ծառայություններ), վարկերի սպասարկման վճարների, վարկային գծերի չօգտագործված մասի դիմաց հաշվարկվող եկամուտների/ծախսերի գծով ստացվելիք/վճարվելիք գումարների վերաբերյալ տվյալներ: Աշխատավարձի գծով վճարվելիք գումարները ներառվում են «Այլ գործառնությունների դիմաց ստացվելիք/վճարվելիք գումարներ»բաժնում:

21) «Այլ գործառնությունների դիմաց ստացվելիք/վճարվելիք գումարներ» բաժնում լրացվում են այն բոլոր գործառնությունները, որոնք տվյալ վարկային կազմակերպությունը իրականացնում է ոչ ռեզիդենտների հետ և որոնք չեն հանդիսանում վերը նշված գործառնություններից և ոչ մեկը:

22) «Ժամկետանց պահանջներ և պարտավորություններ» բաժնի «Ակտիվ» մասում լրացվում են հաշվեկշռային տվյալներ վարկային կազմակերպության կողմից ոչ ռեզիդենտների նկատմամբ ունեցած ժամկետանց պահանջների, իսկ «Պասիվ» մասում՝ ոչ ռեզիդենտների նկատմամբ ունեցած ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ:

23) «Արտահաշվեկշռում հաշվառված ակտիվներ» բաժնում լրացվում է տեղեկատվություն հաշվեկշռից դուրս գրված վարկերի, դեբիտորական պարտքերի և դուրս գրված այլ ակտիվների վերաբերյալ, ընդ որում, դրանց գծով նախկինում հաշվեգրված տոկոսները ներառվում են գործիքի գումարի մեջ: Յուրաքանչյուր նման գործառնություն ներկայացվում է արժութային բաշխվածքով և վերածվում է դրամի՝ հաշվետու եռամսյակի վերջին օրվա դրությամբ համապատասխան արժույթի գործող հաշվարկային փոխարժեքով:

24) «Հաշվեկշռից դուրս գրված ակտիվների գծով կորուստների վերականգնում» բաժնում լրացվում են այն մարումները, որոնք ստացվել են հաշվեկշռից դուրս գրված վարկերի, դեբիտորական պարտքերի և այլ ակտիվների դիմաց:

25) «Արտահաշվեկշռից դուրս գրված/ներված ակտիվներ և պարտավորություններ» բաժնի «Ակտիվ» մասում լրացվում են վարկային կազմակերպության կողմից ներված վարկերը, դեբիտորական պարտքերը և ներված այլ ակտիվները, ինչպես նաև դրանց հետ կապված բոլոր եկամուտները, իսկ «Պասիվ» մասում գրանցվում են վարկային կազմակերպությանը ներված վարկերը, կրեդիտորական պարտքերը և այլ պարտավորություններ, ինչպես նաև դրանց հետ կապված բոլոր ծախսերը:

26) Հաշվետվության I մասի 4-րդ կետի՝ «Վարկեր, այդ թվում՝ օվերդրաֆտ և վարկային քարտեր» բաժնի «Պասիվ» մասի վերաբերյալ մանրամասն տվյալները հավաքագրվում են սույն հաշվետվության II աղյուսակում: Հաշվեկշռային տվյալները լրացվում են անվանական, այլ ոչ թե ամորտիզացված արժեքով: Հաշվետվության II աղյուսակը լրացվում է հետևյալ կերպ.

27) 2-րդ սյունակում նշվում է վարկ տրամադրող ոչ ռեզիդենտի գրանցման երկիրը: Այն դեպքում, երբ վարկը տրամադրված է միջազգային ֆինանսական կազմակերպության կողմից, սյունակի մեջ նշվում է կազմակերպության անունը (օրինակ, Միջազգային ֆինանսական կորպորացիա): (Միջազգային կազմակերպությունների բնորոշումը տրված է Հավելված 18.2-ում):

28) 3-րդ սյունակում նշվում է վարկ տրամադրող ոչ ռեզիդենտի հատվածի պատկանելությունը՝ ըստ հետևյալ տառերի.

ա) Ֆ-ն ընդգրկում է ոչ ռեզիդենտ բանկերը, վարկային կազմակերպությունները, ներդրումային ընկերությունները, ներդրումային հիմնադրամները, փոխադարձ հիմնադրամները (mutual funds), դրամական շուկայի հիմնադրամները, բորսաները, այլ ոչ բանկային ֆինանսական հաստատությունները (բացառությամբ ապահովագրական ընկերությունների և կենսաթոշակային հիմնադրամների),

բ) Մ-ն ընդգրկում է միջազգային ֆինանսական կազմակերպությունները (միջազգային ֆինանսական կազմակերպությունների ավելի մանրամասն բացատրությունները տես «Միջազգային ֆինանսական կազմակերպություններ» 18.2 հավելվածում),

գ) Պ-ն ընդգրկում է այլ պետությունների կառավարությունները (կենտրոնական և տեղական մակարդակներով),

դ) Ի-ն ընդգրկում է Ֆ-ում և Պ-ում չներառված ոչ ռեզիդենտ կազմակերպությունները (այսինքն՝ պետական մասնակցությամբ կազմակերպությունները, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ պետական կազմակերպությունները, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող սուբյեկտները և շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունները, ապահովագրական ընկերությունները և կենսաթոշակային հիմնադրամները),

ե) Եթե Ֆ-ն, Մ-ն, Պ-ն կամ Ի-ն տվյալ վարկային կազմակերպության համար հանդիսանում է ուղղակի ներդրող կամ նույն խմբի մեջ մտնող սուբյեկտ (ուղղակի ներդրողի և նույն խմբի մեջ մտնող սուբյեկտների մանրամասն սահմանումները Հավելված 18.1-ում), ապա համապատասխան տառերը գրվում են շտրիխներով (Ֆ’, Մ’, Պ’ կամ Ի’):

29) 4-րդ սյունակում լրացվում է յուրաքանչյուր պարտքային գործիքի տեսակը, այսինքն՝ վարկ, ռեպո գործառնություն, օվերդրաֆտ կամ օվերնայթ:

30) 5-րդ, 6-րդ սյունակներում նշվում են վարկի գումարը վարկային պայմանագրում նշված արժույթով (գումարը լրացվում է ամբողջությամբ) և արժույթի՝ Ստանդարտների միջազգային կազմակերպության կոդը:

31) 7-րդ սյունակում լրացվում է վարկային պայմանագրում նշված վարկի ներգրավման ամսաթիվը՝ հետևյալ ֆորմատով՝ 25/03/12:

32) 8-րդ սյունակում լրացվում է վարկային պայմանագրում նշված վարկի մարման ժամկետը՝ հետևյալ ֆորմատով՝ 25/06/17:

33) Եթե վարկային պայմանագրով նախատեսված չէ մարման ժամկետ և տոկոսադրույք, այսինքն՝ վարկը ստացվում է առանձին մասնաբաժիններով և դրանցից յուրաքանչյուրի համար սահմանված են առանձին պայմաններ, ապա յուրաքանչյուր մասնաբաժնի համար տվյալները լրացվում են առանձին տողերի համապատասխան սյունակներում:

34) 9-րդ, 10-րդ, 11-րդ և 12-րդ սյունակներում լրացվում են վարկի սպասարկման պայմանները, համապատասխանաբար՝ վարկի դիմաց տոկոսագումարի վճարման պարբերականությունը (միանվագ, ամսական, եռամսյակային, կիսամյակային, տարեկան կամ ոչ պարբերական), տոկոսագումարի առաջին վճարման ամսաթիվը, հիմնական գումարի մարման պարբերականությունը (միանվագ, ամսական, եռամսյակային, կիսամյակային, տարեկան կամ ոչ պարբերական) և վարկի հիմնական գումարի առաջին վճարման ամսաթիվը: Բոլոր ամսաթվերը պետք է նշվեն հետևյալ ֆորմատով՝ 25/06/2010: 13-րդ սյունակում նշվում է վարկի տոկոսադրույքը: Եթե, օրինակ, տոկոսադրույքը կազմում է ԼԻԲՕՐ գումարած 5%, ապա այն լրացվում է «ԼԻԲՕՐ+5»:

35) 14-րդ սյունակում լրացվում են հաշվետու եռամսյակի սկզբի դրությամբ ոչ ռեզիդենտներից ներգրավված վարկերի անվանական գումարների մնացորդները:

36) 15-րդ սյունակում նշվում են հաշվետու եռամսյակի ընթացքում տվյալ վարկային պայմանագրի շրջանակներում կատարված վարկային մուտքերը:

37) 16-րդ սյունակում լրացվում է հաշվետու եռամսյակում վարկի մայր գումարի մարմանն ուղղված վճարումների ծավալը: Տվյալ եռամսյակում մայր գումարի միանվագ մարումը նշվում է ամբողջ ծավալով:

38) 17-րդ և 18-րդ սյունակներում լրացվում են համապատասխանաբար եռամսյակի ընթացքում վարկի դիմաց հաշվեգրված և փաստացի վճարված տոկոսագումարները:

39) 19-րդ սյունակում լրացվում են եռամսյակի վերջի դրությամբ ոչ ռեզիդենտներից ներգրավված վարկերի անվանական գումարների մնացորդները:

40) 20-րդ սյունակում լրացվում են հաշվեգրված, սակայն եռամսյակի վերջի դրությամբ չվճարված տոկոսագումարները:

41) Հաշվետվության III աղյուսակում լրացվում են վարկային կազմակերպության պահանջների և պարտավորությունների դիրքերն իր ոչ ռեզիդենտ ուղղակի ներդրողի, ոչ ռեզիդենտ ուղղակի ներդրման ընկերության և իր հետ նույն խմբի մեջ մտնող ոչ ռեզիդենտ սուբյեկտների հետ ժամանակաշրջանի վերջի դրությամբ: Յուրաքանչյուր սուբյեկտի նկատմամբ պահանջներն ու պարտավորությունները լրացվում են առանձին:

42) Ուղղակի ներդրող է համարվում այն ոչ ռեզիդենտ սուբյեկտը, որն իրականացրել է ներդրումներ վարկային կազմակերպության բաժնետիրական կապիտալում կամ ձեռք է բերել փայամասնակցություն և ստացել է ընկերության ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 10% և ավելին: Համապատասխանաբար, ուղղակի ներդրման ընկերություն է համարվում այն ոչ ռեզիդենտ կազմակերպությունը, որի կապիտալում վարկային կազմակերպությունն ունի 10% և ավելի ձայնի իրավունք տվող մասնակցություն:

43) Նույն խմբի մեջ մտնող են համարվում վարկային կազմակերպության հետ անուղղակիորեն ուղղակի ներդրման հարաբերություններում ներգրավված ոչ ռեզիդենտ ընկերությունները, որոնք ունեն ընդհանուր ուղղակի ներդրող, կամ հանդիսանում են ուղղակի ներդումային շղթայի մի մաս (օրինակ. նույն մայր ընկերության՝ տարբեր երկրներում գտնվող երկու ուղղակի ներդրումներով ձեռնարկությունները):

44) Ուղղակի ներդրողների և նույն խմբի մեջ մտնող կազմակերպությունների ավելի մանրամասն նկարագրությունը տրված է «Ուղղակի ներդրումներ և նույն խմբի մեջ մտնող կազմակերպություններ» 18.1 հավելվածում:

45) Այս բաժնում ուղղակի ներդրողների կամ նրանց հետ կապված անձանց նկատմամբ պահանջը կամ պարտավորությունը պետք է լրացվեն այն դեպքում, եթե դրանք գերազանցում են 5 մլն դրամը (չի վերաբերվում հաշվեգրված տոկոսներին, որոնք ներառվում են յուրաքանչյուր գործիքի հետ մեկտեղ):

46) Աղյուսակում գործիքները ներկայացվում են խմբավորված ըստ տեսակների, ընդ որում՝ տարանջատումն իրականացվում է ըստ ժամկետայնության սկզբունքի:

47) Աղյուսակի վերջում լրացվում են ուղղակի ներդրողների և նույն խմբի մեջ մտնող սուբյեկտների գործիքների գծով հաշվեգրված տոկոսային եկամուտները/ծախսերը, իսկ բաժնետիրական կապիտալում ներդրման գծով՝ հայտարարված շահաբաժինները՝ համախմբված ձևով: Տվյալները լրացվում են տարեսկզբից աճողական կարգով: «Հաշվեգրված տոկոսային եկամուտներ/ծախսեր, հայտարարված շահաբաժիններ ոչ ռեզիդենտ ուղղակի ներդրող կամ նույն խմբի մեջ մտնող ֆինանսական ընկերությունների նկատմամբ (բացառությամբ ապահովագրական ընկերությունների և կենսաթոշակային հիմնադրամների)» տողում լրացվում են միայն ֆինանսական ընկերություններ (բացառությամբ ապահովագրական ընկերությունների և կենսաթոշակային հիմնադրամների) հանդիսացող ուղղակի ներդրողների, ուղղակի ներդրման ձեռնարկությունների և նույն խմբի մեջ մտնող ընկերությունների գծով հաշվարկված տոկոսային եկամուտները/ծախսերը, կամ հայտարարված շահաբաժինները:

48) Հաշվետվության III աղյուսակը լրացվում է հետևյալ կերպ.

ա. 1-ին սյունակում լրացվում է տեղեկատվություն սուբյեկտի վերաբերյալ՝ ուղղակի ներդրող է (ուղղակի ներդրող), ուղղակի ներդրման ընկերություն (ուղղակի ներդրման ընկերություն), թե նույն խմբի մեջ մտնող (նույն խմբի մեջ մտնող ընկերություն):

բ. 2-րդ սյունակում նշվում է տվյալ սուբյեկտի գրանցման երկիրը (ֆիզիկական անձանց դեպքում՝ ռեզիդենտության երկիրը): Այն դեպքում, երբ ուղղակի ներդրողը կամ նույն խմբի մեջ մտնող ընկերությունը հանդիսանում է միջազգային ֆինանսական կազմակերպություն, սյունակի մեջ նշվում է կազմակերպության անունը (օրինակ, Միջազգային ֆինանսական կորպորացիա): (Միջազգային կազմակերպությունների բնորոշումը տրված է Հավելված 18.2-ում):

գ. 3-րդ սյունակում նշվում է տվյալ սուբյեկտի հատվածի պատկանելությունը՝ աղյուսակ II-ի նմանությամբ (տառերը չեն նշվում շտրիխով):

դ. 4-րդ և 9-րդ սյունակներում լրացվում են համապատասխանաբար տվյալ սուբյեկտի բաժնետիրական կապիտալում ունեցած ներդրումները (ներառյալ՝ արտոնյալ բաժնետոմսերի տեսքով), իսկ պարտավորություններում՝ նրա կողմից տվյալ ընկերության բաժնետիրական կապիտալում ներդրումները (ներառյալ՝ արտոնյալ բաժնետոմսերը):

ե. 5-րդ և 10-րդ սյունակներում լրացվում են համապատասխանաբար վարկերի և փոխառությունների գծով «Պահանջներ» մասում տվյալ սուբյեկտին տրամադրված վարկերը, փոխառությունները, ռեպո համաձայնագրերով տրամադրված միջոցները, օվերդրաֆտները, ֆինանսական լիզինգը, ֆակտորինգը և վարկային գծերի օգտագործված մասերը, իսկ «Պարտավորություններ» մասում՝ նրանից ստացված վար-

կերը, փոխառությունները, ռեպո համաձայնագրերով ստացված միջոցները, օվերդրաֆտները, ֆինանսական լիզինգը, ֆակտորինգը և վարկային գծերի օգտագործված մասերը:

զ. 6-րդ և 11-րդ սյունակներում լրացվում են համապատասխանաբար ավանդների գծով «Պահանջներ» մասում վարկային կազմակերպության կողմից տվյալ սուբյեկտի մոտ ներդրված ցպահանջ և ժամկետային ավանդները, թղթակցային հաշիվները և դրանց հավասարեցված միջոցները, իսկ «Պարտավորություններ» մասում՝ վարկային կազմակերպությունում նրա կողմից ներդրված ցպահանջ և ժամկետային ավանդները, թղթակցային հաշիվները և դրանց հավասարեցված միջոցները:

է. 7-րդ և 12-րդ սյունակներում լրացվում են համապատասխանաբար պարտատոմսերի և այլ պարտքային արժեթղթերի գծով «Պահանջներ» մասում՝ տվյալ սուբյեկտի պարտատոմսերում և այլ պարտքային արժեթղթերում վարկային կազմակերպության իրականացրած ներդրումները, իսկ «Պարտավորություններ» մասում՝ նրա կողմից իրականացրած ներդրումները վարկային կազմակերպության պարտատոմսերում և այլ պարտքային արժեթղթերում:

ը. 8-րդ և 13-րդ սյունակներում լրացվում են տվյալ սուբյեկտի նկատմամբ ունեցած այն բոլոր պահանջներն ու պարտավորություններն են, որոնք ներառված չեն նախորդ խմբերում:»:

12) Կանոնակարգ 15-ի 20.1 կետի առաջին պարբերությունում «ըստ հաշվեկշռային ցուցանիշների» բառերը փոխարինել «ըստ համախառն հաշվեկշռային մնացորդների» բառերով:

13) Կանոնակարգ 15-ի 20.3 կետը ուժը կորցրած ճանաչել:

14) Կանոնակարգ 15-ի 26-րդ կետում 3-րդ ենթակետը ուժը կորցրած ճանաչել:

15) Կանոնակարգ 15-ի Չև թիվ 1 հաշվետվությունում՝

ա. «31120 Այլ պարտավորություններ կառավարության նկատմամբ» տողից հետո լրացնել «31120NV Այլ պարտավորություններ կառավարության նկատմամբ (անվանական մնացորդ)» տողով,

բ. 12, 13 և 14 բաժինները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելված 1-ի (կցվում է):

16) Կանոնակարգ 15-ի Չև թիվ 5 հաշվետվությունում՝

ա. 2.7 կետը «Օվերդրաֆտների» բառից հետո լրացնել «և վարկային գծերի» բառերով,

բ. 3.17 և 4.20 կետերն ուժը կորցրած ճանաչել,

17) Կանոնակարգ 15-ի Չև թիվ 6 հաշվետվությունը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելված 2-ի (կցվում է):

18) Կանոնակարգ 15-ի Չև թիվ 17 հաշվետվությունում՝

ա. 1.11 և 2.14 կետերը ուժը կորցրած ճանաչել,

բ. «Հաշվետվություն տնտեսության իրական հատվածի հետ հաշվետու ժամանակահատվածում կնքվող նոր գործարքների արդյունավետ տոկոսադրույքների վերաբերյալ (ներգրավված միջոցների)» բառերը փոխարինել «Հաշվետվություն տնտեսության իրական հատվածից հաշվետու ժամանակաշրջանում ներգրավված միջոցների արդյունավետ տոկոսադրույքների վերաբերյալ» բառերով,

գ. լրացնել նոր «III.I. Տնտեսության իրական հատվածի հետ հաշվետու ժամանակահատվածում կնքվող նոր գործարքների պայմանագրային գումարների վերաբերյալ (ներգրավված միջոցներ)» աղյուսակով՝ հետևյալ բովանդակությամբ.

«III.I. Տնտեսության իրական հատվածի հետ հաշվետու ժամանակահատվածում կնքվող նոր գործարքների պայմանագրային գումարների վերաբերյալ (ներգրավված միջոցներ)

(հզ. դրամ)

	Պայմանագրային գումար	
	ՀՀ դրամ	արտարժույթ
1. Տնային տնտեսություններից ներգրավված միջոցներ		
2. Ոչ ֆինանսական կազմակերպություններից ներգրավված միջոցներ		

»,

դ. 3.6 և 4.4 կետերում «օվերդրաֆտներ» բառերից հետո լրացնել «և վարկային գծեր» բառերով,

ե. լրացնել նոր «IV.I. Տնտեսության իրական հատվածի հետ հաշվետու ժամանակահատվածում կնքվող նոր գործարքների պայմանագրային գումարների վերաբերյալ (տեղաբաշխված միջոցներ)» աղյուսակով՝ հետևյալ բովանդակությամբ.

«IV.I. Տնտեսության իրական հատվածի հետ հաշվետու ժամանակահատվածում կնքվող նոր գործարքների պայմանագրային գումարների վերաբերյալ (տեղաբաշխված միջոցներ)

(հզ. դրամ)

	Պայմանագրային գումար	
	ՀՀ դրամ	արտարժույթ
1. Տնային տնտեսություններին տրամադրված միջոցներ		
2. Ոչ ֆինանսական կազմակերպություններին տրամադրված միջոցներ		

»:

զ. «Հաշվետվություն տնտեսության իրական հատվածի հետ հաշվետու ժամանակահատվածում կնքվող Նոր գործարքների արդյունավետ տոկոսադրույքների վերաբերյալ (Տեղաբաշխված միջոցների)» բառերը փոխարինել «Հաշվետվություն տնտեսության իրական հատվածում հաշվետու ժամանակաշրջանում տեղաբաշխված միջոցների արդյունավետ տոկոսադրույքների վերաբերյալ» բառերով,

է. «(Նոր գործարքներ)» բառերը հանել:

19) Կանոնակարգ 15-ի Ձև թիվ 18 հաշվետվությունը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելված 3-ի (կցվում է):

20) Կանոնակարգ 15-ի Ձև թիվ 33 հաշվետվությունը հանել:

21) Կանոնակարգ 15-ը լրացնել Ձև 18.1-ով՝ համաձայն հավելված 4-ի (կցվում է):

22) Կանոնակարգ 15-ը լրացնել Ձև 18.2-ով՝ համաձայն հավելված 5-ի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրվան հաջորդող ամսվա 1-ին, բացառությամբ սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության, 2-րդ ենթակետի «ա» պարբերության 12-րդ, 19-րդ, 21-րդ, 22-րդ կետերի, որոնք ուժի մեջ են մտնում 2013 թվականի հունվարի 1-ին:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
1 հունիսի 2012 թ., N 145-Ն

Հավելված 1
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2012 թվականի մայիսի 29-ի թիվ 145-Ն որոշմամբ

12 Շահույթով կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ

120 Շահույթով կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող արժեթղթեր

1200 Կենտրոնական բանկերի կողմից թողարկված արժեթղթեր

I2000 Կենտրոնական բանկերի կողմից թողարկված առանց տոկոսի արժեթղթեր

I2000NI Կենտրոնական բանկերի կողմից թողարկված առանց տոկոսի արժեթղթեր (զեղչ)

I2001 Կենտրոնական բանկերի կողմից թողարկված տոկոսային արժեթղթեր

I2001NI Կենտրոնական բանկերի կողմից թողարկված տոկոսային արժեթղթեր (հաշվեգրված անվանական տոկոս)

1201 Պետական արժեթղթեր

I2010 Պետական առանց տոկոսի արժեթղթեր

I2010NI Պետական առանց տոկոսի արժեթղթեր (զեղչ)

I2011 Պետական տոկոսային արժեթղթեր

I2011NI Պետական տոկոսային արժեթղթեր (հաշվեգրված անվանական տոկոս)

1202 Ոչ պետական արժեթղթեր

I2020 Սովորական բաժնետոմսեր

I2021 Արտոնյալ բաժնետոմսեր

I2022 Այլ փայամասնակցություններ

I2023 Ոչ պետական առանց տոկոսի արժեթղթեր

I2023NI Ոչ պետական առանց տոկոսի արժեթղթեր (զեղչ)

I2024 Ոչ պետական տոկոսային արժեթղթեր

I2024NI Ոչ պետական տոկոսային արժեթղթեր (հաշվեգրված անվանական տոկոս)

1203 Միջազգային ֆինանսական կազմակերպությունների արժեթղթեր

I2030 Միջազգային ֆինանսական կազմակերպությունների առանց տոկոսի արժեթղթեր

I2030NI Միջազգային ֆինանսական կազմակերպությունների առանց տոկոսի արժեթղթեր (զեղչ)

I2031 Միջազգային ֆինանսական կազմակերպությունների տոկոսային արժեթղթեր

I2031NI Միջազգային ֆինանսական կազմակերպությունների տոկոսային արժեթղթեր (հաշվեգրված անվանական տոկոս)

121 Ֆակտորինգային գործառնությունների գծով ստացվելիք գումարներ

1210 Ֆինանսական կազմակերպությունների հետ ֆակտորինգային գործառնությունների գծով ստացվելիք գումարներ

12100 Բանկերի հետ ֆակտորինգային գործառնություններից ստացվելիք գումարներ

12101 Վարկային կազմակերպությունների հետ ֆակտորինգային գործառնություններից ստացվելիք գումարներ

12102 Ներդրումային ընկերությունների հետ ֆակտորինգային գործառնություններից ստացվելիք գումարներ

12103 Ապահովագրական ընկերությունների հետ ֆակտորինգային գործառնություններից ստացվելիք գումարներ

12104 Այլ ֆինանսական կազմակերպությունների հետ ֆակտորինգային գործառնություններից ստացվելիք գումարներ

1211 Ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող անձանց հետ ֆակտորինգային գործառնությունների գծով ստացվելիք գումարներ

12110 Պետական առևտրային կազմակերպությունների հետ ֆակտորինգային գործառնություններից ստացվելիք գումարներ

12111 Այլ առևտրային կազմակերպությունների հետ ֆակտորինգային գործառնություններից ստացվելիք գումարներ

12112 Հիմնարկների հետ ֆակտորինգային գործառնություններից ստացվելիք գումարներ

12113 Պետական ոչ առևտրային կազմակերպությունների հետ ֆակտորինգային գործառնություններից ստացվելիք գումարներ

12114 Այլ ոչ առևտրային կազմակերպությունների հետ ֆակտորինգային գործառնություններից ստացվելիք գումարներ

12115 Ֆիզիկական անձանց հետ ֆակտորինգային գործառնություններից ստացվելիք գումարներ

12116 Անհատ ձեռնարկատերերի հետ ֆակտորինգային գործառնություններից ստացվելիք գումարներ

12117 Այլ անձանց հետ ֆակտորինգային գործառնություններից ստացվելիք գումարներ

122 Ածանցյալ գործիքներ

1220 Ֆինանսական կազմակերպությունների հետ կնքված ածանցյալ գործիքներ

12200 Ֆինանսական կազմակերպությունների հետ կնքված ֆյուչերս

12201 Ֆինանսական կազմակերպությունների հետ կնքված ֆորվարդ

12202 Ֆինանսական կազմակերպությունների հետ կնքված օպցիոն

12203 Ֆինանսական կազմակերպությունների հետ կնքված արժութային սվոպ

12204 Ֆինանսական կազմակերպությունների հետ կնքված տոկոսադրույքային սվոպ

12205 Ֆինանսական կազմակերպությունների հետ կնքված փոխարժեքային սվոպ

12206 Ֆինանսական կազմակերպությունների հետ կնքված այլ տեսակի սվոպ

12207 Ֆինանսական կազմակերպությունների հետ կնքված այլ ածանցյալ գործիքներ

1221 Ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող առևտրային կազմակերպությունների հետ կնքված ածանցյալ գործիքներ

12210 Ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող առևտրային կազմակերպությունների հետ կնքված ֆյուչերս

12211 Ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող առևտրային կազմակերպությունների հետ կնքված ֆորվարդ

12212 Ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող առևտրային կազմակերպությունների հետ կնքված օպցիոն

12213 Ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող առևտրային կազմակերպությունների հետ կնքված արժութային սվոպ

12214 Ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող առևտրային կազմակերպությունների հետ կնքված տոկոսադրույքային սվոպ

12215 Ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող առևտրային կազմակերպությունների հետ կնքված փոխարժեքային սվոպ

Միևնույն ժամանակ, Օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված է պատասխանատվություն ուրիշի դրամական միջոցներն ապօրինի պահելու, դրանք վերադարձնելուց խուսափելու, վճարման այլ կետանցով դրանք օգտագործելու, կամ այլ անձի հաշվին անհիմն ստանալու կամ խնայելու դեպքերի համար, մասնավորապես, սահմանվում է, որ այդ գումարին վճարվում են տոկոսներ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքների չափով, եթե վնասի հատուցման կամ տոկոսի այլ չափ նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

Համաձայն նույն հոդվածի 3-րդ կետի, եթե պարտատիրոջ դրամական միջոցների անօրինաչափ օգտագործմամբ նրան պատճառված վնասները գերազանցում են հոդվածի 1-ին կետի հիման վրա նրան հասանելիք տոկոսների գումարը, նա իրավունք ունի պարտապանից պահանջել հատուցելու վնասները:

Օրենսդրության նման կարգավորման պայմաններում ֆինանսական կազմակերպությունների կողմից գրավատուների մնացած գումարը անհապաղ չվերադարձնելու գործելաոճը կարող է հանգեցնել մի շարք անցանկալի հետևանքների, ինչպիսիք են.

- սպառողների իրավունքների խախտում,
- ֆինանսական կազմակերպությունների կողմից ֆինանսական կորուստներ կրելու ռիսկ,
- սպառողների իրավունքների խախտման հետ կապված վերջիններիս բողոքների արդյունքում ֆինանսական կազմակերպությունների գործարար համբավի անկում,
- դատական գործընթացներում ներգրավվելու հետ կապված մի շարք այլ իրավական ռիսկերի առաջացում:

Ելնելով վերոգրյալից, հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի «ա» և «զ» կետերը, 20-րդ հոդվածի «իէ» կետը և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 87-րդ հոդվածը, հաշվի առնելով ֆինանսական շուկայի սպառողների, ինչպես նաև բանկերի և վարկային կազմակերպությունների գործունեության համար խնդրի պարզաբանման անհրաժեշտությունը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ) պարզաբանում է.

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2012 թ. հունիսի 12-ին (ՀՀԳՏ N17 (430), 2.07.2012):

Գրավ դրված գույքի իրացումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 251-րդ հոդվածով նախատեսված գրավատուին վերադարձման ենթակա գումարը ֆինանսական կազմակերպությունների կողմից գրավատուին վերադարձվում է անհապաղ՝ մեկ բանկային օրվա ընթացքում, այն գրավատուի՝ կազմակերպությանը հայտնի բանկային հաշվին փոխանցելու, իսկ հաշվի բացակայության դեպքում այդ գումարի չափով համապատասխան անձի գծով կրեդիտորական պարտք ձևակերպելու միջոցով: Միևնույն ժամկետում գրավատուները պատշաճ ձևով (գրավատուին բռնագանձման ծանուցում առաքելու փոստային հասցեով և առկայության դեպքում՝ նաև էլեկտրոնային հասցեով) ծանուցվում են գրավի առարկա գույքի իրացման, պահանջները բավարարելուց հետո գումարի մնացորդի գոյացման, մնացորդի չափի և այդ գումարը ստանալու հնարավորության ձևերի վերաբերյալ:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
14 հունիսի 2012 թ., N4

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

*Կարգավորվող շուկային թույլատրված կամ թույլատրման ենթակա պարտատոմսերի մասին**

Ֆինանսական կազմակերպությունները և կարգավորվող շուկայի օպերատորը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ են դիմել՝ բարձրացնելով հետևյալ հարցը.

կարող են արդյո՞ք թողարկվել Հայաստանի Հանրապետությունում կարգավորվող շուկային թույլատրված կամ թույլատրման ենթակա արտարժույթով արտահայտված պարտատոմսեր, ինչպես նաև դրանց դիմաց արտարժույթով իրականացվել վճարումներ:

1. Այս կապակցությամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ) նախ անհրաժեշտ է համարում քննարկել պարտատոմսերի տեղաբաշխման գործառնության բովանդակային կողմը, որը կարող է նշանակություն ունենալ բարձրացված հարցի պարզաբանման համար:

Բովանդակային առումով Խորհուրդը գտնում է, որ պարտատոմսերի տեղաբաշխումն իրենից ներկայացնում է փոխառության ներգրավման ձև: Այս եզրահանգման համար Խորհրդի համար ի թիվս այլոց կողմնորոշիչ են հանդիսանում պետական պարտատոմսերի հետ կապված օրենսդրական կարգավորումները: Մասնավորապես, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 885-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն պետական փոխառության պայմանագիրը կնքվում է փոխառուի թողարկած պետական այն պարտատոմսերը կամ պետական այլ արժեթղթերը փոխատուի կողմից ձեռք բերելու միջոցով, որոնք հավաստում են դրամական միջոցները, այլ գույքը, սահմանված տոկոսները կամ այլ գույքային իրավունքները փոխառության թողարկման պայմաններով նախատեսված ժամկետներում փոխառուից ստանալու փոխատուի իրավունքը: Այսինքն՝ նշված հոդվածի կարգավորումից ակնհայտ է դառնում, որ պետության կողմից պարտատոմսերի տեղաբաշխումը հանդիսանում է հասարակությունից փոխառության ներգրավման ձևերից մեկը:

Անդրադառնալով «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին (այսուհետ՝ Օրենք)՝ Խորհուրդը կարևորում է Օրենքի 7-րդ հոդվածի 51-րդ մասը, որի համաձայն Հայաստանի Հանրապետության տարածքում փոխառությունները կարող են տրամադրվել նաև արտարժույթով:

Այս առումով Խորհուրդը արժութային կարգավորման տեսանկյունից տարբերություն չի դնում պարտատոմսերի և փոխառությունների միջև և պարտատոմսերի համար կիրառելի է համարում Օրենքով փոխառությունների համար նախատեսված կարգավորումները:

2. Բարձրացված խնդրի տեսանկյունից Խորհրդի կողմից կարևորվող հաջորդ հարցը վերաբերում է պարտատոմսերի թողարկման կարգին:

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2012 թ. հունիսի 12-ին (ՀՀԳՏ N17 (430), 2.07.2012):

Այս տեսանկյունից Խորհուրդը պետք է նկատի ունենա, որ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված են նաև փոխառություններն արտարժույթով տրամադրելու որոշ սահմանափակումներ: Մասնավորապես, սպառողական փոխառությունների մասով, որոնց վերաբերյալ հարցին ՀՀ կենտրոնական բանկի խորհուրդն անդրադարձել է իր 2007 թվականի փետրվարի 7-ի «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 5.1 և 8.1 մասերի վերաբերյալ» թիվ 1 պաշտոնական պարզաբանմամբ:

Վերոնշյալի հաշվառմամբ, ինչպես նաև նկատի ունենալով, որ պարտատոմսերը շրջանառելի են և հանդիսանում են հասարակության լայն զանգվածներից փոխառությունների ներգրավման միջոց՝ քաղաքացիաիրավական շրջանառության մեջ արտարժույթով արտահայտված պարտատոմսերի ներդրման տեսանկյունից ՀՀ կենտրոնական բանկի խորհուրդը գիտակցում է նաև՝

- հասարակության լայն զանգվածների մոտ արտարժույթով արտահայտված ակտիվների ու պարտավորությունների ռիսկերի պատշաճ կառավարման անհրաժեշտությունը,
- արտարժույթով արտահայտված պարտատոմսերում ներդրողների (փոխատուների) մոտ իրենց առաջարկված գործիքի վերաբերյալ բավարար տեղեկացվածության ապահովման կառուցակարգերի կիրառման անհրաժեշտությունը,
- փոխառությունների տրամադրման և ներգրավման նպատակայնությունից կախված Օրենքով սահմանված սահմանափակումների պահպանման նկատմամբ վերահսկողության անհրաժեշտությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի վերը նշված հոդվածները, հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի «իէ» կետը և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 87-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը պաշտոնապես պարզաբանում է.

1. Միայն կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված կամ ազդագրի («Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ազդագրի հրապարակման պահանջից բացառությունների և/կամ ոչ հրապարակային թողարկման դեպքում՝ թողարկման պայմանների) համաձայն՝ կարգավորվող շուկայում առևտրին թույլատրման ենթակա պարտատոմսերի արտահայտումը արտարժույթով (ներառյալ՝ անվանական արժեքի նախատեսումը), այդ պարտատոմսերի ձեռքբերման ժամանակ վճարումները և այդ պարտատոմսերի մարումը կարող են կատարվել արտարժույթով:

2. Սույն պարզաբանման 1-ին կետով նախատեսված արտարժույթով արտահայտված պարտատոմսերի թողարկման, տեղաբաշխման, շրջանառության և մարման հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում են փոխառությունների (վարկերի) համար Օրենքով նախատեսված կանոնները:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
20 հունիսի 2012 թ., N5

ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ
ԱՄՓՈՓԱԳԻՐ

(ՀՈՒՆԻՍ 2012)

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի «Դրամավարկային ամփոփագիր» բաժինը ներառում է ՀՀ ԿԲ խորհրդի 2012 թվականի հուլիսի 10-ի նիստի «2012 թվականի հուլիսի վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ» արձանագրությունը, ինչպես նաև դրամավարկային, արտաքին, հարկաբյուջետային և իրական հատվածների, ՀՀ վճարահաշվարկային և ֆինանսական համակարգերի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Իրական հատվածի (բացառությամբ բնականոն գնաճի) և արտաքին հատվածում ընդգրկված ապրանքների արտահանման ու ներմուծման վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունն է (http://www.armstat.am), իսկ հարկաբյուջետային, արտաքին հատվածի, դրամավարկային և ֆինանսական վիճակագրության, բնականոն գնաճի և ՀՀ վճարահաշվարկային համակարգի վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկը: Դրամավարկային և ֆինանսական վիճակագրությունում ընդգրկված է դրամավարկային ցուցանիշների, ֆինանսական շուկայի և ֆինանսական համակարգի հիմնական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Վճարային հաշվեկշիռը, միջազգային ներդրումային դիրքը և արտաքին պարտքը կազմվում և հրապարակվում են եռամսյակային կտրվածքով՝ փետրվար, մայիս, օգոստոս և նոյեմբեր ամիսների տեղեկագրերում:

Դրամավարկային ցուցանիշները կազմված են համաձայն ՀՀ ԿԲ «ՀՀ դրամավարկային և ֆինանսական վիճակագրության ձեռնարկի», որը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Դրամավարկային ցուցանիշների, միջազգային պահուստների և արտաքին պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը ենթակա է վերանայման եռամսյակային և տարեկան կտրվածքով՝ նշված ցուցանիշներում ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնություններն ընդգրկելու նպատակով: Եռամսյակային տվյալները վերանայվում են (համարվում են վերջնական) հաշվետու եռամսյակի ավարտից երկու ամիս հետո, իսկ տարեկան տվյալները՝ հաշվետու տարվա ավարտից երեք ամիս հետո:

Վիճակագրական տվյալների հրապարակման ժամանակացույցը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Հարցերի և առաջարկությունների համար դիմել
Վիճակագրության վարչություն
Հեռախոս՝ (374 10) 592-562
Ֆաքս՝ (374 10) 592-564
էլ. փոստ՝ sd.mpd@cba.am

«Դրամավարկային ամփոփագիրը», ինչպես նաև ՀՀ ԿԲ այլ հրապարակումները տեղադրվում են ՀՀ կենտրոնական բանկի «Տնային էջում», որի հասցեն է՝
http://www.cba.am

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2012 թվականի հուլիսի վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ 259
Իրական հատվածի ցուցանիշներ 262
Մակրոտնտեսական ցուցանիշներ
Գների ինդեքսներ
Գնաճ
Գնաճին առավելապես նպաստած ապրանքախմբերը
Բնականոն գնաճ
Բնականոն գնաճին առավելապես նպաստած ապրանքատեսակները
Արտաքին հատվածի ցուցանիշներ 265
Ապրանքների արտահանում և ներմուծում
Ըստ երկրների ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց փոխանցումները
Ըստ երկրների ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց ոչ առևտրային նպատակով կատարված փոխանցումները
Իրական և անվանական արդյունավետ փոխարժեք
Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստների կառուցվածքը
ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտավորությունների կառուցվածքը
Պետական բյուջեի ցուցանիշներ 270
Կենտրոնական բանկի և Գանձապետարանի փոխհարաբերությունները
Դրամավարկային ցուցանիշներ 271
Փողի ագրեգատներ և փողի բազմարկիչներ
Սեզոնայնորեն հարթեցված փողի ագրեգատներ
ՀՀ կենտրոնական բանկի ամփոփ ցուցանիշներ
ՀՀ առևտրային բանկերի ամփոփ ցուցանիշներ
ՀՀ վարկային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ
ՀՀ ավանդային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ
ՀՀ ավանդային կազմակերպությունների զուտ արտաքին ակտիվներ
Դոլարայնացման մակարդակը Հայաստանի Հանրապետությունում
Ֆինանսական շուկա 282
Տոկոսադրույքներ
Բանկային տոկոսի հաշվարկային դրույքը
Ֆինանսական շուկայում ՀՀ ԿԲ գործառնությունների տոկոսադրույքները
Ֆինանսական շուկայում ՀՀ ԿԲ գործառնությունների ծավալը
ՀՀ ԿԲ կողմից կնքված արժութային սվոփ գործառնությունների ծավալները և միջին տոկոսադրույքները
Ռեպո շուկայի շրջանառությունը
Առևտրային բանկերի կողմից տնտեսությունից ներգրավված ավանդների և տրամադրված վարկերի ծավալները և տոկոսադրույքները
Բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից ՀՀ դրամով և արտարժույթով տրամադրված վարկերի տոկոսադրույքներն ըստ մարզերի
Պետական կարճաժամկետ պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը
Պետական միջին ժամկետայնության արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը
Պետական երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը
ՊՊ երկրորդային շուկայում իրականացված գործառնությունները
Պետական (գանձապետական) պարտատոմսերում ներդրողների կառուցվածքը
ՀՀ ԿԲ կողմից արժութային շուկայում իրականացված գործառնությունները
Առևտրային բանկերի կողմից արժութային շուկայում իրականացված գործառնությունները
ՀՀ ֆոնդային բորսայում արտարժութային գործառնությունների ծավալները
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար միջին փոխարժեքը
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/եվրո միջին փոխարժեքը
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ՌԴ ռուբլի միջին փոխարժեքը

Վարկային ներդրումներ 302
Առևտրային բանկերի վարկերն ըստ տնտեսության հատվածների
Առևտրային բանկերի վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության
Առևտրային բանկերի վարկային գործառնությունների գործիքակազմը
Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրված վարկերի ճյուղային կառուցվածքը
Առևտրային բանկերի չաշխատող ակտիվների տեսակարար կշիռն ըստ ոլորտների
ՀՀ առևտրային բանկերի ընդհանուր միջբանկային ավանդները և վարկերը
Վարկային կազմակերպությունների վարկերն ըստ տնտեսության հատվածների
Վարկային կազմակերպությունների վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության
Վարկային կազմակերպությունների վարկային գործառնությունների գործիքակազմը
Վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտներին տրված վարկերի ճյուղային կառուցվածքը
Առևտրային բանկերի ավանդներ 314
Առևտրային բանկերի ավանդներն ըստ տնտեսության հատվածների
Ֆինանսական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներ 316
Ֆինանսական կազմակերպությունների քանակը և կառուցվածքը
ՀՀ առևտրային բանկերի հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Բանկային համակարգի գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների մեծությունը
ՀՀ վարկային կազմակերպությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Վարկային կազմակերպությունների ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվի մեծությունը
Ներդրումային ծառայություններ մատուցող ընկերությունների հիմնական ցուցանիշներ
Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից կնքված գործարքներ
Հավատարմագրային կառավարման վերցված միջոցներ
Պահառության վերցված արժեթղթեր
Գրավատների ցուցանիշներ
Արտարժույթի փոխանակման կետերի կողմից իրականացված գործառնություններ
Վճարահաշվարկային համակարգ 322
Կենտրոնական բանկի վճարահաշվարկային համակարգերով կատարված դրամական փոխանցումներ
ՀՀ տարածքում անկանխիկ վճարային գործիքներով բանկային համակարգում իրականացված փոխանցումներ
ՀՀ առևտրային բանկերի և օտարերկրյա բանկերի կողմից թողարկված վճարային քարտերով իրականացված գործառնությունները ՀՀ տարածքում ըստ սպասարկման միջոցների
ՀՀ բանկերի կողմից թողարկված քարտերով իրականացված գործառնություններն արտասահմանում

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ (10.07.2012)

2012 թվականի հուլիսի վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ

2012 թվականի հուլիսի 10-ի ՀՀ ԿԲ խորհրդի նիստին մասնակցում էին՝ ՀՀ ԿԲ նախագահ Ա. Ջավադյանը, նախագահի տեղակալ Ն. Երիցյանը, խորհրդի անդամներ Ա. Մկրտչյանը, Ա. Չիլինգարյանը, Օ. Աղասյանը, Ա. Դարբինյանը

Խորհրդի նիստը սկսվեց հունիսի վերջի դրությամբ իրավիճակային հաշվետվության ներկայացմամբ: Քննարկվեցին գնաճի, արտաքին միջավայրի, իրական, հարկաբյուջետային և դրամավարկային հատվածների զարգացումները:

2012 թվականի հունիսին արձանագրվել է 1.3% գնանկում, ինչի արդյունքում 12-ամսյա գնաճը կազմել է 0.7%՝ պահպանվելով տատանումների թույլատրելի միջակայքի ստորին սահմանից ցածր մակարդակում: Հունիսին հիմնականում կրկնվել են նախորդ ամսվա միտումները. ամսական գնանկումը, ոչ պարենային ապրանքների ու ծառայությունների գների գրեթե անփոփոխ մակարդակների պարագայում, պայմանավորված էր բացառապես պարենային ապրանքների գների անկմամբ (նպաստումը ընդհանուր գնաճին՝ 1.34 տոկոսային կետ), որի կառուցվածքում զգալի նվազում է դիտվել «Բանջարեղեն և կարտոֆիլ» ապրանքախմբի գներում՝ 26.7% (նպաստումը՝ 1.67 տոկոսային կետ): 12-ամսյա բնականոն գնաճը պահպանվում է գնաճի նպատակային ցուցանիշին մոտ մակարդակում:

Տնտեսական ակտիվության ցուցանիշը 2012 թվականի հունվար - մայիսին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, կազմել է 7.4%: Անցած 5 ամիսների արդյունքներով տնտեսական ակտիվության աճը գերազանցել է ակնկալիքները՝ պայմանավորված արդյունաբերության և գյուղատնտեսության ճյուղերի թողարկման ծավալների՝ համապատասխանաբար 15% և 3.2% և ծառայությունների ոլորտի թողարկման ծավալների 4.6% աճով: Շինարարության ճյուղում պահպանվել է անկման միտումը՝ 8%:

Արտաքին ապրանքաշրջանառությունը բնութագրող ցուցանիշներից 2012 թվականի հունվար-մայիսին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, արտահանումը (ըստ առևտրի վիճակագրության՝ ՖՕԲ) ավելացել է 15.2%-ով, իսկ ներմուծումը (ըստ առևտրի վիճակագրության՝ ՍԻՖ)՝ 7.1%-ով: Ֆիզիկական անձանց ոչ առևտրային բնույթի փոխանցումների զուտ ներհոսքը նույն ժամանակահատվածում աճել է տ/տ 8.7%-ով:

2012 թվականի անցած 5 ամիսների արդյունքներով դիտվել են Ծրագրի բազային սցենարի համեմատ մասնավոր սպառման առավել արագ աճի և մասնավոր ներդրումների ավելի մեծ անկման միտումներ: Համախառն պահանջարկի վրա պետական ծախսերի զսպող և եկամուտների գրեթե նույնքան ընդլայնող ազդեցության պարագայում հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը եղել է չեզոք:

Խորհրդի նիստում ներկայացվեցին նաև ֆինանսական շուկայի զարգացումները: Հունիսին, 12-ամսյա գնաճի ձևավորված բավականին ցածր մակարդակի պարագայում, ԿԲ-ն անփոփոխ է թողել վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ հաշվի առնելով մայիս-հունիսին դրամի արժեզրկման արդյունքում դրամավարկային պայմանների արդեն իսկ թուլացման հանգամանքը: Թեև ֆինանսական շուկայում հունիսին արձանագրվել է միջին ամսական տոկոսադրույքների որոշակի աճ, սակայն տոկոսա-

դրույքների միջին եռամսյակային մակարդակները ցածր են նախորդ եռամսյակի միջինների համեմատությամբ: Հունիսին միջբանկային ռեպո միջին ամսական տոկոսադրույքը կազմել է 10.2%, մինչև 1 տարի մարման ժամկետով պետական պարտատոմսերի առաջնային շուկայում միջին տոկոսադրույքը՝ շուրջ 9.0%, բորսայական միջբանկային վարկերի միջին տոկոսադրույքը՝ 9.6%:

ՀՀ արտարժույթի շուկայում հունիսին շարունակվել է դրամի արժեզրկումը. նախորդ ամսվա միջինի համեմատությամբ ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամն արժեզրկվել է 4.0%-ով՝ կազմելով 414.6 դրամ, եվրոյի նկատմամբ՝ 2.1%-ով՝ կազմելով 519.8 դրամ, ՌԴ ռուբլու նկատմամբ արժևորվել է 2.2%-ով՝ կազմելով 12.6 դրամ:

Ֆինանսական շուկայի նկարագրված զարգացումների պայմաններում հունիսին ձևավորվել է դրամավարկային հետևյալ միջավայրը. 12-ամսյա կտրվածքով փողի և դրամային զանգվածներն աճել են համապատասխանաբար 23% և 21%-ով, որոնց կառուցվածքում դրամային ավանդների տ/տ աճը կազմել է 29.8%: Արտարժութային ավանդները հունիսին ավելացել են տ/տ 25.3%-ով (բացառելով փոխարժեքի փոփոխության ազդեցությունը՝ 11.8%), ինչի հետևանքով դոլարայնացման մակարդակն ավելացել է 1.9%-ով: Հունիսին ևս պահպանվել են վարկավորման բարձր աճի տեմպերը՝ տ/տ 35.6%, որի կառուցվածքում շարունակել են գերակշռել արտարժույթով տրամադրված վարկերը:

Իրավիճակային հաշվետվության քննարկումից հետո խորհուրդը սկսեց քննարկումներն արտաքին և ներքին մակրոտնտեսական զարգացումների, դրամավարկային քաղաքականության ուղղությունների վերաբերյալ:

2012 թ. հունիսին հիմնական հումքային և պարենային ապրանքների միջազգային շուկաներում ընդհանուր առմամբ դրսևորվել են գնանկումային միտումներ:

«Բրենթ» տեսակի հում նավթի մեկ բարելի միջին գինը երկրորդ եռամսյակում, նախորդ եռամսյակի համեմատությամբ, նվազել է շուրջ 8.3%-ով (տ/տ նվազումը կազմել է 7%): Միջազգային ֆինանսական շուկաներում ԱՄՆ դոլարի արժևորման պայմաններում հունիսին դիտվել է ոսկու գնի չնչին աճ՝ 0.8%, որի պարագայում երկրորդ եռամսյակում, նախորդ եռամսյակի համեմատությամբ, նվազումը կազմել է 4.7% (տ/տ աճը՝ 6.8%): Արդյունաբերական մետաղներից՝ պղնձի գինը 2012 թվականի հունիսին նվազել է 5.2%-ով (տ/տ նվազումը՝ 18.1%):

Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (FAO) կողմից հրապարակվող պարենի գների ինդեքսը 2012 հունիսին շարունակել է նվազել՝ նախորդ ամսվա համեմատությամբ իջնելով 1.8%-ով, որի պայմաններում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ նվազումը կազմել է 14.8%: Թեև երկրորդ եռամսյակի արդյունքներով ցորենի միջազգային գինը նվազել է 3.5%-ով (տ/տ նվազումը՝ 15.4%), այդուհանդերձ հունիսին շուկայում դիտվել է 4.5% գների աճ, ինչը պայմանավորվել է 2012-2013 մարքեթինգային տարում նախորդ տարվա համեմատությամբ ցորենի համաշխարհային բերքի կրճատման վերաբերյալ սպասումներով:

Շաքարավազի և բրնձի միջազգային գները ևս հունիսին նվազել են, ինչի արդյունքում շաքարավազի գները նվազել են տ/տ 17.7%-ով, իսկ բրնձինը՝ աճել շուրջ 1%-ով:

Ե՛վ ԱՄՆ ԴՊՀ-ն, և՛ Եվրոպական կենտրոնական բանկը, հաշվի առնելով իրենց տնտեսությունների զարգացման համեմատաբար կայուն ու չափավոր տեմպերը, անփոփոխ են թողել դրամավարկային քաղաքականության տոկոսադրույքը. եռամսյա LIBOR միջբանկային տոկոսադրույքը ևս մնացել է անփոփոխ՝ մայիսի համեմատությամբ կազմելով միջինը 0.46%:

Խորհուրդն արձանագրեց, որ Եվրոպական Միության պարտքային հիմնախնդիրների սրման և համաշխարհային պահանջարկի աճի տեմպերի դանդաղման սպասումների պայմաններում կանխատեսվող հորիզոնում կպահպանվի հիմնական հումքային ու պարենային ապրանքների միջազգային շուկաներում ձևավորված գնանկումային

միջավայրը, թեև ցորենի միջազգային շուկայում դիտվել է գների որոշակի աճ՝ պայմանավորված ցորենի համաշխարհային բերքի ծավալների կրճատմամբ:

Խորհուրդը գնահատեց, որ կանխատեսվող հորիզոնում ներքին գների վրա ՀՀ տնտեսության զարգացումներից ակնկալվող ազդեցությունը կլինի փոքր-ինչ գնաճային, քանի որ արդյունաբերության ճյուղի և ծառայությունների ոլորտի թողարկման ծավալների առավել արագ աճի տեմպերով պայմանավորված՝ տնտեսական ավելի բարձր աճը հիմնականում կանդրադառնա համախառն պահանջարկի խթանման, ինչպես նաև մասնավոր սպառման առավել արագ տեմպերով աճի վրա՝ արտահայտվելով գնաճային դրսևորումներով: Հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը գների վրա կանխատեսվող հորիզոնում գնահատվում է չեզոք:

Հաշվի առնելով արտաքին և ՀՀ տնտեսությունների իրար փոխադարձ չեզոքացնող ազդեցությունները ներքին գների վրա, ինչպես նաև այն, որ հունիսին ևս շարունակվել են դրամի արժեզրկման միտումները, որը դրամավարկային պայմանների արդեն իսկ թուլացում է, խորհուրդը որոշեց ձեռնպահ մնալ վերաֆինանսավորման տոկոսադրույքի փոփոխումից: Միաժամանակ, 12-ամսյա գնաճի վերջին ամիսներին ձևավորված ցածր մակարդակն առավելապես պայմանավորված էր գյուղմթերքների գների անկման ընդգծված սեզոնայնությամբ, որի պարագայում 12-ամսյա բնականոն գնաճը պահպանվում է գնաճի նպատակային ցուցանիշի սահմաններում:

2012 թվականի հուլիսի 10-ի նիստում ԿԲ խորհուրդը որոշեց անփոփոխ թողնել ԿԲ վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ 8.0%: Լոմբարդային ռեպոյի և ներգրավված միջոցների տոկոսադրույքները համապատասխանաբար սահմանվել են 10.5% և 5.5%:

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Ամվանում	*2012 թ. մայիս*	*2012 թ. մայիսի իրական աճի ինդեքսը 2011 թ. մայիսի նկատմամբ (%)*	*2012 թ. հունիս*	*2012 թ. հունիսի իրական աճի ինդեքսը 2011 թ. հունիսի նկատմամբ (%)*
Տնտեսական ակտիվության ցուցանիշ		108.0		109.3
Արդյունաբերական արտադրանքի ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	92095.5	114.1	91960.5	104.4
էլեկտրաէներգիայի արտադրությունը *(մլն կվտ/ժամ)*	640.2	98.1	663.1	104.0
Գյուղատնտեսության համախառն արտադրանքը *(մլն ՀՀ դրամ)*	46228.4	104.4	53443.5	124.4
Առևտրի շրջանառության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	164914.0	105.1	173505.0	105.6
Շինարարության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	33170.6	87.2	36219.9	92.3
Ծառայությունների ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	77231.2	111.3	88450.4	119.4
Մեկ աշխատողի միջին ամսական անվանական աշխատավարձ *(ՀՀ դրամ)*	120617[1]	108.5	126045[2]	107.8

ԳՆԵՐԻ ԻՆԴԵՔՍՆԵՐ

2012 թ.	*Սպառողական գների ինդեքս*	*Արդյունաբերական արտադրանքի գների ինդեքս*	*Գների ինդեքս կապիտալ շինարարությունում*	*Գյուղատնտեսական մթերքների իրացման գների ինդեքս*
նախորդ ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	103.6	98.6[1]	99.5	101.5
Փետրվար	99.1	104.2	101.2	98.3
Մարտ	100.1	103.1	95.4	98.2
Ապրիլ	99.4	98.6	100.2	98.5
Մայիս	98.7	97.4	100.5	97.5
Հունիս	98.7	102.2	101.4	90.3
2012 թ. հունվար – հունիսը 2011 թ. հունվար – հունիսի համեմատությամբ	102.2	106.1	95.6	96.4

ԳՆԱՁ

ժամանակաշրջան	*2010*	*2011*	*2012*	*2012*	*2012*
նախորդ ամսվա նկատմամբ (%)				*նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ (%)*	*նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (%)*
Հունվար	1.7	3.4 [2]	3.6	3.6	4.8
Փետրվար	0.3	0.9 [2]	-0.9	2.6	3.0
Մարտ	0.8	0.8	0.1	2.7	2.2
Ապրիլ	1.3	-0.2	-0.6	2.1	1.9
Մայիս	1.0	0.0	-1.3	0.8	0.5
Հունիս	-0.8	-1.4	-1.3	-0.4	0.7
Հուլիս	-0.8	-3.0			
Օգոստոս	1.3	-0.6			
Սեպտեմբեր	-0.2	0.8			
Հոկտեմբեր	1.0	0.3			
Նոյեմբեր	1.6	1.2			
Դեկտեմբեր	1.8	2.5			
Տարեկան *(նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ)*	9.4	4.7			
Տարեկան *(նախորդ տարվա նկատմամբ)*	8.2	7.7			

ԳՆԱՁԻՆ ԱՌԱՎԵԼԱՊԵՍ ՆՊԱՍՏԱԾ ԱՊՐԱՆՔԱԽՄԲԵՐԸ [3]

Անվանում	*2012 թ. հունիսը 2012 թ. մայիսի նկատմամբ (%)*	*Նպաստումը գնաճին (տոկոսային կետ) [3]*
ՍԳԻ	**98.7**	
Պարենային ապրանքներ (ներառյալ՝ ոգելից խմիչք և ծխախոտ), որից՝	**97.5**	**-1.33**
Բանջարեղեն և կարտոֆիլ	73.3	-1.67
Կաթնամթերք	99.0	-0.04
Ձու	97.4	-0.04
Միրգ	106.8	0.25
Կենդանական և բուսական յուղ	101.8	0.06
Մսամթերք	100.5	0.06
Ոչ պարենային ապրանքներ, որից՝	**100.1**	**0.01**
Հագուստ և գործվածք	100.71	0.02
Լվացող միջոցներ	100.80	0.01
Ոսկերչական ապրանքներ	103.44	0.01
Անձնական օգտագործման մեքենաներ և վառելանյութ	98.76	-0.03
Ծառայություններ, որից՝	**100.4**	**0.12**
Բուժսպասարկման	101.7	0.06
Բնակարանային, կոմունալ	100.2	0.02
Հանգստի կազմակերպման	101.6	0.0

ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՃ[3]

ժամանակաշրջան	2009	2010	2011	2012
նախորդ ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	-0.29	0.48	0.71[4]	0.65
Փետրվար	-0.53	0.74	0.42[4]	0.08
Մարտ	1.14	0.82	0.64[4]	0.04
Ապրիլ	1.46	0.70	0.45[4]	0.02
Մայիս	0.41	0.04	0.32[4]	-0.16
Հունիս	0.25	-0.22	0.37[4]	0.35
Հուլիս	-0.22	-0.42	0.21[4]	
Օգոստոս	0.37	0.17	0.27[4]	
Սեպտեմբեր	0.72	0.63	0.42[4]	
Հոկտեմբեր	0.48	1.21	0.36[4]	
Նոյեմբեր	0.62	1.18	0.41	
Դեկտեմբեր	0.61	0.63	0.55	
նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	4.63	6.20	6.28[4]	5.27
Փետրվար	3.02	7.59	5.75[4]	4.91
Մարտ	3.33	7.14	5.68[4]	4.27
Ապրիլ	3.47	6.35	5.42[4]	3.81
Մայիս	3.37	5.92	5.75[4]	3.30
Հունիս	3.36	5.40	6.32[4]	3.26
Հուլիս	3.20	5.16	6.95[4]	
Օգոստոս	3.52	4.96	7.01[4]	
Սեպտեմբեր	3.71	4.86	7.01[4]	
Հոկտեմբեր	4.16	5.53	6.09[4]	
Նոյեմբեր	4.72	6.16	5.37	
Դեկտեմբեր	5.25	6.26	5.29	

ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՃԻՆ ԱՌԱՎԵԼԱՊԵՍ ՆՊԱՍՏԱԾ ԱՊՐԱՆՔԱՏԵՍԱԿՆԵՐԸ[3]

Անվանում	Նպաստումը բնականոն գնաճին (տոկոսային կետ)
նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ	
Բնականոն գնաճ. *այդ թվում՝*	**3.26**
Խոզի միս	0.34
Ծխախոտ Գառնի	0.24
Տավարի միս	0.20
Կարամել	0.19
Հավի բուդ	0.19
Ծառայություններ հիվանդանոցների վիրաբուժական բաժանմունքների	0.19
Աղացած սև սուրճ	0.13
Նրբերշիկ	0.11
Բենզին	0.10
Եփած երշիկ	0.10
Պղպեղ (սև)	0.07
Թթվասեր	0.07
Ծառայություններ առողջարանների և այլ առողջարանային հաստատությունների, կացության, բուժման և սպասարկման ապահովմամբ	0.06
Ծառայություններ սննդի ապահովման՝ խորովածի մատուցման	0.06
Բրինձ	0.06

[1] *Տվյալները վերահայվել են ՀՀ ԱՎԾ կողմից:*

[2] *Ըստ ՀՀ ԱՎԾ նախնական տվյալների:*

[3] *Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների՝ ՀՀ ԱՎԾ տվյալների հիման վրա:*

[4] *Տվյալները վերահայվել են ՀՀ ԿԲ կողմից՝ սպառողական զամբյուղի կառուցվածքի փոփոխության հետ կապված:*

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՈՒՄ ԵՎ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ

Անվանում	*2012 թ. հունվար – մայիս (մլն ԱՄՆ դոլար)*	*2012 թ. հունվար – մայիսը 2011 թ. հունվար – մայիսի նկատմամբ (%)*	*2012 թ. հունվար – հունիս (մլն ԱՄՆ դոլար)*	*2012 թ. հունվար – հունիսը 2011 թ. հունվար – հունիսի նկատմամբ (%)*
Արտահանում *(ՖՕԲ)*	561.7	115.2	684.4	113.5
Ներմուծում *(ՍԻՖ)*	1677.8	107.1	2017.7	106.7
Առևտրային հաշվեկշռի պակասուրդ	1116.1	103.5	1333.3	103.5

ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ

հազար ԱՄՆ դոլար

Երկիր	2011 թվական					
	Հունվար-հունիս			Հունվար-դեկտեմբեր		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	529634	80368	449266	1364892	186441	1178451
ԱՄՆ	56831	53306	3525	138384	145332	(6949)
Ուկրաինա	13152	12409	743	26790	25151	1640
Ղազախստան	9935	1270	8665	23407	2274	21133
Գերմանիա	12874	12896	(22)	25601	27604	(2003)
Իսպանիա	4599	3872	727	9891	10142	(252)
Ֆրանսիա	8988	12640	(3652)	18872	24773	(5901)
ԱՄԷ	11471	27491	(16020)	19141	57937	(38797)
Չինաստան	1653	34025	(32373)	3518	83256	(79738)
Թուրքիա	2497	17234	(14737)	6197	36078	(29881)
Այլ երկրներ	151276	97109	54166	323341	224558	98783
Ընդամենը	**802910**	**352620**	**450290**	**1960033**	**823547**	**1136486**

հազար ԱՄՆ դոլար

Երկիր	2012 թվական					
	Հունիս			Հունվար-հունիս		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	153395	40273	113123	644846	116398	528447
ԱՄՆ	10369	8372	1997	62186	57963	4223
Ուկրաինա	1709	1388	321	8913	9140	(227)
Ղազախստան	2125	169	1956	11108	792	10316
Գերմանիա	1993	2716	(722)	12330	17172	(4842)
Իսպանիա	631	671	(40)	3606	4335	(729)
Ֆրանսիա	1807	1013	794	8650	11206	(2555)
ԱՄԷ	2112	3091	(979)	8784	22065	(13281)
Չինաստան	211	6189	(5977)	3766	33129	(29362)
Թուրքիա	254	2392	(2138)	1507	13865	(12358)
Այլ երկրներ	20381	31969	(11588)	157881	123349	34532
Ընդամենը	**194989**	**98242**	**96747**	**923577**	**409414**	**514163**


ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ


հազար ԱՄՆ դոլար

Երկիր	2011 թվական					
	Հունվար-հունիս			Հունվար-դեկտեմբեր		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	494757	64216	430541	1295163	141352	1153811
ԱՄՆ	32798	12523	20275	74380	27331	47049
Ուկրաինա	12149	8024	4125	25076	16202	8874
Ղազախստան	9406	904	8502	20611	1769	18842
Գերմանիա	5562	2923	2639	10695	6905	3790
Իսպանիա	3772	1292	2480	7674	3052	4622
Ֆրանսիա	5150	4280	870	10874	7668	3206
ԱՄԷ	1438	3280	(1842)	3387	7660	(4273)
Չինաստան	265	2887	(2622)	529	8748	(8219)
Թուրքիա	1245	2291	(1046)	2136	4981	(2845)
Այլ երկրներ	47428	18144	29284	96434	38934	57499
Ընդամենը	**613969**	**120763**	**493206**	**1546959**	**264602**	**1282357**

հազար ԱՄՆ դոլար

Երկիր	2012 թվական					
	Հունիս			Հունվար-հունիս		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	124905	12948	111957	551937	74645	477292
ԱՄՆ	5169	1883	3287	35275	12196	23079
Ուկրաինա	1451	1251	200	8088	6982	1106
Ղազախստան	1884	169	1715	8805	731	8074
Գերմանիա	876	640	235	5098	4036	1062
Իսպանիա	551	222	330	3215	1368	1846
Ֆրանսիա	921	343	578	5183	2356	2828
ԱՄԷ	1107	516	591	3834	3261	573
Չինաստան	97	911	(813)	2519	4966	(2446)
Թուրքիա	146	365	(220)	819	1887	(1068)
Այլ երկրներ	7487	3149	4338	39698	19486	20212
Ընդամենը	**144594**	**22397**	**122197**	**664471**	**131914**	**532557**





ԻՐԱԿԱՆ ԵՎ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՓՈՒԱՐԺԵՔ (ԻՆԴԵՔՍ)[1,2]

2011	Հ	Փ	Մ	Ա	Մ	Հ	Հ	Օ	Ս	Հ	Ն	Դ
Իրական արդյունավետ փոխարժեք (ինդեքս, 1997=100)	139.4	137.5	133.3	128.2	127.7	126.2	125.5	125.1	128.3	127.5	126.3	131.7
Անվանական արդյունավետ փոխարժեք (ինդեքս, 1997=100)	228.0	224.6	218.4	211.6	211.7	211.9	216.5	217.3	221.7	221.0	217.6	221.6
2012	**Հ**	**Փ**	**Մ**	**Ա**	**Մ**	**Հ**	**Հ**	**Օ**	**Ս**	**Հ**	**Ն**	**Դ**
Իրական արդյունավետ փոխարժեք (ինդեքս, 1997=100)	135.4	131.0	129.5	127.5	126.4	122.5						
Անվանական արդյունավետ փոխարժեք (ինդեքս, 1997=100)	220.5	216.2	215.7	214.3	215.6	211.8						

[1] Հաշվարկը կատարվել է ըստ առևտրի ծագման ՀՀ հիմնական 11 գործընկեր երկրների արտաքին առևտրի ընդհանուր ծավալների՝ 2003-2007 թթ. կշիռներով: Հաշվարկում ընդգրկված գործընկեր երկրների գնաճի համար որպես բազիսային տարի վերցվել է 2005 թվականը:

[2] Բոլոր տվյալները ներկայացված են ըստ ԿԲ գնահատումների և պարբերաբար ենթակա են վերանայման:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ [1]

մլն ԱՄՆ դոլար


Ցուցանիշներ	2011	2012					
	Դ [3]	Հ	Փ	Մ [3]	Ա	Մ	Հ [4]
Համախառն միջազգային պահուստներ *(առանց սեփականաշնորհման միջոցների)*	***1932.5***	**1730.3**	**1758.1**	**1714.2**	**1687.9**	**1675.8**	**1670.1**
Համախառն միջազգային պահուստներ	***1932.5***	**1730.3**	**1758.1**	**1714.2**	**1687.9**	**1675.8**	**1670.1**
Ոսկի	0	0	0	0	0	0	0
ՀՓԻ ԱՄՀ-ում	57.0	57.6	54.8	54.6	50.0	43.3	59.6
Պահուստային դիրքը ԱՄՀ-ում	0	0	0	0	0.0	0	0
Արտարժույթ [2]	1875.4	1672.7	1703.3	1659.6	1638.0	1632.6	1610.4

[1] *Հաշվարկված է փաստացի փոխարժեքներով:*

[2] *Ընդգրկված են միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները:*

[3] *Ներառված են ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:*

[4] *Տվյալները նախնական են:*




ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԱՐՏԱՔԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ [1]

մլն ԱՄՆ դոլար

Ցուցանիշներ	2011	2012					
	Դ [2]	Հ	Փ	Մ [2]	Ա	Մ	Հ [3]
Համախառն արտաքին պարտավորություններ	**754.1**	**763.0**	**770.0**	**769.9**	**765.5**	**749.0**	**745.6**
ԱՄՀ վարկ	518.0	523.8	524.1	522.7	518.6	501.7	496.5
ՀՓԻ տեղաբաշխում	135.1	136.5	136.9	136.3	136.4	132.9	133.6
Այլ վարկեր	100.7	101.9	108.3	110.6	110.0	114.0	115.3
Այլ պարտավորություններ	0.3	0.8	0.6	0.3	0.5	0.4	0.2


[1] *Հաշվարկված է փաստացի փոխարժեքներով: Ընդգրկված են փոխարկելի արտարժույթով և ՀՀ դրամով պարտավորությունները:*
[2] *Ներառված են ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:*
[3] *Տվյալները նախնական են:*



ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԵՎ ԳԱՆՁԱՊԵՏԱՐԱՆԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

մլն ՀՀ դրամ

ժամանակաշրջան	Պահանջներ Կառավարության նկատմամբ		Կառավարության հաշիվներ և ավանդներ					Զուտ պահանջներ Կառավարության նկատմամբ փոփոխության տեմպերով
	վերստանդարտ պետության	ընդամենը	կենցաղային կառավարության հաշիվներ և ավանդներ	կենցաղային կառավարության հաշիվներ	ծրագրի միջոցներ դրամով	ծրագրի միջոցներ արտարժույթով	ընդամենը	
2011								
Դեկտեմբեր	12953	12953	75721	3418	1	547	79687	**-66735**
2012								
Հունվար	13193	13193	98748	3019	1	549	102316	**-89123**
Փետրվար	12719	12719	97549	3017	1	551	101119	**-88400**
Մարտ	14053	14053	92628	3012	1	554	96195	**-82142**
Ապրիլ	14593	14593	82515	2845	1	556	85917	**-71324**
Մայիս	15797	15797	96680	2389	1	575	99646	**-83849**
Հունիս	13916	13916	105203	2231	1	593	108028	**-94112**



ՓՈՂԻ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ ԵՎ ՓՈՂԻ ԲԱԶՄԱՐԿԻՉՆԵՐ

Ժամանակաշրջան	Փողի բազա [1] *(մլրդ ՀՀ դրամ)*	Շրջանառությունում կանխիկ դրամ *(մլրդ ՀՀ դրամ)*	Ցպահանջ ավանդներ դրամով *(մլրդ ՀՀ դրամ)*	M1 [2] *(մլրդ ՀՀ դրամ)*	Ժամկետային ավանդներ դրամով *(մլրդ ՀՀ դրամ)*	M2 [3] *(մլրդ ՀՀ դրամ)*	Արտարժույթով ավանդներ *(մլրդ ՀՀ դրամ)*	M2X [4] *(մլրդ ՀՀ դրամ)*	Փողի բազմապատկիչ [5]	Դրամայնացման գործակից [6]
2011										
Դեկտեմբեր	671271	349407	164385	513792	145644	659437	467542	1126978	1.68	1.16
2012										
Հունվար [7]	572232	318965	154751	473716	145846	619563	477679	1097241	1.92	1.18
Փետրվար	562946	319511	154705	474216	157250	631466	482181	1113647	1.98	1.22
Մարտ	553757	321270	156682	477951	171903	649855	484507	1134362	2.05	1.25
Ապրիլ	589452	337153	154533	491687	174401	666087	493694	1159781	1.97	1.20
Մայիս	580321	335804	150316	486120	174081	660201	514705	1174906	2.02	1.20
Հունիս	563613	338897	143646	482543	172276	654819	540709	1195528	2.12	1.25

[1] Փողի բազան ընդգրկում է ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամը, ՀՀ ԿԲ-ում առևտրային բանկերի թղթակցային հաշիվները (դրամով և արտարժույթով) և ռեզիդենտների այլ հաշիվները (դրամով և արտարժույթով):

[2] M1-ն ընդգրկում է շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամը և ռեզիդենտների՝ ՀՀ դրամով ցպահանջ ավանդները (ներառյալ հաշիվները) և փոխառությունները:


[3] M2-ը դրամային զանգվածն է, ընդգրկում է M1-ը և ռեզիդենտների՝ ՀՀ դրամով ժամկետային ավանդները և փոխառությունները:


[4] M2X-ը փողի զանգվածն է, ընդգրկում է M2-ը և ռեզիդենտների՝ արտարժույթով ավանդները (ներառյալ հաշիվները) և փոխառությունները:


[5] Փողի զանգվածի (M2X) և փողի բազայի հարաբերակցությունը ամսվա վերջի դրությամբ:


[6] Դրամային զանգվածի (M2) և փողի բազայի դրամային բաղադրիչների հանրագումարի հարաբերակցությունն ամսվա վերջի դրությամբ:

[7] Տվյալները վերանայվել են:


Փողի բազայի դինամիկան ըստ տարրերի
մլն ՀՀ դրամ
700000
630000
560000
490000
420000
350000
280000
210000
140000
70000
0
08
09
10
11
12
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ ՀՀ դրամով
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ արտարժույթով
Այլ հաշիվներ


Փողի զանգվածի կառուցվածքը
մլն ՀՀ դրամ
1200000
1000000
800000
600000
400000
200000
0
08
09
10
11
12
Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ
Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով
Ժամկետային ավանդներ ՀՀ դրամով
Արտարժույթով ավանդներ


Շրջանառությունում կանխիկ դրամի տեսակարար կշիռը փողի զանգվածում
%
55
45
35
25
15
05
06
07
08
09
10
11
12


Շրջանառությունում կանխիկ դրամի տեսակարար կշիռը դրամային զանգվածում
%
80
70
60
50
40
30
05
06
07
08
09
10
11
12


ՄԵՋՈՆԱՅՆՈՐԵՆ ՀԱՐԹԵՑՎԱԾ ՓՈՂԻ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ[1]

մլն ՀՀ դրամ


ժամկետ	Փողի բազա	Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	M1	M2	M2X
2011					
Հունվար	468928	283394	397594	488612	879365
Փետրվար	489953	289756	408898	510273	900769
Մարտ	508844	297115	423929	534302	924571
Ապրիլ	516360	301953	430757	538589	942240
Մայիս	512353	305597	436378	548340	967806
Հունիս	537286	306566	442832	557965	984844
Հուլիս	535625	309709	453699	571616	1003282
Օգոստոս	579815	312907	454086	578051	1014568
Սեպտեմբեր	566078	314258	457473	580468	1026427
Հոկտեմբեր	574417	317752	462178	590521	1046747
Նոյեմբեր	582996	319199	466064	597911	1065117
Դեկտեմբեր	604639	321537	477315	616199	1084433
2012					
Հունվար	579873	324411	483183	625076	1096265
Փետրվար	574568	327602	485627	643706	1101894
Մարտ	562330	337773	497615	671762	1129480
Ապրիլ	596544	349555	513541	696509	1167149
Մայիս	605507	343897	500595	683009	1185132
Հունիս	582673	341620	488235	663016	1201851

[1] *Փողի ագրեգատները ներկայացված են սեզոնայնությունից զտված տեսքով:*
Ընդ որում, յուրաքանչյուր տարի փողի ագրեգատների հարթեցված շարքերը վերանայվում են և հրապարակվում «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի յուրաքանչյուր տարվա առաջին համարում :
Շարքերի սեզոնային հարթեցումն իրականացվել է՝ օգտագործելով X-12-ARIMA հարթեցման եղանակը:


Փողի բազայի փաստացի և հարթեցված մակարդակները




Բանկային համակարգից դուրս կանխիկ դրամի փաստացի և հարթեցված մակարդակները



Դրամային զանգվածի փաստացի և հարթեցված մակարդակները



Փողի զանգվածի փաստացի և հարթեցված մակարդակները



ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԱՄՓՈՓ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

մլն ՀՀ դրամ

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	2011	2012					
	Դ [2]	Հ	Փ	Մ [2]	Ա	Մ	Հ [3]
(մնացորդը ժամանակահատվածի վերջի դրությամբ)							
ԶՈՒՏ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐ [1]	***460046***	***374707***	***383279***	***367377***	***358963***	***367962***	***365783***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***211224***	***197524***	***179667***	***186380***	***230489***	***212359***	***197830***
Կառավարություն	-66735	-89123	-88400	-82142	-71324	-83849	-94112
Բանկեր	137020	120020	98737	97975	124714	117515	108633
այդ թվում՝ ռեպո համաձայնագրեր	46345	28597	6523	11534	43144	20815	42713
ՀՀ ԿԲ կողմից արտարժույթի ներգրավման սվոփ	0	0	0	0	0	0	0
Ավանդներ (-)	0	0	0	-7001	-13043	0	-32005
Հակադարձ ռեպո (-)	0	0	0	0	0	0	0
ՀՀ ԿԲ կողմից արտարժույթի տրամադրման սվոփ (-)	0	0	0	0	0	0	0
ՀՀ ԿԲ կողմից թողարկված արժեթղթեր (-)	0	0	0	0	0	0	0
Զուտ այլ ակտիվներ	140939	166627	169330	170548	177100	178693	183309
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***671271***	***572232***	***562946***	***553757***	***589452***	***580321***	***563613***
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ	398777	360151	359843	361559	378750	378306	384035
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ ՀՀ դրամով	163177	155780	152186	152842	170621	163635	135601
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ արտարժույթով	102513	48678	43849	31908	32966	31865	39111
Այլ հաշիվներ	6803	7622	7068	7449	7115	6514	4867
Այլ հաշիվներ ՀՀ դրամով	6715	7561	7002	7360	7053	6400	4843
Այլ հաշիվներ արտարժույթով	88	61	66	89	62	114	24
(փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)							
ԶՈՒՏ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐ	***-***	***-85339***	***8571***	***-15902***	***-8414***	***8999***	***-2179***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***-13700***	***-17857***	***6714***	***44109***	***-18130***	***-14529***
Կառավարություն	-	-22388	722	6258	10818	-12525	-10263
Բանկեր	-	-17000	-21282	-763	26739	-7199	-8882
այդ թվում՝ ռեպո համաձայնագրեր	-	-17749	-22074	5011	31610	-22329	21898
ավանդներ (-)	-	0	0	7001	6042	-13043	32005
ՀՀ ԿԲ կողմից թողարկված արժեթղթեր (-)	-	0	0	0	0	0	0
Զուտ այլ ակտիվներ	-	25687	2703	1218	6552	1593	4617
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***-***	***-99039***	***-9286***	***-9188***	***35695***	***-9132***	***-16707***
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ	-	-38626	-308	1716	17191	-444	5729
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ ՀՀ դրամով	-	-7397	-3595	656	17779	-6986	-28034
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ արտարժույթով	-	-53835	-4829	-11941	1058	-1101	7246
Այլ հաշիվներ	-	819	-554	381	-334	-601	-1647
Այլ հաշիվներ ՀՀ դրամով	-	846	-559	358	-307	-654	-1557
Այլ հաշիվներ արտարժույթով	-	-27	5	23	-27	53	-91
(տոկոսային փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)							
ԶՈՒՏ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐ	***-***	***-18.6***	***2.3***	***-4.1***	***-2.3***	***2.5***	***-0.6***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***-6.5***	***-9.0***	***3.7***	***23.7***	***-7.9***	***-6.8***
Կառավարություն	-	-33.5	0.8	7.1	13.2	-17.6	-12.2
Բանկեր	-	-12.4	-17.7	-0.8	27.3	-5.8	-7.6
ՀՀ ԿԲ կողմից թողարկված արժեթղթեր (-)	-	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
Զուտ այլ ակտիվներ	-	18.2	1.6	0.7	3.8	0.9	2.6
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***-***	***-14.8***	***-1.6***	***-1.6***	***6.4***	***-1.5***	***-2.9***
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ	-	-9.7	-0.1	0.5	4.8	-0.1	1.5
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ ՀՀ դրամով	-	-4.5	-2.3	0.4	11.6	-4.1	-17.1
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ արտարժույթով	-	-52.5	-9.9	-27.2	3.3	-3.3	22.7
Այլ հաշիվներ	-	12.0	-7.3	5.4	-4.5	-8.4	-25.3

[1] Զուտ միջազգային պահուստները (ԶՄՊ) իրենցից ներկայացնում են փոխարկելի արտարժույթով արտաքին ակտիվների և փոխարկելի արտարժույթով ու դրամով արտաքին պարտավորությունների տարբերությունը: ԶՄՊ-ն հաշվարկված է ծրագրային փոխարժեքներով՝ 1 ԱՄՆ դոլար = 385.00 դրամ, 1 ՀՓԻ = 1.5403 ԱՄՆ դոլար, 1 եվրո = 1.4182 ԱՄՆ դոլար, 1 ՄԲ ֆունտ ստեռլինգ = 1.4511 ԱՄՆ դոլար:

[2] Ներառված են ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:

[3] Տվյալները նախնական են:

ՀՀ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԱՄՓՈՓ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ[1]

մլն ՀՀ դրամ

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	2011	2012					
	Դ	Հ	Փ	Մ	Ա	Մ	Հ
ԶԱԱ (փոխարկելի արտարժույթով)	**-422628**	**-379924**	**-387655**	**-411991**	**-444764**	**-464171**	**-483783**
Արտաքին ակտիվներ փոխարկելի արտարժույթով	144795	177780	172105	145633	152729	169190	181657
Արտաքին պարտավորություններ փոխարկելի արտարժույթով (-)	-540514	-521892	-525021	-518412	-554908	-590207	-622863
Արտաքին պարտավորություններ ՀՀ դրամով (-)	-26909	-35812	-34739	-39212	-42585	-43154	-42577
ԶՆԱ	**1192853**	**1149655**	**1174122**	**1215103**	**1255452**	**1296317**	**1338268**
Զուտ պահանջներ Կառավարության նկատմամբ	64951	60498	53685	68161	64460	54446	60660
Պահանջներ Կառավարության նկատմամբ	147289	143338	136381	149275	148540	141646	146823
Պարտավորություններ Կառավարության նկատմամբ (-)	-82338	-82840	-82696	-81113	-84079	-87199	-86163
Զուտ պահանջներ ԿԲ նկատմամբ	190864	139882	152216	142581	136785	137461	128397
Պահանջներ ԿԲ նկատմամբ	322531	245320	236071	231791	258348	237756	251555
Պարտավորություններ ԿԲ նկատմամբ (-)	-131668	-105438	-83855	-89210	-121563	-100295	-123158
Տնտեսություն	1249805	1263838	1300739	1338209	1377831	1428795	1477704
Ձեռնարկություններ	727559	760290	786795	808273	831586	861303	896723
Դրամով	156025	156900	155778	156360	157294	156629	160372
Արտարժույթով	568780	600625	628243	649125	671505	702757	733552
Արժեթղթեր	2754	2766	2774	2789	2788	1917	2799
Տնային տնտեսություններ	484476	458685	469810	484578	499331	516619	528896
Դրամով	313857	312846	317230	326705	335762	343414	347674
Արտարժույթով	170619	145839	152580	157873	163570	173205	181222
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	13864	20588	19289	19072	19793	20444	21430
Դրամով	1383	1612	1566	1517	1505	1995	1927
Արտարժույթով	12481	18975	17723	17555	18288	18448	19502
Այլ ֆինանսական կազմակերպություններ	23907	24276	24844	26286	27121	30429	30656
Դրամով	18570	18645	18657	19535	20174	21160	20403
Արտարժույթով	5337	5631	6187	6751	6947	9268	10253
Զուտ այլ ակտիվներ	-312766	-314564	-332518	-333848	-323624	-324385	-328492
Արտաքին ակտիվներ ՀՀ դրամով	27663	28771	16045	14884	31407	31626	32303
Արտաքին ակտիվներ (ոչ փոխարկելի արտարժույթով)	9929	1497	1182	1080	1139	1500	1207
Արտաքին պարտավորություններ (ոչ փոխարկելի արտարժույթով) (-)	-10087	-1106	-1002	-733	-1287	-831	-1285
Ներդրումներ փայաբաժիններում	3007	2283	2332	2186	2137	2137	2137
Միջբանկային պահանջներ	56576	48009	63829	55092	57658	46524	46742
Այլ ակտիվներ	192599	122623	125001	128356	129174	131966	136812
Միջբանկային պարտավորություններ (-)	-55508	-46741	-64987	-56400	-58653	-45793	-46140
Բանկերի կողմից թողարկված պարտատոմսեր (-)	-5535	-684	-690	-697	-696	-716	-734
Կապիտալ հաշիվներ (-)	-357917	-358397	-356841	-362524	-363209	-369350	-373414
Այլ պարտավորություններ (-)	-173493	-110820	-117386	-115092	-121295	-121450	-126120
ԱՎԱՆԴՆԵՐ	**770226**	**769731**	**786467**	**803112**	**810688**	**832146**	**854485**
Դրամով ավանդներ	299780	290118	300570	316553	315551	313870	310848
Ցպահանջ ավանդներ	160916	148769	148631	150142	148099	145090	142485
Ժամկետային ավանդներ	138864	141349	151939	166411	167452	168779	168364
Արտարժույթով ավանդներ	470446	479613	485897	486559	495138	518277	543637
Ցպահանջ ավանդներ	124202	118744	126052	122477	130133	131119	138361
Ժամկետային ավանդներ	346244	360870	359845	364082	365005	387157	405276

[1] *2012 թ. հունվարից ֆինանսական կազմակերպությունների նոր հաշվային պլանի ներդրման արդյունքում տեղի են ունեցել որոշակի կառուցվածքային փոփոխություններ:*

ՀՀ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՓՈՓ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ[1]

մլն ՀՀ դրամ

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	2011	2012					
	Դ	Հ	Փ	Մ	Ա	Մ	Հ
ԶԱԱ (փոխարկելի արտարժույթով)	**-38749**	**-39477**	**-40110**	**-41062**	**-41661**	**-44275**	**-48410**
Արտաքին ակտիվներ փոխարկելի արտարժույթով	489	381	544	579	821	793	1097
Արտաքին պարտավորություններ փոխարկելի արտարժույթով (-)	-28751	-29605	-30505	-30212	-30964	-34059	-36303
Արտաքին պարտավորություններ ՀՀ դրամով (-)	-10487	-10253	-10149	-11429	-11518	-11008	-13203
ԶՆԱ	**56352**	**55908**	**57025**	**58824**	**59842**	**63184**	**66874**
Զուտ պահանջներ Կառավարության նկատմամբ	-5859	-6781	-6936	-6991	-7497	-7591	-7166
Պահանջներ Կառավարության նկատմամբ	1706	1498	1668	1707	1660	1693	2089
Պարտավորություններ Կառավարության նկատմամբ (-)	-7565	-8280	-8604	-8698	-9156	-9283	-9256
Զուտ պահանջներ ավանդային կազմակերպությունների նկատմամբ	28649	30313	28046	26463	24705	24397	26275
Պահանջներ ավանդային կազմակերպությունների նկատմամբ	34389	38484	36997	36320	34897	39166	41446
Պարտավորություններ ավանդային կազմ-ների նկատմամբ (-)	-5740	-8171	-8950	-9857	-10192	-14769	-15172
Տնտեսություն	81659	80715	86503	90163	93410	97648	101840
Ջեռնարկություններ	22298	22427	23120	23646	24946	26198	28630
Դրամով	8558	8563	9197	9324	9979	10153	10496
Արտարժույթով	13730	13853	13913	14311	14957	16035	18124
Արժեթղթեր	10	10	10	10	10	10	10
Տնային տնտեսություններ	58985	56680	61885	64825	66866	69718	71636
Դրամով	42775	42291	45792	47996	49437	50198	50584
Արտարժույթով	16210	14389	16093	16829	17429	19520	21053
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	102	1396	1400	1404	1407	1445	1481
Դրամով	93	103	98	95	93	91	90
Արտարժույթով	10	1294	1302	1309	1314	1354	1392
Այլ ֆինանսական կազմակերպություններ	273	212	98	288	192	286	93
Դրամով	269	208	95	285	189	80	90
Արտարժույթով	3	3	3	3	3	207	3
Զուտ այլ ակտիվներ	-48097	-48339	-50588	-50811	-50778	-51270	-54075
Արտաքին ակտիվներ ՀՀ դրամով	71	45	61	45	47	44	45
Արտաքին ակտիվներ (ոչ փոխարկելի արտարժույթով)	0	0	0	0	0	1	0
Արտաքին պարտավորություններ (ոչ փոխարկելի արտարժույթով) (-)	0	0	0	0	0	0	0
Ներդրումներ փայաբաժիններում	1678	1678	1678	1678	1678	1678	1678
Պահանջներ վարկային կազմակերպությունների նկատմամբ	2184	2247	2274	2362	2534	2657	2858
Այլ ակտիվներ	5973	4847	4930	5043	4990	5314	5499
Պարտավորություններ վարկային կազմակերպությունների նկատմամբ (-)	-2184	-2247	-2274	-2362	-2534	-2657	-2858
Թողարկված պարտատոմսեր (-)	-964	-971	-978	-986	-994	0	-962
Կապիտալ հաշիվներ (-)	-46909	-46411	-49103	-49470	-49217	-50799	-52419
Այլ պարտավորություններ (-)	-7947	-7528	-7177	-7122	-7282	-7508	-7916
ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ	**17603**	**16431**	**16915**	**17762**	**18180**	**18909**	**18464**
ՀՀ դրամով փոխառություններ	13125	10549	11448	12127	12526	12622	11322
Ցպահանջ փոխառություններ	4	406	408	408	410	417	411
Ժամկետային փոխառություններ	13121	10143	11040	11719	12116	12205	10912
Արտարժույթով փոխառություններ	4478	5882	5468	5635	5654	6287	7141
Ցպահանջ փոխառություններ	75	75	46	46	46	48	44
Ժամկետային փոխառություններ	4403	5806	5422	5589	5608	6239	7097

[1] *2012 թ. հունվարից ֆինանսական կազմակերպությունների նոր հաշվային պլանի ներդրման արդյունքում տեղի են ունեցել որոշակի կառուցվածքային փոփոխություններ:*

ՀՀ ԱՎԱՆԴԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՓՈՓ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ[1]

մլն ՀՀ դրամ

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	2011	2012					
	Դ[6]	Հ	Փ	Մ[6]	Ա	Մ	Հ[7]
(մնացորդը ժամանակահատվածի վերջի դրությամբ)							
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ [2]	***-1330***	***-44693***	***-44487***	***-85677***	***-127462***	***-140484***	***-166410***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***1128309***	***1141935***	***1158133***	***1220039***	***1287243***	***1315390***	***1361938***
Կառավարություն	-7643	-35406	-41652	-20972	-14361	-36994	-40619
Տնտեսություն	1327097	1343176	1385535	1426248	1468810	1520664	1573323
Ձեռնարկություններ և կազմակերպություններ	749857	782717	809915	831919	856532	887501	925353
որից՝ կուտակված տոկոսներ	9228	9664	10536	11192	12159	13194	13615
Տնային տնտեսություններ	544074	516717	533055	550823	567606	587809	602018
որից՝ կուտակված տոկոսներ	6314	6638	6839	7501	7720	8095	8265
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	13966	21984	20689	20475	21200	21889	22911
որից՝ կուտակված տոկոսներ	25	99	91	90	104	120	113
Այլ ֆինանսական կազմակերպություններ	19200	21758	21875	23031	23472	23464	23042
որից՝ կուտակված տոկոսներ	71	49	35	52	69	57	60
Զուտ այլ ակտիվներ	-191146	-165836	-185749	-185238	-167206	-168280	-170766
ԴՐԱՄԱՅԻՆ ԶԱՆԳՎԱԾ [3]	***659437***	***619563***	***631466***	***649855***	***666087***	***660201***	***654819***
ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ [4]	***1126978***	***1097241***	***1113647***	***1134362***	***1159781***	***1174906***	***1195528***
Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	349407	318965	319511	321270	337153	335804	338897
Ցպահանջ ավանդներ և փոխառություններ ՀՀ դրամով [5]	164385	154751	154705	156682	154533	150316	143646
որից՝ կուտակված տոկոսներ	105	107	153	110	132	195	124
Ժամկետային ավանդներ և փոխառություններ ՀՀ դրամով	145644	145846	157250	171903	174401	174081	172276
որից՝ կուտակված տոկոսներ	2987	3042	3171	3334	3672	3813	4016
